«ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ»ՀԿ

# ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

## ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ



Երևան, 2015

Սույն զեկույցի պատրաստումը հնարավոր է դարձել իրականացնել “Հանրային կառավարման ոլորտի անկախ մոնիթորինգի ձևավորում” ծրագրի շրջանակներում, որն իրականացվել է ***“Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների”*** ՀԿ-ի-Հայաստան և “Ռազմավարական և միջազգային հետազոտությունների վրացական հիմնադրամի”-Վրաստան կողմից Չեխիայի հանրապետության Արտաքին գործերի նախարարության ֆինանսական աջակցությամբ:

Զեկույցի բովանդակությունը, արտահայտված տեսակետները և կարծիքները պատկանում են ***“Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների”*** ՀԿ-ին և հնարավոր է, որ չհամընկնեն Չեխիայի հանրապետության Արտաքին գործերի նախարարության տեսակետների հետ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ........ 4
ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ 6
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ ........ 10
ԻՐԱՎԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ........ 24
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ........ 28
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ........ 32
ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՈՒՄ ........ 37

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպությունը Չեխիայի Հանրապետության արտաքին գործերի նախարարության ֆինանսական աջակցությամբ իրականացնում է «Հանրային կառավարման բարեփոխումների գործընթացի նկատմամբ անկախ մոնիթորինգի մեխանիզմների ձևավորում» ծրագիրը, որի շրջանակներում պատրաստվել է «Հանրային կառավարման բարեփոխումները Հայաստանում» վերտառությամբ զեկույցը:

Զեկույցի հիմնական նպատակը Հայաստանում վերջին հինգ տարիներին հանրային կառավարան բարեփոխումների գնահատում իրականացնելն է:

Ըստ այդմ՝ հետազոտության հիմնական խնդիրներն են՝

- ✓ Պարզել, թե վերջին հինգ տարիներին Հայաստանի հանրային կառավարման ոլորտում ինչպիսի փոփոխություններ են նախատեսվել,
- ✓ արդյոք այդ փոփոխություններն իրականացվել են,
- ✓ եթե այդ փոփոխություններն իրականացվել են, արդյոք դրանք իրականացվել են հանրային կառավարման ոլորտին վերաբերող եվրոպական չափանիշների համաձայն
- ✓ Համաձայն տեղական և միջազգային կազմակերպությունների զեկույցների՝ ինչպիսի արդյունքներ են գրանցվել իրականացված փոփոխություններով պայամանավորված:

Զեկույցի առաջին հատվածում մանրամասն ներկայացվել է հանրային կառավարման հասկացությունը, հանրային կառավարմանը վերաբերող եվրոպական չափանիշները, ինպես նաև ՄԱԿ-ի մոտեցումները: Համաձայն արդեն ձևավորված եվրոպական ստանդարտների արդյունավետ կառավարման հիմնական բաղադրիչներն են՝ 1) կանխատեսելիությունը և վստահելիությունը, 2) թափանցիկությունը, 3) հաշվետվողականությունը և 4) արդյունավետությունը: անրային կառավարման բարեփոխումներին վերաբերող ՄԱԿ-ի մոտեցումներում հիմնականում շեշտադրված են բաց և թափանցիկ կառավարման ու արդյունավետության վերաբերող հարցերը:

Զեկույցում ամփոփվել է ժամանակակից Հայաստանում հանրային կառավարման բարեփոխումների ողջ ընթացքը (1991 – 2014 թթ.), հանրային կառավարման ոլորտի շրջանակներում տեղի ունեցած կառուցվածքային փոփոխությունները: Զեկույցում ժամանակային սահմաններն ընտրվել են 2008-2014 թթ.: Որպես սկզբնակետ ընտրվել է 2009 թվականը, քանի որ Արևելյան գործընկերությանը Հայաստանը միացել է 2009 թվականին և ստանձնել է Հանրային կառավարման ոլորտում եվրոպական չափանիշների համաձայն բարեփոխումների իրականացումը

Առանձին բաժին նվիրված է Հանրային կառավարման ոլորտին վերաբերող իրավական փոփոխություններին: Մանրամասն անդրադարձ է կատարվում 2001 թվականի դեկտեմբերի 4-ին ընդունված և 2002 թվականին հունվարի 9-ին ուժի մեջ մտած «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքին: Այս օրենքի հիման վրա ձևավորվեց Քաղաքացիական ծառայության խորհուրդը, որի ստեղծումը պետական կառավարման համակարգի բարեփոխումների արդյունքն էր:

2009 թվականին մեկնարկեց ԵՄ Արևելյան գործընկերության ծրագիրը, որի նպատակն էր ամրապնդել ԵՄ երկրների և Արևելյան գործընկերության 6 երկների(այդ թվում՝ Հայաստան) միջև հարաբերությունները, ինչպես նաև լայնացնել համագործացության շրջանակները: Արևելյան գործընկերության շրջանակներում ստեղծվեցին երկու հարթակներ: Առաջին՝ Ժողովրդավարության, արդյունավետ կառավարման և կայունության հարթակի ներքո գործում է հանրային կառավարման բարեփոխումների հանձնախումբը, որի հիմնական նպատակն է բարձրացնել հանրային կառավարման արդյունավետությունը, քաղաքացիական ծառայության որակը, ինչպես նաև խրախուսել ժողովրդավարությունը: Հայաստանն ևս մասնակցում է հանձնախմբի աշխատանքներում: Այս համատեքստում ուսումնասիրվել են 2009 թվականից այս կողմ ընկած հանրային կառավարման բարեփոխումները, ներկայացվել են արդյունքները:

2005 թվականից սկսած ՀՀ բոլոր նախարարություններում և մարզպետարաններում, ինչպես նաև գրեթե բոլոր համայնքներում ներդրվեց «Մալբերրի» (Mulberry) համակարգչային ծրագիրը, որի միջոցով փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է բացառապես էլէկտրոնային եղանակով: Այն արդյունավետորեն կառավարում է փաստաթղթերի հոսքը պետական մարմիններում, հնարավորություն է տալիս բավականին արագ կերպով որոնել անհրաժեշտ փաստաթղթերը, հնարավորություն է տալիս պահպանել փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակները:

# ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

## Հանրային կառավարման եվրոպական ստանդարտները[1]

Հանրային կառավարման ոլորտում ընդհանուր մոտեցումներ և կանոններ ձևավորվեցին հիմք ընդունելով անդամ երկրներում արդեն գործող չափանիշները, ինչպես նաև Եվրոպական արդարադատության դատարանի որոշումները:
Ձևավորված սկզբունքները սահմանում են իրավունքի գերակայության վրա հիմնված իրավական համակարգերից և կառավարման ձևից անկախ արդյունավետ կառավարման հիմնական բաղադրիչները, որոնք են.

1. Կանխաեսելիություն և վստահելիություն
2. Թափանցիկություն
3. Հաշվետվողականություն
4. Արդյունավետություն:

Սրան զուգահեռ, SIGMA OECD ծրագրի շրջանակներում մշակվեցին Եվորապական կառավարման տարածքային սկզբունքները, որոնք են.

- Հանրային շահի տեսանկյունից հանրային և մասնավոր ոլորտների տարանջատում
- Մանսագիտական կարողությունների և սկզբունքների պահպանման համար քաղաքական գործիչների և հանրային ծառայողների տարանջատում,
- Քաղաքացիական ծառայողների անհատական հաշվետվողականության խթանում,
- Աշխատանքի վարձատրության և կայունության պաշտպանություն
- Սկզբունքների վրա հիմնված աշխատանքի ընդունում և առաջխացում:

## Կանխատեսելիություն և վստահելիություն

Սա ենթադրում է իրավունքի գերակայության սկզբունքի վրա հիմնված գործունեություն, որը պահանջում է մի քանի ազդրիչների պահպանում, ինչպիսիք են.

- ***օրենքի վրա հիմնված*** հանրային կառավարում: Հանրային կառավարման մարմինները պետք է իրենց որոշումները կայացնեն բոլորի համար ընդհանուր և կանոնների համաձայն՝ պահպանելով չեզոքությունն ու անաչառությունը:
- Իրավունքի գերակայության սկզբունքի կիրառումն այս պարագայում մեկնաբանվում է որպես ***իրավական իրավասություն***՝ կայացնելու

[1] National and European Values of Public Administration in the Balkans, Assee Online Series, No. 4/2011 http://www.balcannet.eu/ASsee/ASsee_No_4.pdf.pdf

որոշումներ բացառապես այն հարցերի վերաբերյալ, որոնց համար նրանք օժված են լիազորություններով:

- ***համաչափություն***, ինչը ենթադրում է, որ հանրային կառավարման ոլորտում իրականացվող գործողությունները պետք է համաչափ լինեն օրենքի պահանջների՝ չսահմանափակելով անձանց իրավունքներն ավելի շատ, քան թույլատրելի է օրենքով: Այս բաղադրիչն առնչվում է ողջամտության պահանջի հետ:
- Ընթացակարգային արդարացիության պահպանումն է, ինչն ենթադրում է, որ օրենքը կիրառվելու է անաչառորեն և օբյեկտիվորեն:
- Ժամկետների առկայություն, ինչը խթան է հանդիսանում կանխատեսելության և վստահության սկզբունքի իրականացումն ապահովելու համար: Այն հստակ ժամկտեներ է սահամանում հանարային կառավարաման մարմիններիգործողությունների իրականացման համար:

Մասնագիտացվածություն և մասնագիտական բարեխղճության առկայություն քաղաքացիական ծառայության համակարգում: Սա ենթադրում է, որ քաղաքացիական ծառայողներն օժտված լինեն անաչառությամբ և անկախությամբ:

<u>Հրապարակայնություն և թափանցիկություն</u>

Թափանցիկությունն ու հրապարակայնությունը հանրային կառավարման ոլորտում ծառայում են երկու հիմնական նպատակի: Մի կողմից դրանք պաշտպանում են հանրային շահը, քանի որ նվազեցնում են անարդյունավետ կառավարման և կոռուպցիայի հնարավորությունը: Մյուս կողմից՝ դրանք շատ կարևոր են նշանակություն ունեն անհատական իրավունքների պաշտպանության առումով, քանի որ դրանք ապահովում են վարչական որոշման պատճառաբանությունը և, հետևաբար, հնարավորություն են տալիս շահագրգիռ կողմին իրականացնել իր բողոքարկման իրավունքը:

Վարչական ակտը կամ որոշումը պետք է ունենա տվյալ ակտը կամ որոշումը հիմնավորող հայտարարություն: Այդ հայտարարությունը ապահովում է պաշտոնատար անձի կողմից կայացրած որոշման հիմնավորումը և պատասխանում է այն հարցին, թե արդյո՞ք որոշման կայացման հիմքում ընկած փաստերը համապատասխանում են օրենսդրությանը թե ոչ: Վարչական որոշման հիմքում ընկած շարժառիթի հրապարակումը թափանցիկության, հրապարակայնության և հաշվետվողականության ապահովման գործիք է: Հրապարակայնությունը թույլ է տալիս արտաքին վերահսկողություն իրականացնել, իսկ թափանցիկությունը ենթադրում է, որը մանրակրկիտ զննության դեպքում հնարավոր է ոչ միայն վերահսկել, այլ նաև անհրաժեշտության դեպքում միջամտություն իրականացնել:

## <u>Հաշվետվողականություն</u>

Վարչական իրավունքի տեսանկյունից հաշվետվողականությունը նշանակում է, որ ցանկացած վարչական մարմին, առանց բացառության, պետք է պատասխանատու լինի գործադիր, օրենսդիր կամ դատական իշխանության առջև:

Հաշվետվողականությունը գործիք է, որը ցույց է տալիս, թե արդյոք այնպիսի սկզբունքները, ինչպիսիք են օրենքի գերակայությունը, հրապարակայնությունը, թափանցիկությունը, անաչառությունը և օրենքի առջև բոլորի հավասարությունը հարգված են:

Հաշվետվողականությունը շատ կարևոր է հանրային կառավարման արդյունավետությունը, հուսալիությունը և կանխատեսելիությունը ապահովելու առումով:

Հանրային կառավարման հաշվետվողականությունը ապահովելու համար անհրաժեշտ է վերասահսկողության իրականացում: Վերահսկողության միջոցով հնարավոր է պարզել արդյոք վարչական մարմինները իրենց լիազորությունները օրենսդրությանը համապատասխան են իրականացնում թե ոչ: Վերահսկողություն իրականացնող մարմինները և մեխանիզմները անհրաժեշտ են հանրային պաշտոնյաների աշխատանքը ուսումնասիրելու և վերահսկելու նպատակով: Այդ մարմինները կարող են տարբեր տեսակի լինել՝ դատարան, դատախազություն, օմբուդսմեն, արտաքին և ներքին աուդիտներ, տեսչություններ, խորհրդարանական հանձնաժողովներ, ԶԼՄ-ներ և այլն:

Այսպիսով վերահսկողություն իրականացնող մեխանիզմների և մարմինների հիմնական նպատակը հանրային կառավարման և քաղաքացիական ծառայության կարևորագույն սկզբունքների՝ օրենքի գերակայության, թափանցիկության, հաշվետվողականության և արդյունավետության ապահովումն է:

## <u>Արդյունավետություն</u>

Հաշվետվողականության հատուկ մաս է կազմում հանրային կառավարման ոլորտին ուղղված գործողությունների արդյունավետությունը: Արդյունավետության գնահատումը, որպես հանրային կառավարման և քաղաքացիական ծառայության կարևոր արժեք համեմատաբար նոր է: Արդյունավետության դրսևորում է հանրային կառավարման արդյունավետ գործունությունը, ինչը իրականացվում է կառավարության կողմից օրենքով սահմանված նպատակներն ու հանրային կառավարման խնդիրները հաջողությամբ լուծելու պարագայում:

Արդյունավետությունը պետք է միտված լինի տեղում հանրային քաղաքականության գնահատմանը և ուսումնասիրմանը և պետք է գնահատի թե ինչպես է այդ քաղաքականությունը իմպլեմենտացվում հանրային կառավարման և քաղացիական ծառայողների կողմից:

Հանրային կառավարման ոլորտի բարեփոխումը ՄԱԿ-ի մոտեցումներ

Հանրային կառավարման ոլորտի բարեփոխումների փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ զարգացող տարբեր երկրներում շարունակական հանրային կառավարման բարեփոխում իրականացնելու նպատակով ձևավորվում են հատուկ գործակալություններ կամ բաժիններ:

Այս մեխանիզմի սկիզբը դրվեց "Կազմակերպում և մեթոդ" բաժնի հիմնադրմամբ, որը ձևավորվեց ավագ կառավարիչներին իրենց կառուցվածքի իրականացումն ապահովելու և աշխատանքի մեթոդների բարելավման նպատակով:

Հանարային ոլորտի բարեփոխումների գրասենյակները նպատակ ունեին իրականցնել հանրային կառավարման ոլորտի գործունեության վերլուծություն և պլանավորում: Նախատեսվում էր, որ դրանք պետք է սահմանեն հիմնական չափորոշիչները և հանրային կառավարման ոլորտի փոփոխությունների համար միջնորդ հանդիսանան:

Այնուամենայնիվ, հանրային կառավարման բարեփոխումների գրասենայկները միայնակ չեն կարող միաժամանակ իրականացնել կառավարման համակարգման խորհրդատվության և գնահատման, վերլուծության լայնածավալ գործառույթը:

Հանրային կառավարումը համարվում է կառավարության գործիքը:Հանրային ծառայություն մատուցող կազմակերպությունների և քաղաքացիական ծառայողների կարգավիճակը տարբեր երկրներում տարբեր է: Շատ կազմակերպություններ վերջիններիս տրամադրում են գործունեության սահմանադրական երաշխիքներ, իսկ մյուսները գործունեությունը կարգավորում են օրենսդրական կամ ենթաօրենսդրական ակտերով:

Այնուամենայնիվ, ընդհանուր առմամբ, հանրային կառավարման համար որպես պայման են դիտարկվում հետևյալ գործոնները.

1. Հանրային կառավարումը պետք է լինի բաց և թափանցիկ,
2. Քաղաքացիական ծառայողները պետք է օժտված լինեն ինքնակառավարման և ինքնակարգավորման լիազորություններով
3. Մանրակրկիտ կերպով պետք է հսկողությունն ապահովվի հանրային կառավարման տարբեր գերատեսչությունների առաջադրանքների իրականացման նկատմամբ
4. Հանրային կառավարումը պետք մասնագիտացված լինի ուժեղ և կիրառելի վարքագծի կանոնագրքով
5. Պետք է գործի հաշվետվողականության խթանումն ապահովող համակարգ[2]:

[2] Division for Public Economics and Public Administration Department of Economic and Social Affairs, Rethinking public administration an overview, http://www.unpan.org/Portals/0/60yrhistory/documents/Publications/Rethinking%20public%20administration.pdf

**<u>Հանրային կառավարման և զարգացման ՄԱԿ-ի 50/225 բանաձև[3]</u>**

Կետ 5. Վերահաստատում է, որ ժողովրդավարությունը, թափանցիկ և հաշվետու կառավարումը սոցիալական, մարդու վրա կենտրոնացված կայուն զարգացման անհրաժեշտ հիմքերն են,

Կետ 7. Անհրաժեշտ է, որ հանրային կառավարումը լինի.

- Վստահելի/հուսալի,
- Արդյունավետ,
- Օժտված համապատասխան կարողություններով և հմտություններով:

Միաժամանակ սա ենթադրում է կարողությունների զարգացման, տեխնիկական հագեցվածության, հանրային ծառայության վերապատրաստումների, հանրային, մասնավոր և քաղաքացիական հասարակության ոլորտների միջև համագործակցության խթանման, հանրային կառավարաման մեջ կանանց ներգրավվածության ապահովում, գենդերային առանձնահատկություններով պայմանավորված, միջոլորտային հմտությունների առկայություն, որը խթանում է հանրային բոլոր ոլորտների զարգացումը և ապահովում է բոլորի մասնակցությունը:

## ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

1991 թվականին անկախացումից հետո Հայաստանը կանգնեց բարդ խնդիրների առջև, որոնցից մեկն էր քաղաքական ժողովրդավարացման դժվարին

[3] A/Res/50/225 1May 1996
http://www.unpan.org/Portals/0/60yrhistory/documents/GA%20Resolution/A.RES.50.255.May1996.pdf

խնդիրը: ՀՀ կառավարման համակարգը ձևավորվել էր նախկին խորհրդային կառավարման համակարգի հիման վրա, այդ իսկ պատճառով անհրաժեշտ էր ստեղծել հանրային կառավարման այնպիսի համակարգ, որը բաղկացած կլիներ արդյունավետ գործող մարմիններից և ինստիտուտներից: ՀՀ պետական կառավարման համակարգի գործունեության արդյունավետությունը բարձրացնելու, շուկայական տնտեսության պայմաններում պետության դերը հստակեցնելու և ծառացած խնդիրները լուծելու նպատակով սկիզբ դրվեց հանրային կառավարման համակարգի բարեփոխումներին: ՀՀ պետական կառավարման համակարգի բարեփոխումների հիմնական նպատակներն էին պետական կառավարման մարմինների կողմից հանրային ծառայությունների մատուցման որակի և մատչելիության բարձրացումը, պետական կառավարման գործընթացների քաղաքացիական հասարակության մասնակցությունը, պետական կառավարման մարմինների գործունեության հրապարակայնության և թափանցիկության ապահովումը, արդյունավետ կառավարման հաստատությունների զարգացումը, կառավարման մոդելների և մեխանիզմների բարելավումը, կառավարման ապակենտրոնացման խորացումը, քաղաքացիական ծառայության պատասխանատվության, թափանցիկության, հաշվետվողականության զարգացումը, քաղաքականության մշակման գործընթացին քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովումը:

Հայաստանի հանրային ոլորտի բարեփոխումներն իրականացվել են երեք փուլերով: Առաջին փուլի ընթացքում (1999-2003թթ.) վերակառուցվեց պետական կառավարման վարչական համակարգը, միասնականացվեցին կառավարման կառուցվածքները, ձևավորվեցին կառավարչական հիմնարկներ, ստեղծվեց ըստ արժանիքների պրոֆեսիոնալ քաղաքացիական ու համապատասխան մասնագիտական ծառայություններ:

Հանրային ոլորտի կառավարման բարեփոխումների երկրորդ փուլի (2003-2008թթ.)հիմնական նպատակն էր պետական ծառայության պատասխանատվության, հաշվետվողականության, ծառայությունների մատուցման, կառավարման մոդելների և մեխանիզմների բարելավումը, քաղաքական որոշումների կայացման գործընթացին քաղաքացիական հասարակության մասնակցության, հասարակության հետ կապի արդյունավետ և թափանցիկ գործունեության համակարգի զարգացումը: Այս փուլի հիմնական խնդիրն էր անցում կատարել կառավարման առավել ռացիոնալ կառուցվածքի՝ ըստ նախարարությունների հստակեցնելով հանրային ծառայությունների մատուցման գործում լիազորությունները, գործառույթների իրականացման արդյունավետ ընթացակարգերի սահմանումը, դրանց ապակենտրոնացման, ապակոնցենտրացման և ըստ տեսակների դասակարգման հարցերը[4]:

[4] Հանրային ոլորտի կառավարման բարեփոխումները Հայաստանի Հանրապետությունում, Խուդավերդյան Արմեն Վազգենի, Երևան, 2008 թ., էջ 12

Երրորդ փուլը ընդգրկում է 2009 – 2014 թթ. ընկած ժամանակահատվածը: 2009 թվականի մայիսին մեկնարկեց Արևելյան գործընկերության ծրագիրը, որի հիմնական նպատակն էր ամրապնդել Հայաստանի և ԵՄ երկների միջև հարաբերությունները՝ հավատարիմ մնալով ժողովրդավարության և արդյունավետ կառավարման սկզբունքներին: Արևելյան գործընկերության շրջանակներում ստեղծվեց Հանրային կառավարման բարեփոխումների հանձնախումբը: Հանձնախումբը պետք է հետևեր, որպեսզի գործընկեր երկրներում հանրային կառավարման ոլորտի բարեփոխումները իրականացվեին արդեն մշակված եվրոպական չափանիշների համաձայն: 2009-2014 թթ. ընթացքում ՀՀ բոլոր մարզերը, նախարարությունները և գրեթե բոլոր համայնքները սկսեցին գործածել «Մալբերրի» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգը: Այս համակարգը հնարավորություն է տալիս տալիս առցանց հետեւել պետական կառավարման մարմիններին ուղղած դիմումների ընթացքին, փաստաթղթաշրջանառությունը պետական մարմինների միջև կազմակերպել էլեկտրոնային տարբերակով: 2011 թվականին Հայաստանում ներդրվեց «Կարգավորիչ գիլյոտին» ծրագիրը, որն արագ կերպով իրականացնում է գործարարությանն առնչվող իրավական նորմերի ամփոփում, վերացնում կամ պարզեցնում է գոյություն ունեցող գործարարությանը խոչընդոտող նորմերը:

1999 թվականի ՀՀ վարչապետի սեպտեմբերի 3-ի « ՀՀ պետական կառավարման համակարգի բարեփոխումների առաջնահերթ միջոցառումների մասին» թիվ 544 որոշմամբ ստեղծվեց ՀՀ պետական կառավարման համակարգի բարեփոխումների հանձնաժողովը, որի հիմնական նպատակն էր Հայաստանի Հանրապետության պետական կառավարման համակարգի գործունեության արդյունավետության բարձրացումը, տնտեսության շուկայական հարաբերությունների պայմաններում պետության դերի հստակեցումը, կառավարման կառուցվածքը կատարելագործումը, կառավարման ապարատի աշխատողների թվի օպտիմալացումը, աշխատանքի վարձատրության համակարգի բարելավումը, կառավարման համակարգի գործառույթների զուգորդումը բացառելու ուղղությամբ ծրագրային միջոցառումներ իրականացումը: Հանձնաժողովի նախագահն էր ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարը, իսկ անդամները՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալը, ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալը, ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալը, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության պետի տեղակալը, ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի տեղակալը, ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի խորհրդականը, ՀՀ վարչապետի խորհրդականը, ՀՀ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի տեղակալը:

ՀՀ վարչապետի 1999 թվականի հոկտեմբերի 7-ի «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման համակարգի բարեփոխումների հանձնաժողովի կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 624 որոշմամբ սահմանվեց հանձնաժողովի կանոնադրությունը, որով հաստատվեցին պետական

կառավարման համակարգի բարեփոխումների հանձնաժողովին վերաբերող ընդհանուր դրույթները, հանձնաժողովի առջն դրված խնդիրները և գործառույթները:

Համաձայն այդ որոշման՝ հանձնաժողովի հիմնական խնդիրներն էին՝

ա) բարեփոխումների վերաբերյալ որոշումների նախագծերի նախապատրաստումը և սահմանված կարգով հաստատումից հետո դրանց իրականացման նկատմամբ վերահսկողությունը

բ) բարեփոխումների ծրագրային միջոցառումների իրականացումն ապահովող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի քննարկումը, մեթոդաբանական ուղեցույցերի ընդունումը

գ) բարեփոխումների ընթացքի վերաբերյալ յուրաքանչյուր ամիս Հայաստանի Հանրապետության վարչապետին հաշվետվություններ ներկայացնելը.

դ) բարեփոխումների ծրագրի իրականացման ընթացքի հրապարակայնության ապահովումը

ե) բարեփոխումների հետ կապված հանձնաժողովի աշխատանքային խմբերի ծրագրերի նախագծերի հաստատումը

Հանձնաժողովի գործառույթներն էին՝

ա)պետական, տեղական ինքնակառավարման մարմիններից ու կազմակերպություններից, պաշտոնատար անձանցից պահանջում է անհրաժեշտ տեղեկատվություն, վերլուծական նյութեր, վիճակագրական և այլ փաստաթղթեր

բ)նախապատրաստում և Հայաստանի Հանրապետության վարչապետի հաստատմանն է ներկայացնում բարեփոխումների առաջնահերթ միջոցառումների իրականացման ժամանակացույցը

գ)Հայաստանի Հանրապետության վարչապետի հաստատմանն է ներկայացնում հանձնաժողովի աշխատանքային խմբերի անհատական կազմերը.

դ) կազմակերպում է բարեփոխումներին նվիրված սեմինարներ, հեռուստահաղորդումներ և այլ քննարկումներ

ե) հասարակական կամ պայմանագրային հիմունքներով ներգրավում է գիտական հիմնարկների, ինչպես նաև առանձին գիտնականների ու մասնագետների, պետական և այլ կազմակերպությունների ներկայացուցիչների

զ) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված այլ գործառույթներ:

Նույն որոշմամբ ստեղծվել են նաև հանձնաժողովի աշխատանքային խմբերը, որոնք հաշվետու են հանձնաժողովին և իրենց գործունեությունը իրականացնում են հանձնաժողովի հաստատած աշխատակարգին և աշխատանքների կատարման ժամանակացույցին համապատասխան:

2000 թվականի մարտի 31-ին ՀՀ վարչապետը հաստատում է «ՀՀ պետական կառավարման համակարգի բարեփոխումների առաջնահերթ միջոցառումների ցանկը հաստատելու մասին» թիվ 151 որոշումը: ՀՀ պետական կառավարման բարեփոխումների առաջնահերթ միջոցառումներն էին՝

1. Պետական կառավարման համակարգի կառուցվածքային բարեփոխումների հայեցակարգի մշակում

2. ՀՀ նախարարությունների օրինակելի կանոնադրության և կառուցվածքի մշակում
3. ՀՀ նախարարությունների աշխատանքային խմբերի համար սեմինարների կազմակերպում
4. Պետական կառավարման մարմինների գործունեությունը կարգավորող օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերում փոփոխություններ կատարելու մասին առաջարկությունների նախապատրաստում
5. ՀՀ նախարարություններում և գերատեսչություններում քաղաքական և քաղաքացիական պաշտոնների նկարագրում
6. «ՀՀ կառավարության կառուցվածքը և գործունեության կարգը սահմանելու մասին» ՀՀ Նախագահի 1995 թվականի հուլիսի 25-ի հրամանագրում փոփոխություններ կատարելու մասին առաջարկությունների նախապատրաստում
7. ՀՀ նախարարություններում ու գերատեսչություններում նոր կազմակերպչական կառուցվածքների ներդրման աշխատանքների իրականացման միջոցառումների ծրագրի նախապատրաստում
8. «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» ՀՀ օրենքի նախագծի նախապատրաստում
9. Քաղաքացիական ծառայողների պաշտոնների դասակարգում, պաշտոնների անվանացանկի կազմում
10. Համապատասխան պաշտոնների կարգերի համար աշխատավարձի դրույքաչափերի սահմանում
11. Քաղաքացիական ծառայողների դասային աստիճանների որոշման չափանիշների սահմանում
12. Քաղաքացիական ծառայողի աշխատանքային կարգապահության օրինակելի կանոնների մշակում
13. Քաղաքացիական ծառայողին դասային աստիճանից զրկելու կարգի մշակում
14. Մրցույթի անցկացնելու կարգի մշակում
15. Մրցույթի արդյունքների պաշտոնական հրապարակման կարգի մշակում
16. Քաղաքացիական ծառայության ընդունվելու համար ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկի մշակում
17. Առաջին անգամ քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնող անձի փորձաշրջան անցնելու կարգի մշակում
18. Քաղաքացիական ծառայության պաշտոնում նշանակման ձևակերպման կարգի մշակում
19. Պարտադիր գործուղման և ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգի մշակում
20. Քաղաքացիական ծառայողի ատեստավորում անցկացնելու կարգի մշակում

21. Քաղաքացիական ծառայողների վերապատրաստում իրականացնող ուսումնական հաստատությունների ցանկում ընդգրկվելու չափանիշների մշակում
22. Քաղաքացիական ծառայողների վերապատրաստման կարգի մշակում
23. Քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում գրանցելու և ռեզերվից հանելու կարգի մշակում
24. Քաղաքացիական ծառայության էթիկայի կանոնների մշակում
25. Քաղաքացիական ծառայողների գրանցամատյանում տեղեկություններ ընդգրկելու, այդ տեղեկությունների ցանկը և գրանցամատյանը վարելու կարգի մշակում
26. Քաղաքացիական ծառայողի նկատմամբ կարգապահական տույժեր կիրառելու և ծառայողական քննություն անցկացնելու կարգի մշակում
27. Քաղաքացիական ծառայության մրցութային -ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերի մշակում
28. Քաղաքացիական ծառայության կոմիտեի կանոնադրության նախագծի մշակում
29. «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում

1999-2001 թվականներին Մեծ Բրիտանիայի միջազգային զարգացման դեպարտամենտի (UK Department of International Development) ֆինանսավորմամբ և «Միջազգային հանրային կառավարում» (Public Administration International) կազմակերպության աջակցությամբ իրականացվեց Հայաստանի հանրային ոլորտի բարեփոխումների ծրագիրը, որի նպատակն էր օգնել ՀՀ կառավարությանը իրականացնել հանրային ոլորտի բարեփոխումներ: Մասնավորապես՝

- ✓ քաղաքացիական ծառայության մասին օրենքի ընդունում
- ✓ մարդկային ռեսուրսների կառավարման քաղաքականության մշակում,
- ✓ նախարարություններում կառուցվածքային և ծրագրային փոփոխությունների իրականացում

2001 թվականի դեկտեմբերի 4-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվեց և 2002 թվականի հունվարի 9-ին ուժի մեջ մտավ «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, որով ստեղծվեց Քաղաքացիական ծառայության խորհուրդը: Խորհրդի գործունեության հիմնական նպատակներն են՝ արդյունավետ, միասնական կադրային քաղաքականության իրականացումը, պետական ապարատը քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխությունից անկախ արհեստավարժ, բարոյական բարձր հատկանիշներով օժտված կադրերով համալրումը, քաղաքացիական ծառայողների իրավական պաշտպանվածության իրականացումը և օրինական շահերի պաշտպանությունը[5]:

---

[5] ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ, Խորհրդի գործունեության հիմնական նպատակները http://www.csc.am/%D5%B4%D5%A5%D6%80-%D5%B4%D5%A1%D5%BD%D5%AB%D5%B6

ՀՀ կառավարման համակարգում հիմնական բարեփոխումները իրականացվել 2000թ.-ից մինչև 2006 թ. ընկած ժամանակահատվածում: Իրականացված բարեփոխումները հանգեցրել են հետևյալ արդյունքներին՝

- ✓ պետական կառավարման մարմիններում իրականացվեց գործառութային վերլուծություն, բացահայտվեցին կրկնվող, ավելորդ, տվյալ մարմնին ոչ բնորոշ գործառույթները,
- ✓ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում ստեղծվեցին համապատասխան կառավարչական հիմնարկներ, որոնց ղեկավարի գործառույթները տարանջատվեցին պետական մարմնի ղեկավարի գործառույթներից,
- ✓ նախարարություններում ձևավորվեցին առանձնացված ստորաբաժանման կարգավիճակով գործակալություններ և տեսչություններ, որոնք մասնագիտացած են ծառայությունների մատուցման, կանոնակարգման և վերահսկողական ու տեսչական գործառույթների իրականացման ոլորտում,
- ✓ նախարարներին կից հիմնվեցին տարբեր խորհրդակցական հանձնաժողովներ և խորհուրդներ, որոնք փոխարինեցին նախկին «կոլեգիալ» կառավարման մարմիններին,
- ✓ Կառավարությանն առընթեր գերատեսչությունների 21 մարմիններ ընդգրկվեցին համապատասխան նախարարությունների կազմում կամ կառուցվածքում՝ որպես գործակալություն կամ տեսչություն, կամ էլ կառուցվածքային ստորաբաժանում,
- ✓ նախարարությունների, Կառավարությանն առընթեր մարմինների համակարգում գործող բազմաթիվ հիմնարկներ վերակազմավորվեցին պետական ոչ առևտրային կազմակերպությունների, դրանցից տարանջատվեցին կառավարչական գործառույթները, նախարարությունների կառավարման կառուցվածքը միասնականացվեց՝ դրանցում ձևավորվեցին քարտուղարություններ, վարչություններ և բաժիններ, հաստատվեցին նախարարությունների նոր կանոնադրությունները, որոնք ամբողջովին համապատասխանեցվեցին օրենքներով և այլ օրենսդրական ակտերով վերապահված ռազմավարական խնդիրներին և գործառույթներին[6]:

**Եվրոպական հարևանության քաղաքականություն**

2004 թվականին Հայաստանը ընգրկվում է Եվրոպական միության «Եվրոպական հարևանության քաղաքականություն» ծրագրում: Այս գործընթացի

[6] Կայուն զարգացման ծրագիր, 2008 թ. - http://www.csc.am/documents/programs/zargacum.pdf

առաջին քայլը գործողությունների ծրագրի մշակումն էր, որը ստորագրվեց 2006 թվականի նոյեմբերին 5 տարի ժամկետով: Գործողությունների ծրագիրը քաղաքական փաստաթուղթ է, որի նատակն էր Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության միջև հարաբերությունների ամրապնդմանն ուղղված ռազմավարական նշանակություն ունեցող նպատակների իրականացումը: Գործողությունների ծրագրի առաջին առաջնային ոլորտը վերաբերվում է ժողովրդավարական կառույցների և օրենքի գերակայության ամրապնդմանը, որոնց շրջանակներում մշակված հատուկ գործողություններից մի քանիսը ուղղված են հանրային կառավարման ոլորտի բարեփոխումներին: Մասնավորապես՝ հանրային կառավարման ոլորտի բարեփոխումներին վերաբերվող գործողություններն են՝

- սահմանադրական բարեփոխումների պատշաճ իրականացման ապահովումը
- ազգային հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման համարհամապատասխան Գործողությունների ծրագրի իրականացման առաջընթացի գնահատում, քաղաքացիական հասարակության ու գործածարար աշխարհի ներկայացուցիչների ակտիվ մասնակցության ապահովում դրա իրականացման մոնիթորինգի գործում
- քաղաքացիական ծառայության համակարգի ներդրման և կայացման գործընթացի գնահատում և եվրոպական չափանիշներին համապատասխան քաղաքացիական ծառայության համակարգի շարունակական կատարելագործման ապահովում[7]

Վերջին երկու գործողությունները պետք է իրականացված լինեին 2006 թվականի ընթացքում:

Գործողությունների ծրագրի ընդհանուր նպատակների և գործողությունների բաժնում առանձնացված են նաև այն բոլոր հետագա գործողությունները, որոնք պետք է լրացնեն առաջնային գործողություններին: Օրինակ՝ «Ժողովրդավարությունն և օրենքի գերակայությունն երաշխավորող ինստիտուտների կայունության և արդյունավետության ամրապնդում» ենթաբաժնում նշված գործողություններից մեկը առնչվում է հանրային կառավարման ոլորտի բարեփոխումների հետ: Համաձայն այդ գործողության՝ պետք է ամրապնդվեն եվրոպական չափանիշներին համապատասխանեցված տեղական ինքնակառավարումը, տեղական համայքները և քաղաքացիական ծառայության ինստիտուտները և պետք է ապահովվի տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի իրականացումը:

Դատաիրավական բարեփոխումների շրջանակներում պետք է իրականացվեին հետևյալ գործողությունները՝

- դատական ակտերի կանխատեսելիության և թափանցիկության մակարդակի բարձրացում դատական հրապարակման արդյունավետ համակարգի ստեղծման միջոցով
- դատական վարչարարության ժամանակակից համակարգի ներդրում

[7] EU-Armenia Action Plan, p. 4-5
http://eeas.europa.eu/enp/pdf/pdf/action_plans/armenia_enp_ap_final_en.pdf

- դատական ակտերի կատարման արդյունավետության բարձրացում, այդ ակտերի հարկադիր կատարման ապահովելու նպատակով այլընտրանքային մարմինների ստեղծում

Գործողությունների առանձին ենթաբաժին վերաբերում է քաղաքացիական ծառայության բարեփոխումներին: ԵՀՔ շրջանակներում քաղաքացիական ծառայության բարեփոխումների նպատակով պետք է իրականացվեին հետևյալ գործողությունները՝

- քաղաքացիական ծառայողների արժանիքների վրա հիմնված վարձատրության համակարգի ստեղծում, աշխատանքի կատարողականի գնահատման արդյունավետ համակարգի ներդրում
- աջակցություն քաղաքացիական ծառայության համակարգի գործունեության և ինստիտուտների (մրցույթի, ատեստավորման, քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերի և այլն) կատարելագործմանը և դրանք եվրոպական չափանիշներին ներդաշնակեցմանը
- աջակցություն եվրոպական չափանիշներին համապատասխան քաղաքացիական ծառայողների կրթական և վերապատրաստման ծրագրերի (մասնավորապես՝ համակարգչային գիտելիքների, կառավարչական հմտությունների, օտար լեզուների, էթիկայի կանոնների և այլն) կատարելագործմանը
- ԵՄ անդամ պետությունների և ՀՀ քաղաքացիական ծառայության համակարգի պատասխանատու մարմինների համագործակցության ցանցի ստեղծում՝ օրենսդրության ներդաշնակեցման (և այլ համապատասխան գործունեության) և փորձի ու տեղեկատվության փոխանակման նպատակներով:

Գործողությունների ծրագրում կան նաև այլ գործողություններ, որոնք վերաբերում են հանրային կառավարման ոլորտի բարեփոխումներին: Դրանցից են՝

Ծառայություններ

- ՀՀ ազգային օրենսդրության վերանայում ծառայությունների մատուցմանն առնչվող արգելքները վերհանելու և վերացնելու նպատակով
- համապատասխան վարչական կառույցների հիմնում և դրանց արդյունավետ գործունեության ապահովում, որի մեջ մտնում է նաև կենտրոնական համակարգող մարմինը, որը պետք է հեշտացնի ծառայությունների մատուցումը

Պետական գնումներ համակարգ

- ԵՄ գնումների մասին օրենսդրության և սկզբունքների հետ գնումների համակարգի համապատասխանության ապահովում՝ թափանցիկության, տեղեկատվության տրամադրման, իրավական օգնության մատչելիության միջոցով, ինչպես նաև բացառությունների սահմանափակ կիրառում
- Հայաստանում էլեկտրոնային գնումների համակարգի ներդրման ապահովում

**Արևելյան գործընկերություն**

2009 թվականի մայիսի 7-ին Պրահայում մեկնարկեց Եվրոպական միության «Արևելյան գործընկերություն» ծրագիրը: Այս ծրագրով նախատեսվում է զգալիորեն արդիականացնել համակգործակցության մակարդակը ԵՄ անդամ երկրների և Արևելյան 6 գործընկեր երկրների հետ: Նախաձեռնության նպատակն է ԱԳ երկրների և ԵՄ անդամ երկրների հարաբերությունների ամրապնդումը՝ քաղաքական համագործակցության և տնտեսական ինտեգրման խորացման միջոցով: Դրա հիմքում ընկած է ընդհանուր հավատարմությունը միջազգային իրավունքին և հիմնարար արժեքներին՝ ներառյալ ժողովրդավարությունը, օրենքի գերակայությունը և մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հարգումը, ինչպես նաև հավատարմությունը շուկայական տնտեսությանը, կայուն զարգացմանն ու արդյունավետ կառավարմանը: Այս ծրագրերը իրականացնելու նպատակով Եվրոպական միության հանձնաժողովը նախատեսել է 6 գործընկեր երկրներին տրամադրել 600 միլիոն եվրո 2010-2013 ժամանակահատվածի համար:

Արևելյան գործընկերության շրջանակներում գործող քաղաքացիական հասարակության ֆորումում ստեղծվել են 5 աշխատանքային խմբեր: Դրանցից առաջին աշխատանքային խումբը՝ ժողովրդավարություն, մարդու իրավունքներ, արդյունավետ կառավարում և կայունություն, հնարավորություն է ընձեռում գործընկեր երկրներին ինտեգրվել Եվրոպական միություն՝ զարգացնելով ժողովրդավարական կառույցները և ուժեղացնելով քաղաքացիական հասարակության դերը այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են մարդու իրավունքները, ընտրական չափանիշները, մամուլի ազատությունը, կոռուպցիայի դեմ պայքարը և այլն: Աշխատանքային խմբի գործունեության մեծ մասը իրականացվում է 7 ենթախմբերի մակարդակով, որոնցից առաջինը հանրային կառավարման բարեփոխումների ենթախումբն է: Այս ենթախումբը ունի 5 նպատակ՝

1. Խրախուսել Արևելյան գործընկերության երկրներին ապահովելու հանրային կառավարման բարեփոխումների անկախ մոնիթորինգների անցկացումը և Համապարփակ ինստիտուցիոնալ զարգացման (CIB) կողմից ֆինանսավորվող եվրոպական համագործակցության ծրագրերի իրականացումը

   -ընդունել և ներդնել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման բարեփոխումների ազգային ռազմավարություն քաղաքացիական հասարակության և հասարակական կազմակերպությունների հետ քննարկումներ կազմակերպելուց հետո

   - նվազեցնել հարկատուների հարկային բեռը

   - կրճատել այն վարչական մարմինների թիվը, որոնց գործառույթները կրկնվում են

   -տարածել բարեփոխումների վերաբերյալ տեղեկատվությունը և բարձրացնել քաղաքացիների իրազեկվածությունը այլ երկրներում իրականացված բարեփոխումների լավագույն փորձի վերաբերյալ

   -հետևել տեղական ինքնակառավարման վերաբերյալ Եվրոպական խարտիային

2. Ներգրավվել քաղաքացիական հասարակությանը որոշումների կայացման գործընթացներին բոլոր այն դեպքերում, երբ կառավարությունները բանակցում են ԵՄ-ի հետ՝ տարբեր ծրագրերի շրջանակներում ԵՄ-ից աջակցություն ստանալու համար՝ ներառյալ հանրային կառավարման բարեփոխումների ոլորտի թվինինգ ծրագրերը
3. Թվինինգ ծրագրերի համատեքստում ստեղծել այնպիսի մոտցումներ, որոնք տեղական քաղաքացիական հասարակությանը թույլ կտան ավելի արագ և արդյունավետ կազմակերպել տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնյաների, ինչպես նաև կազմակերպել փորձագետների փոխանակում
4. Կազմակերպել հանրային ծառայողների և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնյաների ուսուցումը և վերապատրաստումը նախապես իրականացված կարիքների գնահատման և ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա:

**Հանրային կառավարման բարեփոխումների վերաբերյալ կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրերը**

2008 թվականից այս կողմ ընկած ժամանակահատվածում հանրային կառավարման ոլորտի բարեփոխումների մեկ միասնական ծրագիր չի իրականացվել: Առանձին երկարաժամկետ ծրագրեր իրականացվել են, որոնցում առանձին բաժիններում ներառված են եղել նաև հանրային կառավարման ոլորտի բարեփոխումները:

2008 թվականին ՀՀ կառավարության հոկտեմբերի 30-ի N 1207-Ն որոշմամբ հաստատվեց Կայուն զարգացման ծրագիրը, որը ըստ էության Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի(2003թ. օգոստոսի 8-ի թիվ 994-Ն որոշում) վերանայման արդյունքում մշակված ծրագիրն էր: Այս ծրագրի 10-րդ բաժինը վերաբերում է հանրային կառավարման և դատաիրավական համակարգի բարեփոխումներին: Բաժնում հիմնականում նկարագրվում է հանրային կառավարման ոլորտի իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում մինչ 2008 թ. և հանրային կառավարման այն հիմնական ոլորտները, որոնց շրջանակներում պետք է իրականացվեին բարեփոխումները: Դրանք են օրինակ՝

- ✓ Էլեկտրոնային կառավարման, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության, տվյալների միասնական բազաների ու փոխանակման հնարավորությունների ստեղծում
- ✓ Կառավարության աշխատակազմի և նախարարությունների միջև կապի ուժեղացում՝ գործառույթների առավել հստակ կոորդինացման և համակարգման նպատակով
- ✓ Պետական կառավարման մարմինների գործունեության հրապարակայնության և թափանցիկության ընդլայնում, որոշումների

ընդունման գործընթացներին քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովում

Կառավարման համակարգի բարեփոխումները պետք է իրականցված լինեին մինչ 2012 թվականը, համակարգը բնութագրող ցուցանիշները պետք է գերազանցեին Արևելյան Եվրոպայի և Բալթյան երկրների 2006 թվականի մակարդակը, սակայն ֆինանսա-տնտեսական և դրա բացասական հետևանքների վերացմանն ուղղված Կառավարության միջոցառումները բավարար հնարավորություն և միջոցներ չապահովեցին ամբողջովին և լիարժեք իրագործելու դեռևս կայուն զարգացման ծրագրով նախանշված հանրային կառավարման բարեփոխումների հիմնական կետերը[8]:

2014 թվականի մարտի 27-ի ՀՀ կառավարության N 442 - Ն որոշմամբ հաստատվեց Հայաստանի Հանրապետության 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը: Ծրագրի 10-րդ գլուխը վերաբերում է հանրային կառավարման ոլորտի բարեփոխումներին: Այդ գլխում սկսվում է կառավարման համակարգը համալիր գնահատող համապատասխան ցուցանիշների՝ նախորդ տարիների միտումների վերլուծությամբ, որից հետո տրվում են դրանց նպատակային արժեքները՝ մինչև 2025 թ: Ներկայացվում են հանրային կառավարման համակարգի հիմնական ենթաոլորտների զարգացման այն ռազմավարական գերակայությունները, որոնց միջոցով նախատեսվում է ապահովել արդյունքային ցուցանիշների նպատակային արժեքները ծրագրվող ժամանակաշրջանի ընթացքում: Այսպես, կառավարման համակարգի գործառութային բարեփոխումներից առավել ուշադրություն է դարձվում բավականին արդիական երկու ուղղություններին՝ էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրմանը և տեսչական համակարգի օպտիմալացմանը: Ծրագրում նաև նշված են վերջին տարիներին էլեկտրոնային կառավարման ոլորտի բարեփոխումների արդյունքները: Իրականացված ծրագրերն են՝

1. Էլեկտրոնային վիզաների ստացում,
2. ARCA էլեկտրոնային վճարումների համակարգի ներդրում,
3. «Mulberry» փաստաթղթերի էլեկտրոնային կառավարման համակարգին անցում,
4. Էլեկտրոնային ստորագրություն,
5. Փաստաթղթի և դիմումի ընթացքին էլեկտրոնային համակարգով հետևելու հնարավորություն՝ բիզնեսի և քաղաքացիների համար,
6. Հարկային հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգ,
7. Էլեկտրոնային թույլտվություններ և լիցենզիաներ,
8. Էլեկտրոնային գնումներ,
9. Բիզնեսի էլեկտրոնային գրանցում,
10. Նույնականացման քարտեր (ID-cards) և կենսաչափական անձնագրեր,

[8] Հայաստանի Հանրապետության 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, էջ 173

11. Մտավոր սեփականության գործակալության էլեկտրոնային հայտերի ընդունման համակարգ,
12. Մտավոր սեփականության գործակալության տեղեկատվական որոնման համակարգ,
13. ԴԱՀԿ էլեկտրոնային աճուրդի համակարգ,
14. Հայաստանի իրավական տեղեկատվության էլեկտրոնային համակարգ,
15. Անշարժ գույքի կադաստրի էլեկտրոնային համակարգ,
16. Ինտերնետով հրապարակային ծանուցման պաշտոնական կայք,
17. Դատական տեղեկատվական էլեկտրոնային համակարգ:

Ծրագրում ներկայացված են նաև էլեկտրոնային կառավարման ոլորտի բարեփոխումներին ուղղված միջոցառումները մինչ 2025 թվականը:

2014 թվականի ապրիլի 10-ին ՀՀ կառավարությունը որոշեց հավանություն տալ «Հանրային կառավարման համակարգում կոռուպցիայի դեմ պայքարի» հայեցակարգին: Հայեցակարգը բաղկացած է երեք բաժիններից, որոնցից առաջինում ներկայացված են հայեցակարգի ընդհանուր դրույթները, երկրորդում ներկայացված են հայեցակարգային հիմնախնդիրները, որոնք են՝

1. Օրինավոր և բարեխիղճ հանրային ծառայողների դասի ձևավորում
2. Արդյունավետ հանրային կառավարման համակարգի ձևավորում
3. Թափանցիկ և հաշվետու կառավարման համակարգի ձևավորում
4. Մասնակցային կառավարման համակարգի ձևավորում

Բոլոր հիմնախնդիրների դեպքում ներկայացված է վիճակի նկարագրությունը և առաջարկվող հայեցակարգային լուծումները: Հայեցակարգի երրորդ բաժինը վերաբերում է հայեցակարգի իրացումն ապահովող կառուցակարգերին:

Միացյալ ազգերի կամզակերպության Զարգացման ծրագիրը հանրային կառավարումը դիտարկում է բացառապես գործադիր իշխանության շրջանակներում: Նման մոտեցումը պայմանավորված է այն հանգամանքով «Հազարամյակի մարտարավերների ծրագրով» որդեգրված մարդու իրավունքների վրա հիմնված կառավարման հայեցակարգի ներդմամբ, որի իրագործման էական նախապայմանը արդյունավետ և լավ կառավարումն է, և որը կարող է իրագործվել միայն արդյունավետ հանրային կառավարմամբ: Որպես արդյունավետ հանրային կառավարման բաղադրատարրեր՝ ներկայացվում են հետևյալը.

- Մասնակցություն և թափանցիկություն որոշումների կայացման գործընթացում
- Խտրականության բացառում
- Լիազորում-մարդիկ պիտի օժտված լինեն իրավական և քաղաքական միջոցներով իրացնել իրենց իրավունքները
- Հաշվետվողականություն-հանրային կառավարման դերակատարները պետք է հաշվետու լինեն հանրությանը իրենց գործողությունների համար:

Հանրային կառավարման բարեփոխումը սովորաբար ներառում է հետևյալ հիմնական ուղղությունները.

- Կառավարման ապարատը (ռազմավարությունները, կանոնները, գործընթացները, գործող համակարգը, կազմակերպական կառուցվածքը, անձնակազմը և այլն), որը ֆինանսավորվում է պետության կողմից և պատասխանատու է կառավարման և կառավարման լիազորությունների բաշխման համար:
- Կառավարության այն գործողությունների կառավարման և իրականացման գործընթացներ, որոնք առնչվում են օրենքի, կանոնակարգերի և որոշումների իրականացման հետ:

Հանրային կառավարման բարեփոխումները կարող են լինել համընդգրկուն և ներառել այնպիսի գործընթացներ, ինչպիսիք են՝ կազմակերպական կառուցվածքը, անձնակազմի կառավարումը, հանրային ֆինանսները, արդյունքների վրա հիմնված կառավարումը: Այն կարող է ընգգրկել նաև թիրախավորված ոլորտներ, ինչպիսիք են քաղաքացիական ծառայությունը:

Ընդհանուր առմամբ, հանրային կառավարման բարեփոխումները կարող են բաժանվել հետևյալ հիմնական ոլորտների.

- Քաղաքացիական ծառայության բարեփոխում
- Որոշումների կայացման գործընթացների արդյունավետության և այս ոլորտներում պատասխանատվության բարձրացում,
- Կառավարման ապարատի վերափոխում, որն առնչվում է հանրային կառավարման կանոնների, կառույցների և կառուցվածքի հետ և ենթադրում է այնպիսի «գործիքների», ինչպիսին է էլեկտրոնային կառավարման ներմուծումը,
- Պետական եկամուտների և ծախսերի կառավարման բարեփոխում:

ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը հանրային կառավարման բարեփոխումներ նախաձեռնողներին առաջադրում է հետևյալ առաջարկությունները.

- Հստակ սահմանել բարեփոխումների շրջանակը և սահմանել իրատեսական և կոնկրետ հասցեագրված թիրախներ,
- Գիտակցել, որ հանրային կառավարման բարեփոխումները պահանջում են ժամանակ,
- Համոզվել, որ բարեփոխումներն ամբողջությամբ գիտակցված և ընկալված են, և աջակցել դրանց ոչ միայն կառավարման, այլև համակարգման, քաղաքացիական ծառայության և ընդհանուր առմամբ ամբողջ հանրության մակարդակներում:
- Վստահ լինել, որ առկա է շարունակական և բավարար քաղաքական կամք հանրային կառավարման բարեփոխման ողջ ժամանակահատվածում:
- Հիշել, որ դոնորների աջակցությունը, չնայած իր դրական միջամտությանը, միաժամանակ կարող է հակառակ ազդեցություն ունենալ՝ ձևավորելով դիմադրություն հանրային կառավարման ոլորտի բարեփոխումների համար:

## ԻՐԱՎԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

1999 թվականի ՀՀ վարչապետի սեպտեմբերի 3-ի « ՀՀ պետական կառավարման համակարգի բարեփոխումների առաջնահերթ միջոցառումների մասին» թիվ 544 որոշմամբ ստեղծվեց ՀՀ պետական կառավարման համակարգի բարեփոխումների հանձնաժողովը, որի հիմնական նպատակն էր Հայաստանի Հանրապետության պետական կառավարման համակարգի գործունեության արդյունավետության բարձրացումը, տնտեսության շուկայական հարաբերությունների պայմաններում պետության դերի հստակեցումը, կառավարման կառուցվածքը կատարելագործումը, կառավարման ապարատի աշխատողների թվի օպտիմալացումը, աշխատանքի վարձատրության համակարգի բարելավումը, կառավարման համակարգի գործառույթների զուգորդումը բացառելու ուղղությամբ ծրագրային միջոցառումներ իրականացումը:

ՀՀ վարչապետի 1999 թվականի հոկտեմբերի 7-ի « Հայաստանի Հանրապետության պետական կառավարման համակարգի բարեփոխումների հանձնաժողովի կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 624 որոշմամբ սահմանվեց հանձնաժողովի կանոնադրությունը, հստակեցվեցին հանձնաժողով հիմնական խնդիրները և գործառույթները, ինչպես նաև հանձնաժողովի գործունեության կազմակերպումը:

2000 թվականի ՀՀ վարչապետի « ՀՀ պետական կառավարման համակարգի բարեփոխումների առաջնահերթ միջոցառումների ցանկը հաստատելու մասին» թիվ 151 որոշմամբ հաստատվեց ՀՀ պետական կառավարման համակարգի բարեփոխումների առաջնահերթ միջոցառումների ցանկը:

2001 թվականի ՀՀ վարչապետի հունվարի 3-ի « ՀՀ պետական կառավարման համակարգի բարեփոխումների հանձնաժողովի քարտուղարության անհատական կազմը հաստատելու մասին» թիվ 3 որոշմամբ հաստատվեց ՀՀ պետական կառավարման համակարգի բարեփոխումների հանձնաժողովի քարտուղարության անհատական կազմը

2001 թվականի դեկտեմբերի 4-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվում և 2002 թվականի հունվարի 9-ին ուժի մեջ է մտնում «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը:

ՀՀ Քաղաքացիական ծառայության խորհրդի 2002 թվականի հունվարի 29-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի կանոնադրությունը հաստատելու մասին» 3-Ն որոշումը, որով հաստատվեցին քաղաքացիական ծառայության խորհրդի վերաբերյալ ընդհանուր դրույթները և դրա հիմնական խնդիրներն ու գործառույթները: Որոշմամբ սահմանվեց նաև խորհրդի կազմավորումը և գործունեության կազմակերպումը:

ՀՀ Քաղաքացիական ծառայության խորհրդի 2002 թվականի մայիսի 8-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմի կանոնադրությունը հաստատելու մասին» 9-Ն որոշում, որով հաստատվեց քաղաքացիական ծառայության խորհրդի կանոնադրությունը: Որոշմամբ սահմանվեցին կանոնադրության ընդհանուր դրույթները, աշխատակազմի կառուցվածքը, խորհրդի գործառույթները, աշխատակազմի ղեկավարի և աշխատակազմի ղեկավարի տեղակալի գործառույթները, աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումները և դրանց գործառույթները

ՀՀ Քաղաքացիական ծառայության խորհրդի 2002 թվականի մայիսի 23-ի «Մրցույթ և ատեստավորում անցկացնելու համար թեստեր կազմելու կարգը սահմանելու մասին» 11-Ն որոշումը, որով սահմանվեց մրցույթ և ատեստավորում անցկացնելու համար թեստեր կազմելու կարգը:

ՀՀ Քաղաքացիական ծառայության խորհրդի 2002 թվականի հունիսի 1-ի «Քաղաքացիական ծառայողների անձնական գործերը և գրանցամատյանը վարելու կարգը հաստատելու մասին» 14-Ն որոշումը, որով հաստատվեց քաղաքացիական ծառայողների անձնական գործերը և գրանցամատյանը վարելու կարգը: Որոշման մեջ կցված են նաև այդ փաստաթղթերի ձևերը:

2002 թվականի հունիսի 13-ի Քաղաքացիական ծառայության խորհրդի «Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին որոշում, որով քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը: Մասնավորապես՝ սահմանվեցին քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու ընդհանուր դրույթները, մրցույթի մասին հայտատարարության հրապարակման կարգը, մրցույթի նախապատրաստման աշխատանքների կարգը, թեստավորման անցկացման կարգը, թեստավորման արդյունքների ամփոփման կարգը, հարցազրույցի անցկացման կարգը, մրցույթների արդյունքներ հրապարակման և բողոքարկման կարգը, մրցույթի արդյունքներով պաշտոնի նշանակման կարգը, ինչպես նաև մրցույթի հրապարակայնությունը և եզրափակիչ դրույթները:

ՀՀ Քաղաքացիական ծառայության խորհրդի 2002 թվականի հունիսի 13-ի «Քաղաքացիական ծառայողի ատեստավորում անցկացնելու կարգը սահմանելու մասին» 18-Ն որոշումը, որով սահմանվեց քաղաքացիական ծառայողի ատեստավորում անցկացնելու կարգը: Մասնավորապես՝ որոշմամբ սահմանվեցին քաղաքացիական ծառայողների ատեստավորում անցկացնելու ընդհանուր դրույթները, ատեստավորման նախապատրաստման աշխատանքների կազմակերպման ընթացակարգը, փաստաթղթային ատեստավորման անցկացման կարգը, թեստավորման անցկացման կարգը, թեստավորման արդյունքների ամփոփման կարգը, հարցազրույցի անցկացման կարգը, ատեստավորման արդյունքում քաղաքացիական ծառայողի վերաբերյալ որոշումների ընդունման կարգը:

ՀՀ Քաղաքացիական ծառայության խորհրդի 2002 թվականի հունիսի 14-ի «Քաղաքացիական ծառայության բարձրագույն և գլխավոր թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթ ու այդ պաշտոններն զբաղեցնող քաղաքացիական ծառայողների ատեստավորում անցկացնող մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերը հաստատելու մասին» N 19-Ն որոշումը: Մասնավորապես այս որոշմամբ սահմանվեցին քաղաքացիական ծառայության բարձրագույն և գլխավոր թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային և ատեստավորման հանձնաժողովների ընդհանուր դրույթները, հանձնաժողովների խնդիրներն և լիազորությունները, հանձնաժողովների աշխատանքների կազմակերպման կարգը, հանձնաժողովների նախագահներժի, քարտուղարների և անդամների լիազորությունները, ինչպես նաև դրանց դրանց գործունեության դադարման կարգը:

2002 թվականի հունիսի 18-ի ՀՀ Քաղաքացիական ծառայության խորհրդի «Քաղաքացիական ծառայության պաշտոնների յուրաքանչյուր խմբի ընդհանուր նկարագիրը հաստատելու մասին» թիվ 20 որոշմամբ սահմանվում է քաղաքացիական ծառայության պաշտոնների յուրաքանչյուր խմբի ընդհանուր նկարագիրը: Մասնավորապես՝ սահմանվում են բարձրագույն, գլխավոր, առաջատար և կրտսեր պաշտոնների խմբերի ընդհանուր նկարագրերը, ինչպես նաև դրանք քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերով նախատեսված գործառույթներից բխող կառավարչական հմտությունների և ունակությունների 8 ցանկերը:

ՀՀ Քաղաքացիական ծառայության խորհրդի 2002 թվականի նոյեմբերի 18-ի «Քաղաքացիական ծառայողների վերապատրաստում անցկացնող ուսումնական հաստատությունների ցանկը հաստատելու մասին» թիվ 115-Ն որոշում:

ՀՀ Քաղաքացիական ծառայության խորհրդի 2002 թվականի նոյեմբերի 22-ի «Ծառայողական քննություն անցկացնելու կարգը սահմանելու մասին» 124-Ն որոշում: Այս որոշմամբ սահմանվեցին ծառայողական քննություն անցկացնելու ընդհանուր դրույթները, ծառայողական քննություն անցկացնելու դեպքերը և ծառայողական քննություն անցկացնելու դիմումները ներկայացնելու ժամկետները, ծառայողական քննության մասնակիցները, ծառայողական քննության մասնակցող անձինք և նրանց մասնակցության ընթացակարգը, ծառայողական քննության մասնակիցների և ծառայողական քննության մասնակցող անձանց իրավական վիճակը, ծառայողական քննության նշանակման և անցկացման ընթացակարգը, ծառայողական քննության դադարեցման կարգը, ծառայողական քննության ավարտի, արդյունքների ձևակերպման և նյութերի հաշվառման կարգը: Որոշման մեջ կցված են նաև որոշմանն առնչվող փաստաթղթերի ձևերը:

ՀՀ Քաղաքացիական ծառայության խորհրդի 2003 թվականի հունիսի 17-ի «Քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում գրանցելու և կադրերի ռեզերվից հանելու կարգը սահմանելու մասին» 213-Ն որոշում: Մասնավորապես՝ սահմանվեցին քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում գրանցելու և

կադրերի ռեզերվից հանելու ընդհանուր դրույթները, կադրերի երկարաժամկետ և կարճաժամկետ ռեզերվներում գրանցվելու և ռեզերվից հանելու կարգերը:

ՀՀ Քաղաքացիական ծառայության խորհրդի 2004 թվականի մայիսի 31-ի «Ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը սահմանելու մասին» 436-Ն որոշում, սահմանվեց ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը:

ՀՀ Քաղաքացիական ծառայության խորհրդի 2006 թվականի հունիսի 26-ի «Քաղաքացիական ծառայողների վերապատրաստման, մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործման նպատակով գործուղելու կարգը սահմանելու մասին» 546-Ն որոշում: Մասնավորապես՝ որոշմամբ սահմանվեցին քաղաքացիական ծառայողների վերապատրաստման ընդհանուր դրույթները, քաղաքացիական ծառայողների պարտադիր վերապատրաստման ընթացակարգը, քաղաքացիական ծառայողի կամ աշխատակազմի ղեկավարի նախաձեռնությամբ վերապատրաստման ընթացակարգը, անցումային դրույթները, ինչպես նաև քաղաքացիական ծառայողների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործման նպատակով գործուղման կարգը:

ՀՀ Քաղաքացիական ծառայության խորհրդի 2007 թվականի մարտի 1-ի «Պետական և ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկությունների հետ առնչվող քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց հետ կապված քաղաքացիական ծառայության գործընթացների առանձնահատկությունները սահմանելու մասին» 204-Ն որոշում:

ՀՀ Քաղաքացիական ծառայության խորհրդի 2010 թվականի հոկտեմբերի 12-ի «Քաղաքացիական ծառայության կրտսեր պաշտոն զբաղեցնելու հավաստագիր ստանալու համար թեստավորում անցկացնելու և քաղաքացիական ծառայության կրտսեր թափուր պաշտոն զբաղեցնելու կարգը սահմանելու մասին» 818-Ն որոշում: Որոշմամբ սահմանվեցին քաղաքացիական ծառայության կրտսեր պաշտոն զբաղեցնելու հավաստագիր ստանալու համար թեստավորում անցկացնելու և քաղաքացիական ծառայության կրտսեր թափուր պաշտոն զբաղեցնելու ընդհանուր դրույթները, թեստավորում անցկացնելու մասին հայտարարության և նախապատրաստման աշխատանքների ընթացակարգը, մանդատային և թեստավորման հանձնաժողովների խնդիրները և լիազորությունները, թեստավորման անցկացման և արդյունքների ամփոփման կարգը, քաղաքացիական ծառայության կրտսեր թափուր պաշտոն զբաղեցնելու կարգը:

ՀՀ Քաղաքացիական ծառայության խորհրդի 2010 թվականի հոկտեմբերի 12-ի «Քաղաքացիական ծառայության կրտսեր պաշտոն զբաղեցնելու հավաստագիր ստանալու համար թեստավորմանը մասնակցելու վճարի չափը սահմանելու մասին» 819-Ն որոշում, որով սահմանվեց թեստավորմանը մասնակցելու վճարի չափը:

2011 թվականի մայիսի 26-ին Ազգային ժողովի կողմից ընդունված « Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը: Օրենքով սահմանվեցին Հայաստանի Հանրապետությունում հանրային ծառայության սկզբունքները, կազմակերպման

կարգը, էթիկայի կանոնները, ինչպես նաեւ կարգավորվեցին բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների ու փոխկապակցված անձանց մասին հայտարարագրման հետ կապված հարաբերությունները:

ՀՀ Քաղաքացիական ծառայության խորհրդի 2012 թվականի սեպտեմբերի 26-ի «Քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովների ձեվավորման, գործունեության կարգը եվ նրանց գործառույթները սահմանելու մասին» 844-Ն որոշում: Որոշմամբ սամանվեցին քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովների ձևավորման գործունեության կարգի և դրանց գործառույթների ընդհանուր դրույթները, հանձնաժողովի հիմնական խնդիրը և լիազորությունները, հանձնաժողովի քննարկմանը հարցեր ներկայացնելու կարգը, աշխատանքների կազմակերպման կարգը,

## ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

Հանրային կառավարման ոլորտի կառուցվածքային փոփոխությունների արդյունքների հիման վրա դրանք պայմանականորեն դիտարկվել են երկու փուլի շրջանակներում՝ 2000-2007թվականներ և 2008-2014թվականներ:

Նման պայմանական բաժանման հիմքում ընկած են այն խնդիրներն ու փոփոխությունները, որոնք իրականացվել են նշված ժամանակահատվածներում:

2000 թվականից սկսած հանրային կառավարման ոլորտում կառուցվածքային բարեփոխումների իրականացման համար հիմք հանդիսացավ 1999թվականի սեպտեմբերի 3-ի "Հայաստանի Հանրապետության պետական կառավարման համակարգի բարեփոխումների առաջնահերթ միջոցառումների մասին" որոշումը, որով առաջնահերթ միջոցառումների ցանկում սահմանվեցին պետական կառավարման համակարգի կառուցվածքային բարեփոխումների հայեցակարգի մշակման, ՀՀ կառավարության կառուցվածքը և գործունեության կարգը փոփոխելու, ըստ փոփոխությունների՝ նախարարություններում ու գերատեսչություններում նոր կազմակերպչական կառուցվածքների ներդրման, լիազորությունների սահմանման միջոցառումները[9]:

Հետևելով սահմանված առաջնահերթություններին՝ ՀՀ նախագահի 2000թվականի մայիսի 20-ի ՆՀ-577 հրամագրով փոփոխության ենթարկվեց և սահմանվեց ՀՀ կառավարության կառուցվածքը: Այդ կառուցվածքի համաձայն հաստատվեցին 18 նախարարություններ՝ 1) ազգային անվտանգության, 2) առողջապահության, 3) արդարադատության 4) արդյունաբերության և առևտրի, 5)արտաքին գործերի, 6) բնապահպանության, 7) գյուղատնտեսության, 8) էներգետիկայի, 9) կրթության և գիտության, 10) մշակույթի, երիտասարդության և սպորտի, 11) ներքին գործերի, 12) պաշտպանության, 13) պետական գույքի կառավարման, 14) պետական եկամուտների, 15) սոցիալական ապահովության, 16) տարածքային կառավարման և քաղաքաշինության գործունեությունը համակարգող, 17) տրանսպորտի և կապի, 18) ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունները[10]:

Այնուհետև 2000-2014 թվականների ընթացքում, ՀՀ կառավարության կառուցվածքում, մասնավորապես նախարարությունների վերակազմակերպման և վերանվանման, նախարարություններին կից կոմիտեների ստեղծման մասով տեղի ունեցան կառուցվածքային 16 փոփոխություններ, որոնցից 9-ը փոփոխությունը տեղի են ունեցել 2000-2007 թվականների ընթացքում, իսկ 2008-2014 թվականների ընթացքում՝7 փոփոխություններ:

2000-2007 թվականների ընթացթում նախարարությունների կառուցվածքային փոփոխությունների հիմնական մասը վերջիններիս գործունեության վերակազմակերպումն է: Այս ժամանակահատվածը կարելի է ընդհանրական կարգով բնութագրել որպես կառավարության կառուցվածքի և հիմնականում

[9] ՀՀ պետական կառավարման համակարգի բարեփոխումների առաջնահերթ միջոցառումների ցանկը հաստատելու մասին ՀՀ վարչապետի 2000 թվականի N 151 որոշում, http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=15393

[10] "ՀՀ կառավարության կառուցվածքում փոփոխություններ կատարելու մասին" ՀՀ Նախագահի 20 մայիսի 2000 թ. ՆՀ-577 Հրամանագիր

նախարարությունների գործունեության **<u>սահմանման և կառուցվածքի հստակեցման փուլ:</u>** Հարկ է նշել նաև, որ իրավական ակտերով՝ հիմնականում նախագահի հրամանագրերով, սահամանվող այդ փոփոխությունների համար հիմնավորումներ ներկայացված չեն: Այսինքն՝ հնարավոր չէ գնահատել, թե սահմանված կառուցվածքի և դրա գործունեության արդյունավետությունը և փոփոխությունների իրականացման անհրաժեշտությունը:

Այս փուլում իրականացված փոփոխությունների երկրորդ բնութագրական հատկանիշն այն է, որ նույն կառույցի կապակցությամբ մի քանի տարբեր տեսակի փոփոխություններ տեղի են ունեցել կարճ ընդմիջումներով, հետևաբար սահմանված նոր կարգով վերջինիս գործունեության արդյունավետության գնահատաման հնարավորությունը ևս խիստ փոքր է:

Օրինակ՝ 2002 թվականի նոյեմբերին պետական եկամուտների նախարարությունը վերակազմակերպվել է կոմիտեի, 2002թվականի դեկտեմբերին ազգային անվտանգության նախարարությունը և ներքին գործերի նախարարությունը վերացել են, 2003 թվականին վերացվել է պետական գույքի կառավարման նախարարությունը:

2005 թվականին արտակարգ իրավիճակների վարչությունը, միգրացիայի և փախստականների վարչությունը ջրային տնտեսության պետական կոմիտեն վերակազմակերպվել են տարածքային կառավարման նախարարության: 2007 թվականին մշակույթի և երիտասարադության հարցերի նախարարությունը վերանվանվել է ՀՀ մշակույթի նախարարության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտեն վերակազմակերպվել է ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության:

Այս նույն ժամանակահատվածում պետական կառավարման մարմինների շրջանում տեղի ունեցած փոփոխություններով որպես ՀՀ կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմիններ սահմանվել են ազգային անվտանգության ծառայությունը, հարկային պետական ծառայությունը, ՀՀ ոստիկանությունը և այլն:

Պայմանականորեն բաժանված փոփոխությունների երկրորդ փուլի՝ 2008-2014 թվականների իրականացված փոփոխությունների զգալի մասը՝ 5 փոփոխություն տեղի է ունեցել 2008 թվականին, իսկ երկուսը՝ համապատասխանաբար՝ 2013 թվականին և 2014 թվականին:

Մասնավորապես՝ էներգետիկայի նախարարությունը վերանվանվել է էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն, առևտրի և տնտեսական զարգացման նախարարությունը վերանվանվել է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության, ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը վերանվանվել է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության, ստեղծվել է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն:

Պետական կառավարման մարմինների կառուցվածքային փոփոխությունների համաձայն՝ ձևավորվել են կոմիտեներ, օրինակ՝ միջուկային անվտանգության

կարգավորման պետական կոմիտե, և հակառակը՝ կոմիտեները միավորվել են նախարարությունների հետ:

Պետական եկամուտների կոմիտեն միացվել է ֆինանսների նախարարությանը, ճարտարապետության պետական կոմիտեն միավորվել է քաղաքաշինության նախարարության հետ: Որպես կառուցվածքային փոփոխություն է ներկայացվել նաև կոմիտեների վերադասության փոփոխությունը, օրինակ՝ մաքսային և հարկային ծառայությունների վերադաս մարմինների ղեկավար է սահմանավել ֆինանսների նախարարը:

Այս փուլում իրականացված փոփոխությունների հիմնական մասը տեղի են ունեցել պետական կառավարման մարմինների առնչությամբ, ինչի հիման վրա կարելի է եզրակացնել, որ նախարարությունների գործունեությունը ամրապնդվել է և արդեն ավելի շատ անհրաժեշտություն է առաջացել օժանդակող մարմինների գործունեության կառուցվածքային փոփոխությունների համար:

2014 թվականին գործող ՀՀ կառավարության կառուցվածքի համաձայն՝ վերակազմակերպումներից և վերանվանումներից հետո սահմանված են 18 նախարարություններ՝ 1) տարածքային կառավարման, 2) աշխատանքի և սոցիալական հարցերի, 3) առողջապահության, 4) արդարադատության, 5) արտակարգ իրավիճակների 6) արտաքին գործերի, 7)բնապահպանության, 8) գյուղատնտեսության 9) էկոնոմիկայի, 10) էներգետիկայի և բնական պաշարների, 11) կրթության և գիտության, 12) մշակույթի, 13) պաշտպանության, 14) սպորտի և երիտասարդության հարցերի, 15) սփյուռքի, 16) տրանսպորտի և կապի, 17) քաղաքաշինության, 18) ֆինանսների նախարարությունները:

Գործում են ՀՀ կառավարությանն առնթեր 6 մարմիններ՝Ազգային անվտանգության ծառայություն, ՀՀ ոստիկանություն, Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե, Միջուկային անվտանգության պետական կոմիտե, Պետական գույքի կառավարման վարչություն, Քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն, ինչպես նաև 29 հանձնաժողովներ:

Սահմանված այս կառուցվածքի վերաբերյալ ևս հիմնավորումները բացակայում են, և գնահատման շրջանակներում դժվար է եզրակացնել, արդյոք սահմանված այս կառուցվածքը հնարավորություն է ընձեռում իրականացնել արդյունավետ հանրային կառավարում և երաշխավորել հանրային կառավարմանն առաջադրվող հիմնական սկզբունքների պահպանումը:

Սահմանված այս կառուցվածքին համապատասխան՝ ՀՀ նախագահի հրամանագրով կանոնակարգվում է ամբողջ կառավարության գործունեությունը: Այդ հրամանագրով սահմանվում են կառավարությանը վերապահված լիազորությունների իրականացման կազմակերպական հիմունքները, կառավարության գործունեության կազմակերպման, որոշումների ընդունման և դրանց կատարման կարգը:

ՀՀ կառավարության, այդ թվում նաև նախարարությունների, կոմիտեների գործունեությունը կանոնակարգվում է ՀՀ նախագահի 2007թվականի հուլիսի 18-ի ՆՀ-174-Ն հրամանագրով: Այդ հրամանագրով սահմանվել է նաև ՀՀ կառավարության և

նրան ենթակա պետական կառավարման մարմինների գործունեության կազմակերպման կարգը: Սահմանված կարգի համաձայն՝ նախարարությունները և կառավարությանն առընթեր պատական կառավարման մարմինները համարվում են հանրապետական գործադիր մարմիններ, որոնք առանձին բնագավառներում իրականացնում են կառավարության քաղաքականությունը:

## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

Համակարգի ստեղծման աշխատանքները սկսվել են 90-ականների վերջերին: Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) ստեղծվել է 2001 թվականի դեկտեմբերի 4-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված և 2002 թվականի հունվարի 9-ից ուժի մեջ մտած «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա:

Խորհուրդը ստեղծվել է պետական կառավարման համակարգի բարեփոխումների և հակակոռուպցիոն քաղաքականության արդյունքում՝ արդյունավետ, միասնական կադրային քաղաքականություն իրականացնելու, պետական ապարատը քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխությունից անկախ արհեստավարժ, բարոյական բարձր հատկանիշներով օժտված կադրերով համալրելու, քաղաքացիական ծառայողների իրավական պաշտպանվածությունն իրականացնելու և օրինական շահերը պաշտպանելու նպատակով[11]:

2002 թվականին խորհրդի աշխատակազմի ձևավորմամբ սկսվել է ՀՀ քաղաքացիական ծառայության համակարգի կառուցումը: Խորհուրդն իրականացնում է քաղաքացիական ծառայության ոլորտում կադրային գործի վարման մեթոդական ղեկավարումը և վերահսկողությունը, վարում է քաղաքացիական ծառայության և քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնների անվանացանկերը, քաղաքացիական ծառայողների գրանցամատյանը և քաղաքացիական ծառայության կրտսեր թափուր պաշտոն զբաղեցնելու գործող հավաստագիր ունեցող քաղաքացիների ցանկը: Մշակում և իրականացնում է քաղաքականությունը քաղաքացիական ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու մրցույթային, քաղաքացիական ծառայության կրտսեր պաշտոն զբաղեցնելու հավաստագրման, քաղաքացիական ծառայողների պարտադիր վերապատրաստման և ատեստավորման ոլորտներում: Վարում է կադրերի երկարաժամկետ և կարճաժամկետ ռեզերվները, համակարգում է ժամանակավոր թափուր պաշտոնների զբաղեցման, այդ նպատակով ժամկետային աշխատանքային պայմանագրեր կնքելու գործընթացները, սահմանում է քաղաքացիական

[11] http://www.csc.am/%D5%B4%D5%A5%D6%80-%D5%B4%D5%A1%D5%BD%D5%AB%D5%B6

ծառայողների էթիկայի կանոնները և էթիկայի հանձնաժողովների ձևավորման, գործունեության կարգը, գործառույթները[12]:

Խորհրդի իրավասության շրջանակներում է քաղաքացիական ծառայողներին կարգապահական տույժերի ենթարկելու հետ կապված ծառայողական քննությունների անցկացումը, քաղաքացիական ծառայողներին զբաղեցրած պաշտոնից ազատելուն կամ դրան հանգեցնող տույժ կիրառելուն համաձայնություն տալը: Խորհրդի գործառույթներից է նաև 65 տարին լրանալու դեպքում քաղաքացիական ծառայողի՝ մինչև մեկ տարի ժամկետով պաշտոնավարումը շարունակելուն սահմանված կարգով համաձայնություն տալը: 2002 թվականի հունվարին ՀՀ Նախագահի համապատասխան հրամանագրերով նշանակումներ կատարվեցին ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահի, նախագահի տեղակալի և Խորհրդի 5 անդամների պաշտոններում: 2002 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհուրդը ձևավորեց իր աշխատակազմի հիմնական կորիզը և ՀՀ Նախագահի՝ սահմանած ժամանակացույցին համապատասխան, մշակեց և ընդունեց «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի գործարկումն ապահովող հիմնական ենթաօրենսդրական ակտերը:

2002 թվականի առաջին ութ ամսվա ընթացքում հստակեցվեց և հաստատվեց քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը:

2002 թվականի հոկտեմբերին Հայաստանում առաջին անգամ անցկացվեցին քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնների զբաղեցման մրցույթներ: Առաջինը համալրվեց Խորհրդի աշխատակազմը: 2002 թվականի նոյեմբերի 1-ից անվանացանկում ընդգրկված պաշտոններն զբաղեցնողներն օրենքի ուժով համարվեցին քաղաքացիական ծառայողներ, համալրվեցին քաղաքացիական ծառայության համակարգում ընդգրկված մարմինների աշխատակազմերի ղեկավարների պաշտոնները, որով ավարտվեց համակարգի ղեկավարման ու կազմակերպման մարմինների ձևավորումը:

Սկզբնական շրջանում համակարգում ընդգրկված էր 41 պետական մարմին, քաղաքացիական ծառայության 7297 պաշտոններով: 2003-ից հանրապետության 14 ԲՈՒՀ-երի ներգրավմամբ մեկնարկեց քաղաքացիական ծառայողների վերապատրաստման առաջին եռամյա շրջանը՝ դրանով դրվեց պետական ծառայողների հետևողական, պարտադիր ուսուցման հիմքը: Վերապատրաստված քաղաքացիական ծառայողներն այնուհետև ատեստավորվում էին հավաստելով զբաղեցրած պաշտոններին իրենց համապատասխանությունը:

Ներկայումս ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդը կազմված է յոթ անդամից՝ նախագահ, նախագահի տեղակալ և հինգ անդամ: Խորհրդի ընթացիկ գործունեությունը ղեկավարում և համակարգում է Խորհրդի նախագահը: Քաղաքացիական ծառայության խորհրդի անդամները պաշտոնի են նշանակվում և ազատվում ՀՀ Նախագահի կողմից՝ ՀՀ վարչապետի ներկայացմամբ: Խորհրդի

---

[12] Տե՛ս նույն տեղում:

անդամները, բացառությամբ քաղաքացիական ծառայության խորհրդի առաջին կազմի, նշանակվում են վեց տարի ժամկետով:Գործառույթները Խորհուրդն իրականացնում է իր աշխատակազմի միջոցով, որում ներառված են կառուցվածքային ստորաբաժանումները և Խորհրդի նախագահի գրասենյակը:

2003 թվականից սկսեցին գործել նաև քաղաքացիական ծառայության կադրերի կարճաժամկետ և երկարաժամկետ ռեզերվները, ժամանակավոր թափուր պաշտոնների զբաղեցման գործընթացը դարձավ հնարավորինս անկողմնակալ ու թափանցիկ: Գործընթացներն ամբողջությամբ եղել են հրապարակային՝ բաց հասարակության և լրատվամիջոցների առջև:

2003 թվականից գործում է քաղաքացիական ծառայություն շաբաթաթերթը, 2004-ից՝ խորհրդի կայքը:

«Քաղաքացիական ծառայության մասին» օրենքը մի քանի անգամ փոփոխվել է:

Մրցութային ատեստավորման հանձնաժողովների անդամների քվեարկությունը դարձել է բաց, հարցազրույցները սկսել են անցկացվել համակարգչի կողմից առաջադրվող հարցերի միջոցով: Մրցույթի մասնակիցների և ատեստավորվող քաղաքացիական ծառայողների համար ստեղծվել է բողոքարկման նոր ինստիտուտ: Ատեստավորումներից շարունակաբար խուսափողներին զբաղեցրած պաշտոններից ազատելու հիմքեր են նախատեսվել: Զուգահեռ վերահսկվում էր քաղ ծառայողների անձնական գործերի վարման, օրենսդրության պահանջների կատարման ընթացքը: Անընդհատ ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվում էին խախտումներ որոնց մի մասի հետ կապված գործերն ուղարկվել են իրավապահ մարմիններին:

Խորհուրդը պարբերաբար հանդիպում է քաղաքացիական ծառայողների հետ նաև մարզային այցելությունների միջոցով:

Խորհուրդը գործակցում է նաև տարբեր հասարակական կազմակերպությունների հետ:

2008-2014 թվականի հիմնական արդյունքները

- ✓ 2009 թվականի նոյեմբերին Եվրամիության և Տնտեսական համագործակցության ու զարգացման կազմակերպության (OECD) SIGMA ծրագրի հետ համագործակցության շնորհիվ SIGMA-ի փորձագետների խումբն ուսումնասիրեց Հայաստանի քաղաքացիական ծառայության համակարգը, ԵՄ չափորոշիչներին կառույցի համապատասխանության մակարդակը: Արդյունքները հրապարակվեցին 2010 թվականին և ներկայացվեցին արժեքավոր առաջարկություններ, որոնք ընկան քաղաքացիական ծառայության զարգացման հայեցակարգի մշակման հիմքում:
- ✓ 2010 թվականին մշակվեց քաղաքացիական ծառայության մրցութային, ատեստավորման և վերապատրաստման ոլորտներում զարգացման ռազմավարությունը, որն ամրագրում է համակարգում գիտելիքների,

կարողությունների և արժեքների գնահատման հիման վրա համալրման իրականացումը:

- ✓ 2010 թվականին օրենսդրական փոփոխություններով ներդրվեց քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնների զբաղեցման մրցույթների հարցազրույցների գնահատման բալային համակարգը, սահմանափակվեց մրցույթում հաղթողների շրջանակը: Կրտսեր թափուր պաշտոնների համար անցկացվող մրցույթները փոխարինվեցին հավաստագրման թեստավորումներով:
- ✓ Խորհրդի մշակած նախագծի հիման վրա՝ 2011 թվականին ընդունվեց «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը, որով հակակոռուպցիոն բնույթի նոր ինստիտուտներ ներդրվեցին ոչ միայն քաղաքացիական, այլև առհասարակ պետական և համայնքային ծառայություններում: Սահմանվեցին քաղաքական, հայեցողական և հանրային ծառայողների վարքագծի և շահերի բախման կանոնակարգման միասնական սկզբունքներ:
- ✓ Խորհրդի ղեկավարման և կազմակերպչական կարողությունները զգալիորեն մեծացան Համաշխարհային բանկի «Պետական հատվածի արդիականացում» ծրագրի քաղաքացիական ծառայության բաղադրիչի շրջանակներում մշակված և ներդրված էլեկտրոնային «Մարդկային ռեսուրսների կառավարման տեղեկատվական համակարգ»-ի շնորհիվ՝ հնարավոր դարձնելով մարդկային ռեսուրսների կենտրոնացված և համալիր կառավարումն առավելագույն օպերատիվությամբ:
- ✓ 2010 թվականից միջազգային կազմակերպությունների և հատկապես ԵՄ անդամ պետությունների համանման կառույցների հետ համագործակցության խորացումն ու ընդլայնումը դրվեց նոր մակարդակի վրա: Հայաստանը միացավ պետական ծառայության միջազգային ոչ ֆորմալ ցանցին: Իսկ 2011 թվականին Երևանում կայացավ «Մասնագիտությունը հեռանկարում» միջազգային ամենամյա հերթական համաժողովը՝ թվով 14 երկրների պատվիրակների մասնակցությամբ: Համաժողովի հիմնական նպատակն էր քննարկել քաղաքացիական ծառայության համակարգում իրականացվող բարեփոխումների արդյունավետությունը:

2008-2014 թ. Քաղաքացիական ծառայության խորհրդի հաշվետվությունների ընդհրացված արդյունքները:

- ✓ Քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկերի հստակեցում
- ✓ Քաղաքացիական ծառայության պաշտոնների նոր անձնագրերի տրամադրում
- ✓ Քաղաքացիական ծառայողների գրանցամատյանների վարում
- ✓ Քաղաքացիական ծառայողների թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթների հայտարարում, կազմակերպում և անկացում, ինչպես նաև խորհրդի ներկայացուցիչների միջոցով մասնակցություն մրցութային հանձնաժողովների և ատեստավորման աշխատանքներին

- ✓ Քաղաքացիների մասնակցության ապահովվում կրտսեր պաշտոն զբաղեցնելու հավաստագիր ստանալու թեստավորմանը, հավաստագիրների տրամադրում
- ✓ Քաղաքացիական ծառայողների թափուր պաշտոնների մրցույթների հետ կապված բողոքների քննություն
- ✓ Վերապատրաստման ծրագրերի հաստատում՝ ըստ քաղաքացիական ծառայողների պաշտոնների խմբերի, ինչպես նաև լրացումներ և փոփոխություններ կատարել նախկինում գործող ծրագրերում
- ✓ Վերապատրաստողների ընդգրկում քաղաքացիական ծառայողների վերապատրաստման գործընթացում
- ✓ Յուրաքանչյուր տարի միջինը 2153 քաղաքացիական ծառայողի վերապատրաստում
- ✓ Քաղաքացիական ծառայության կարճաժամկետ և երկարաժամկետ ռեզերվներում քաղաքացիական ծառայողների գրանցում և այդ ռեզերվներից քաղաքացիական ծառայողների հանում
- ✓ Ժամկետային աշխատանքային պայմանագրով քաղաքացիական ծառայությանժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնելու համար կարճաժամկետ և երկարաժամկետ ռեզերվներում գրանցված թեկնածուների ներկայացում
- ✓ քաղաքացիական ծառայողի մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործման նպատակով մեկ տարուց ավելի ժամկետով գործուղումների կազմակերպում
- ✓ 65 տարին լրացած քաղաքացիական ծառայողների աշխատանքի երկարաձգում մեկ տարի ժամկետով
- ✓ Քաղաքացիական ծառայողի նկատմամբ պաշտոնից ազատման կամ պաշտոնից ազատման հանգեցնող կարգապահական տույժի կիրառություն
- ✓ Քաղաքացիական ծառայողների համակարգի տարբեր մարմիններում տարբեր ուսումնասիրությունների կատարում
- ✓ Ծառակողական քննությունների անցկացում
- ✓ կատարված ուսումնասիրությունների և ծառայողական քննությունների արդյունքների վերաբերյալ համապատասխան միջնորդությունների ներկայացում իրավասու մարմիններին
- ✓ դատական գործընթացներին ներգրավվածություն քաղաքացիական ծառայության հարցերով
- ✓ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի լրամշակում, առաջարկությունների ներկայացում
- ✓ Մի շարք անհատական և նորմատիվ որոշումների ընդունում
- ✓ Ըստ անհրաժեշտության քաղաքացիական ծառայության համակարգի մարմիններին գրավոր և բանավոր մեթոդական պարզաբանումների, ուղեցույցերի, սեմինար-խորհրդակցությունների տրամադրում

- ✓ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի կառավարման գործառույթների իրականացում

## ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՈՒՄ

Մալբերրին աշխատանքային գործընթացը կառավարող համընդհանուր համակարգչային ծրագիր է, որը է թույլ է տալիս փաստաթղթաշրջանառությունը իրականացնել բացառապես էլեկտրոնային եղանակով և վերահսկել փաստաթղթերի շարժը բոլոր փուլերում, ապահովում է փաստաթղթային աշխատանքի միասնական ձևը: Այս հասարակ և միևնույն ժամանակ բազմաֆունկցիոնալ համակարգը թույլ է տալիս հեշտությամբ կառավարել փաստաթղթաշրջանառությունը տարբեր համակարգերի միջև համացանցի միջոցով:Համակարգը հնարավորություն է տալիս վերահսկելի դարձնել աշխատակազմի գործունեությունը: Համակարգի միջոցով պետական մարմնի համապատասխան ներկայացուցիչները քաղաքացու դիմում-հարցումը՝ էլեկտրոնային տարբերակով ներբեռնում են համակարգիչ: Դիմումի ներբեռնումից անմիջապես հետո քաղաքացին գրավոր կերպով ծանուցվում իր դիմումի պատասխանի ժամկետների վերաբերյալ, քանի որ պետական պաշտոնյան, որին ուղղված է եղել դիմում-հարցումը, դրանից անմիջապես հետո ստանում է համապատասխան ծանուցում դիմումին պատասխանելու վերջնաժամկետի վերաբերյալ: Վերոնշյալ գործընթացը վերահսկելու նպատակով այն բոլոր պետական մարմիններում, որտեղ գործում է «Մալբերրի» համակարգը, գործում են վերահսկողություն իրականացնող մարմիններ: Վերջիններս յուրաքանչյուր օրվա գրանցված արդյունքներով ստուգում են պետական պաշտոնյաների աշխատանքային գործունեությունը: Այս համակարգում տեղեկատվության փոխանակումը հիմնականում կատարվում է պետական կառավարման մարմինների միջև: Այն քաղաքացիներին հասանելի չէ և որևէ տեղեկատվություն կամ էլեկտրոնային փաստաթուղթ չի տրամադրում: Այն անհրաժեշտ է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունն ու աշխատանքն ավելի լավ և արագ կերպով կազմակերպելու համար:

Մալբերրի համակարգչային ծրագիրը կրճատում է պատասխանի ժամանակահատվածը: Պատասխանի համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը գտնվում են համակարգի էլեկտրոնային արխիվում եւ դրանք գտնելն ու տրամադրելը բավականին դյուրին խնդիր է:

Մալբերրի համակարգչային ծրագիրը Հայաստանում ներդրվել է դեռևս 2005 թվականից Արտաքին գործերի նախարարությունում՝ համաձայն «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի և ՀՀ

կառավարության 2005թ որոշման: Մինչդեռ համակարգի ներդրման աշխատանքները պետական կառավարման մարմիններում մեկնարկել են 2008 թվականից:

2009 թվականից սկսած ՀՀ տարածքային կառավարման նախարարության աշխատակազմում փաստաթղթաշրջանառությունն իրականացվել է «Մալբերրի» համակարգով: 2009 թվականի ընթացքում տարածքային կառավարման նախարարություն ստացվել, մշակվել և «Մալբերրի» համակարգի միջոցով գրանցվել է 14131 մտից փաստաթուղթ, որից դիմումներ քաղաքացիներից՝ 653, գրություններ քաղաքացիների դիմումների հիմքով՝ 539, գրություններ՝ 10000, այլ գրություններ(որոշումներ, քաղվածքներ, արձանագրություններ)՝ 2939: Նույն ժամանակահատվածում իրականացվել է 7429 ելից փաստաթղթերի առաքում[13]: Արդեն 2014 թվականին նույն նախարարությունում ստացվել, մշակվել և «Մալբերրի» համակարգի միջոցով գրանցվել է 20121 մտից փաստաթուղթ, միաժամանակ ելից է եղել 8363 գրություն[14]:

Ներկայումս Մալբերրին հաջողությամբ գործարկվում է ՀՀ կառավարության աշխատակազմում, ՀՀ բոլոր նախարարություններում և բոլոր մարզերում: ՀՀ բոլոր 48 քաղաքային վարչական մարմիններում, ինչպես նաև 309 գյուղապետարաններում ներդրվել է Մալբերրի էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգը: Այս համակրգը պետական կառավարման մարմիններին հնարավորություն է տալիս էլեկտրոնային փաստաթղթեր փոխանակել այն բոլոր համայնքերի հետ, որոնցում ներդրված է Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգը: Տեղեկատվական այս համակարգը շահագործող համայնքների թիվը տարեցտարի աճում է, սակայն ՀՀ տարածքային կառավարման նախարարության վերջին 3 տարիների տարեկան հաշվետություններում ներկայացված թվերում առկա են որոշակի անհապատասխանություններ[15] (Տե՛ս ստորև ներկայացվող աղյուսակում): 2014 թվականի հաշվետվության տվյալներով 2015 թվականի սկզբին ՀՀ 586 համայքներում արդեն շահագործվում է Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգը, մինչդեռ համաձայն հաշվետվության այդ թիվը պետք է լիներ 576, այսինքն՝ 10-ով պակաս:

| Տարեթիվ | Նախորդ տարվա տվյալներով համակարգը | Համակարգը շահագործող համայնքների | Համակարգը շահագործող համայնքների |
|---|---|---|---|

[13] ՀՀ տարածքային կառավարման նախարարության 2009 թվականի գործունեության հաշվետվություն, Երևան, 2010 թ., էջ 2 - http://www.mtaes.am/files/docs/58.pdf
[14] ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության 2014 թվականի գործունեության հաշվետվություն (նախկին ՀՀ տարածքային կառավարման նախարարության գործունեության բնագավառի վերաբերյալ), Երևան, 2015 թ. - http://www.mtaes.am/files/docs/942.pdf
[15] նախորդ տարվա համայնքների թիվը գումարում ենք ավելացված համայնքների թվին, ստանանում ենք ոչ այն թիվը որը ներկայացված է հաշվետվությունում:

| | շահագործող համայնքների թիվը | ավելացումը տվյալ տարում | թիվը հաջորդող տարում |
|---|---|---|---|
| 2012 | 241[16] | 98 | 339 |
| 2013 | 339 | 153 | 496 |
| 2014 | 496 | 80 | 586 |

Համակարգի ներդրման համար պետական բյուջեի միջոցներ չեն օգտագործվել: Ծրագիրը ներդրվել է համայնքների և Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն ՀԿ-ի միջև կնքված պայմանագրերի շրջանակներում: Ծրագիրն և համակարգչային տեխնիկայի մի մասը համայնքներին տրամադրվել է միջազգային կազմակերպությունների կողմից իրականացված ծրագրերի շրջանակներում(Համաշխարհային բանկ, GIZ և այլն):

**Կարգավորման «Guillotine» ծրագիր**

2011 թ. նոյեմբերի 3-ին Հայաստանում «կարգավորիչ գիլյոտինի» ծրագիրն իրականացնելու մտադրությունների մասին հուշագիր է ստորագրվել ԵԱՀԿ, Հայաստանի կառավարության, «Զարգացման ավստրիական գործակալության», ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության  Համաշխարհային բանկի և ՄԱԶԾ (ՄԱԿ-ի համընդհանուր զարգացման ցանց) միջև:

Այս ծրագիրն կիրառվում է տնտեսության մեջ գործարարության զարգացման և ներդրումային դաշտի բարելավմանը ուղղված պայմանների ստեղծման համար «: Կարգավորիչ գիլյոտինի միջոցով իրականացվում է բիզնես միջավայրին առնչվող նորմատիվ-իրավական ակտերի ամենաարագ ամփոփումը. «այն արագ կերպով ուսումնասիրում է առկա իրավական ակտերի հսկա բազան և որոշում տնտեսապես անաարդյունավետները կարճաժամկետ և երկրաժամկետ հեռանկարների համար: Ցանկացած իրավական տեսանկյունից չհիմնավորված և ոչ անհրաժեշտ կարգավորում ծրագրի կիրառումից անմիջապես հետո վերացվում է: իսկ այն բոլոր կարգավորումները որոնք իրավական տեսնակյունից հիմնավորված են և անհրաժեշտ, սակայն խոչընդոտում են գործարար միջավայրի բարելավմանը, պարզեցվում են:

Նորմատիվ-իրավական ակտերի այս մշակման գաղափարը մշակվել է Շվեդիայում 1980-ականներինԿարգավորիչ գիլյոտինն աշխարհի տարբեր երկրներում ունի լայն կիրառություն՝ Իտալիայում, Մեքսիկայում, Հարավային Կորեայում, Հունգարիայում, Քենիայում, Մոլդովայում, Տաջիկստանում և այլն: Կարգավորիչ գիլյոտինի կիրառման արդյունքում պարզեցվել են 25000 օրենքներ և կարգավորումներ վերոնշյալ երկներում՝ կրճատելով գործարարությամբ զբաղվելու ծախսերը տարեկան 8 միլիարդ

[16] Քանի որ նախարարության 2011 թվականի գործունեության հաշվետվության մեջ չկար համայքների թիվը, մենք մաթեմատիկական պարզ հաշվարկով ստացել ենք 2011 թվականի ընթացքում համակարգը շահագործող համայնքների թիվը

դոլարով: Մանսավորապես՝ Խոշորագույն տնտեսությամբ աշխարհում 11-րդ տեղը զբաղեցնող Հարավային Կորեայում Կարգավորիչ գիլյոտինի կիրառման արդյունքում 11 ամսում վերանայվել 11.000 կարգավորում և դրանցից 50 տոկոսը վերացվել են՝ հնարավորություն տալով ստեղծելու 1 միլիոնից ավել աշխատատեղ, ինչպես նաև 36 միլիարդ դոլարի օտարերկրյա ուղղակի ներդրում է իրականացվել շնորհիվ գործարար միջավայրի ընթացակարգերի պարզեցման և անհրաժեշտ ծախսերի կրճատման[17]:

«Կարգավորիչ գիլյոտինի» իրականացման ծրագիրը ներկայացրել է ՀՀ Կառավարությունը: Հրավիրվել կարգավորման բարեփոխումների միջազգային առաջատար փորձագետ՝ Հայաստանի գործարար միջավայրն գնահատելու ու առավել արդյունավետ պետական կարգավորման համակարգ ստեղծելու գործիքների մշակմանը աջակցելու համար: Գնահատման համաձայն, բազմաթիվ հնացած ու հակասական իրավական ակտեր(շուրջ 26.000)խոչընդոտում էին գործարարության զարգացմանը Հայաստանում և պարզեցման կարիք ունեին:

Այս նպատակով ՀՀ Նախագահի՝ 2011թ. սեպտեմբերի 17-ի ՆՀ-246-Ն հրամանագրով ստեղծվել է Տնտեսական գործունեության պետական կարգավորման արդյունավետության բարձրացման միջոցառումների համակարգման եւ Հայաստանի Հանրապետության տնտեսական ոլորտը կարգավորող իրավական ակտերի բարեփոխումների խորհուրդը: Խորհրդի նախագահը ՀՀ վարչապետն է: Խորհրդի կազմում են ՀՀ Նախագահի գլխավոր խորհրդականը, ՀՀ արդարադատության նախարարը, ՀՀ էկոնոմիկայի նախարարը եւ ՀՀ ֆինանսների նախարարը: Նույն հրամանով նախանշվել է բարեփոխումների 17 ոլորտ: Դրանք են՝

1. Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման ոլորտ
2. Գյուղատնտեսության և ջրային տնտեսության կառավարման ոլորտ
3. Մշակույթի, առողջապահության, սոցիալական հարցերի, կրթության և գիտության ոլորտ
4. Ձեռնարկատիրական, ֆինանսական, հարկային և մաքսային ոլորտ
5. Արտակարգ իրավիճակների ոլորտ
6. Էներգետիկայի, բնական պաշարների, բնապահպանության ոլորտ
7. Արտաքին գործերի և միջազգային հարաբերությունների ոլորտ
8. Իրավապահ մարմինների և արդարադատության ոլորտ
9. Սպորտի և երիտասարդության հարցերի ոլորտ
10. Տրանսպորտի և կապի ոլորտ
11. Քաղաքաշինության ոլորտ
12. Քաղաքացիական ավիացիայի ոլորտ
13. Հողային հարաբերությունների և անշարժ գույքի կադաստրի ոլորտ
14. Պետական գույքի կառավարման ոլորտ
15. Ֆինանսական շուկաների ոլորտ

[17] Հարավային Կորեայի, ինչպես նաև այլ երկրների գրանցած արդյունքներն ներկայացված են հետևալ կայքում՝ http://regulatoryreform.com/regulatory-guillotine/

16. Հանրային ծառայությունների կարգավորման ոլորտ

17. Տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտ:

ՀՀ կառավարության՝ 2011թ. հոկտեմբերի 13-ի N 1462-Ն որոշմամբ ստեղծվեց «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը: Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոնի նպատակն է էականորեն թեթեւացնել բիզնեսի եւ քաղաքացիների վրա ընկնող կարգավորումների բեռը՝ առնվազն երկու անգամ կրճատելով գործառնական ծախսերը[18]:

Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոնն իր գործունեությունը սկսել է 2012 թվականի մայիսից: Գործունեության 2 տարիների ընթացքում կենտրոնը Կարգավորիչ գիլյոտին ծրագրի միջոցով ուսումնասիրել է 9 ոլորտ, որի արդյունքում խնայվել է մոտ 44 միլիոն եվրո: Մասնավորապես՝ վերանայվել են մարդատար տաքսիների, կանոնավոր ուղեւորափոխադրումների եւ բեռնափոխադրումների օրենսդրական կարգավորումները, որի արդյունքում էապես պարզեցվել են տաքսի ծառայությունների հիմնման և գործունեության հետ կապված գործընթացները՝ կրճատվել են մի շարք տեղեկանքներ և քայլեր, որոնք մինչ այդ տաքսի ծառայությունը պարտավոր էր իրականացնել լիցենզիա ստանալու և գործունեություն ծավալելու համար: Փոփոխություններ են կատարվել նաև բեռնափոխադրումների ոլորտում[19]: Քննարկման փուլում են հարկային ոլորտին վերաբերող բարեփոխումները: Կենտրոնի կողմից կառավարությանն առաջարկվել է ՀՀ օրենքով ֆիզիկական անձանց, այդ թվում անհատ ձեռնարկատերերի կողմից իրականացվող գործունեության որոշ տեսակների համար գործող պետական հարկի փոխարեն սահմանել տեղական արտոնագրային հարկ, ինչպես նաև ձեռնարկատիրական արտոնագիրը վճարողի ցանկությամբ այսուհետ տրամադրել նաեւ մեկից հինգ տարի ժամկետներով՝ ի լրումն ներկայումս գործող՝ տարվա ընթացքում ընտրված մեկ կամ մի քանի ամիսների համար արտոնագրի ձեռքբերման տարբերակի, եւ համապատասխանաբար զեղչային համակարգ կիրառել: Միաժամանակ անձը կազատվի լրավճար կատարելու պարտականությունից, եթե արտոնագիրը ստանալուց հետո օրենսդրական փոփոխությունների արդյունքում արտոնագրային հարկի կամ արտոնագրային վճարի չափն ավելանա[20]: Բարելավվում են աշխատանքային իրավահարաբերությունների, բնապահպանության եւ բնօգտագործման ոլորտներին վերաբերող օրենսդրական կարգավորումները: Եվս 20 ոլորտների ուսումնասիրությունը կենտրոն նախատեսում է ավարտել 2015 թվականի հունիսին:

Գործարկվել է նաև http://www.e-guillotine.am/ կայքը, որը հնարավորություն է տալիս բոլոր շահագրգիռ անձանց անմիջականորեն մասնակցել բարեփոխումների գործընթացին փոփոխման ենթակա օրենքների վերաբերյալ առցանց առաջարկներ ու մեկնաբանություններ կատարելով:

---

[18] http://www.regulations.am/am/national-centre-for-legislative-regulation#sthash.Ey4I7K1g.dpuf

[19] http://www.ogp.am/hy/commitment1.2/

[20] http://www.regulations.am/am/news/show/208/65#sthash.vYLwQA8l.dpuf

Ծրագրի հեղինակները նախատեսում են ծրագրի ավարտական փուլում Կարգավորիչ գիլյոտինի միջոցով իրականացված խնայողությունները հասցնել 150 միլիոն եվրոյի։

## ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ և ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Եթե փորձենք առանձնացնել և համակարգել այն հիմնական սկզբունքները, որոնք ընկած են Արևմտյան Եվրոպայի երկրներում իրականացված հանրային կառավարման բարեփոխումների հիմքում, ապա կարելի է տարբերակել սկզբունքների հետևյալ 4 հիմնական խմբերը՝

1. Կանխատեսելիություն և վստահելիություն
2. Թափանցիկություն և հրապարակայնություն
3. Հաշվետվողականություն
4. Արդյունավետություն

Հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել են ՀՀ կառավարության 2008-2013 թվականների ծրագրերը, 2011-2013 թվականների գործունեության միջոցառումների ծրագրերը և գերակա խնդիրները։ Առանձնացվել են այն բոլոր միջոցառումները, որոնք վերաբերում են հանրային կառավարման ոլորտի բարեփոխումներին։

Վերը թվարկված սկզբունքների խմբերի հիման վրա կազմվել է մեկ միասնական աղյուսակ, որտեղ յուրաքանչյուր սկզբունքների խումբ ունի առանձին բաժին։ Այդ բաժիններն էլ ունեն հետևյալ 5 ենթաբաժինները՝

1. Նպատակ և խնդիրներ
2. Գործողություններ և ժամկետներ
3. Ակնկալվող արդյունքներ
4. Առկա արդյունքներ
5. Գնահատականներ

Ընդհանուր առմամբ 2008-2013 թվականները ընկած ժամանակահատվածում հանրային կառավարման բարեփոխումներին վերաբերող թվով 109 միջոցառում է իրականացվել։ Այդ միջոցառումները դասակարգվել են 4 սկզբունքների խմբերի բաժիններում։ Կանխատեսելիություն ու վստահելիությանն ուղղված 14 միջոցառում է իրականացվել, որոնցից ոչ մեկի պարագայում արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն չկա։ Թափանցիկության և հրապարակայնությանն ուղղված 23 միջոցառում է իրականացվել, որոնցից ընդհամենը 4-ի դեպքում արդյունքների վերաբարյալ տվյալներ կան։ Հաշվետվողականությանն ուղղված իրականացվել է 7 միջոցառում, որոնցից մեկի արդյունքների վերաբերյալ կա տեղեկատվություն, մնացածինը՝ ոչ։ Արդյունավետությանն ուղղված միջոցառումները եղել են թվով

ամենաշատը՝ 43 միջոցառում: Դրանցից ընդհամենը 7-ի արդյունքների վերաբերյալ արդյունքներ կան:

Ստորև ներկայացնում ենք այն միջոցառումները, որոնք իրականացվել են հանրային կառավարման ոլորտի բարեփոխումների շրջանակներում, ըստ հանրային կառավարման ոլորտի սկզբունքների համապատասխանելիության:

**Աղյուսակ 1**

| | Միջոցառումների քանակը | | Կրկնվող միջոցառումների քանակը |
|---|---|---|---|
| **Կանխատեսելիություն և վստահելիություն** | 1 | ՀՀ կառավարության 2011թ. ծրագիր | |
| **Թափանցիկություն և հրապարակայնություն** | 8 | ՀՀ կառավարության 2008-2012 թթ. ծրագիր<br>2007-2011 թվականների ՀՀ կառավարության գործունեության արդյունքներ<br>ՀՀ կառավարության 2012,2013 թ. ծրագիր<br>ՀՀ կառավարության 2011,2012, 2013 թ. գործունեության միջոցառումների ծրագրեր գերակա խնդիրներ | |
| **Հաշվետվողականություն** | 2 | ՀՀ կառավարության 2012 թ. ծրագիր<br>ՀՀ կառավարության 2012թ. գործունեության միջոցառումների ծրագիր գերակա խնդիրներ | |
| **Արդյունավետություն** | 43 | ՀՀ կառավարության 2008-2012 թթ. ծրագիր<br>ՀՀ կառավարության 2012,2013 թ. ծրագիր<br>ՀՀ կառավարության 2011,2012, 2013 թ. գործունեության միջոցառումների | |

| | | | |
|---|---|---|---|
| | | ծրագրեր գերակա խնդիրներ | |

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ

Հետազության շրջանակներում ուսումնասիրվել են Հայաստանին վերաբերող բոլոր այն միջազգային զեկույցները, որոնցում հանրային կառավարման ոլորտի վերաբերյալ գնահատականներ կան: Ուսումնասիրվել են Թրանսփարենսի Ինթերնեշնլի, Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնների ծրագրի, Համընդհանուր բարեվարքության (The Global Integrity), Արևելյան գործընկերության էստոնական կենտրոնի և այլ կազմկերությունների զեկույցները և դրանցում առկա գնահատականները

Համաձայն Թրանսփարենսի Ինթերնեշնլի 2013 թ. Կոռուպցիայի համաշխարհային բարոմետրի անցկացրած հարցման՝ հարցմանը մասնակիցների 70 տոկոսը կարծում է, որ հանրային կառավարման ոլորտի պաշտոնյաները կոռուպացված են կամ չափազանց կոռուպացված են[21]:

Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնների ծրագրի շրջանակներում իրականացված Կոռուպցիան Հայաստանում. Տնային տնտեսությունների 2010թ. հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ հետազոտության շրջանակներում անցկացված հարցման մասնակիցների մեծամասնությունը կարծում է, որ հանրային կառավարման գրեթե բոլոր մարմինները մեծամասամբ կամ որոշ չափով կոռուպացված են (նախարարություններ՝ 68 %, տարածքային կառավարման մարմիններ՝ 66 %, տեղական ինքնակառավարման մարմիններ՝ 62 %): Բացառություն են կազմել միայն Քաղաքացիական ծառայության խորհուրդը և Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը: Երկուսի դեպքում էլ հարցված մասնակիցների 52 տոկոսը չի կարողացել պատասխանել կամ հրաժարվել է պատասխանելուց: Սակայն սրանց դեպքում էլ հարցվածների մի զգալի մասը կարծում է, որ Քաղաքացիական ծառայության խորհուրդը և Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը կառուպացված են(համապատասխանաբար՝ 40 % և 41 %)[22]:

Հարցվածները նաև պատասխանել են այն հարցին, թե պետական կառավարման պաշտոնյաների ո՞ր մակարդակում է կոռուպցիան առավել բարձր: հարցվածները գրեթե կեսը՝ 49 %-ը գտնում է, որ առավելապես կոռուպացված են բարձրաստիճան պաշտոնյաները, 26 %-ը կարծում է, որ կոռուպցիան առավել տարածված է միջին օղակի պաշտոնյաների շրջանում, և միայն 6 %-ը նշել է, որ

[21] OVERVIEW OF CORRUPTION AND ANTI-CORRUPTION IN ARMENIA, 2013, p. 6 - http://www.transparency.org/files/content/corruptionqas/Overview_of_corruption_in_Armenia_1.pdf

[22] Armenia corruption survey of households, Caucasus Research Resource Centers, 2010, p. 21 – http://www.crrc.am/hosting/file/_static_content/projects/corruption_2008_2010/2010_Corruption_Household_Survey_Report_English.pdf

կոռուպցիան տարածված է ցածրաստիճան պաշտոնյաների շրջանում: Հետաքրքիր է, որ հարցվածները նույնիսկ նշել են, որ նախապես հայտնի է թե ինչպես և որքան պետք է վճարվի[23]:

2009 թվականին հրապարակվեց Համընդհանուր բարեվարքության զեկույցը (The Global Integrity report), որը գնահատման գործիք է կառավարության, հասարակական կազմակերպությունների և այլ շահագրգիռ կողմերի համար, հայտնաբերելու այն ոլորտները, որտեղ կոռուպցիան առավել հավանական է: Զեկույցում Հայաստանում հանրային կառավարման և քաղաքացիական ծառայության արդյունավետությունը գնահատվել էր «շատ թույլ»՝ 39 միավոր[24]: 2011 թվականին հրապարակվեց Համընդհանուր բարեվարքության զեկույց հերթական զեկույցը, որտեղ հանրային կառավարման արդյունավետության գնահատականը բարձրացել էր՝ հասնելով 59-ի, սակայն կրկին գնահատվել «շատ թույլ»[25]:

Արևելյան գործընկերության էստոնական կենտրոնը 2011 թվականից սկսած ամեն տարի հրապարակում է « Հանրային կառավարումը ԵՄ Արևելյան գործընկերության երկրներում: Համեմատական զեկույց»-ը: Այս զեկույցը պարբերաբար ներկայացնում է Արևելյան գործընկերության 6 երկներում(այդ թվում նաև Հայաստանում) հանրային կառավարման ոլորտի բարեփոխումները՝ հիմնվելով հանրային կառավարման բարեփոխումներին ուղղված եվրոպական 4 չափանիշների վրա: Ինչպես կտեսնեք ներքևում առկա աղյուսակում, ամեն չափանիշ ունի իր ցուցիչները:

| **Եվրոպական չափանիշներ** | **Ցուցիչներ** |
|---|---|
| Կանխատեսելիություն և վստահելիություն | 1. Օրենքի գերակայությունը<br>2. Կառավարության որոշումների կողմնակալ բնույթը<br>3. Անկանոն վճարումներ և կաշառքներ |
| Թափանցիկություն և հրապարակայնություն | 1. Թափանցիկ քաղաքականության մշակում<br>2. Կոռուպցիայի ընկալում<br>3. E-Government |
| Հաշվետվողականություն | 1. Հաշվետվողականություն և խոսքի ազատությունը<br>2. Դատական համակարգի անկախությունը |

[23] Armenia corruption survey of households, Caucasus Research Resource Centers, 2010, p. 23 – http://www.crrc.am/hosting/file/_static_content/projects/corruption_2008_2010/2010_Corruption_Household_Survey_Report_English.pdf

[24] https://indabaplatform.com/ids/exportPdfForScorecard.do?horseId=9269&subcatIds=,2212,2217,2225,2229,2233,2237,2137,2132,2144,2149,2155,2163,2160,2167,2171,2175,2179,2190,2186,2195,2197,2201,2208

[25] The Global Integrity report: 2011, p. 13 - http://www.right2info.org/resources/publications/publications/global-integrity-report-2011

| | |
|---|---|
| | 3. Հանրային միջոցների շեղումը<br>4. Գործարար միջավայրի բարելավում<br>5. ՔՀԿ կայունության ինդեքս |
| Արդյունավետություն | 1. Կարգավորման որակ<br>2. Արդյունավետ կառավարում<br>3. Պետական միջոցների վատնում<br>4. Շուկայում գերիշխանության երկարատևություն |

Յուրաքանչյուր երկրի դեպքում այս ցուցիչների վերաբերյալ արդյունքները մանրամասն ներկայացված են: Փորձենք ներկայացնել Հայաստանին վերաբերող արդյունքները ըստ տարիների:

Համաձայն 2011 թվականի «Հանրային կառավարումը ԵՄ Արևելյան գործընկերության երկրներում: Համեմատական զեկույց»-ի գնահատման Հայաստանը բարձր ցուցանիշներ է ապահովել թափանցիկ քաղականության մշակման և պետական միջոցների վատնման հաղթահարման ցուցիչներով: Ընդհանուր առմամբ բարելավվել են նաև գործարար միջավայրը և էլեկտրոնային կառավարման համակարգը (e-governance): Սակայն ինչպես մյուս ԱԳ երկրներում, այնպես էլ Հայաստանում էլեկտրոնային ծառայությունների մատուցման ոլորտում առկա են եղել խոչընդոտներ՝ IT ցանցի թերզարգացվածության պատճառով: Ինչ վերաբերում է օրենքի գերակայության, հաշվետվողականության և խոսքի ազատության ցուցիչներին, ապա այստեղ Հայաստանը թերևս հետընթաց է գրանցել:[26]

Ինչպես նշված է «Հանրային կառավարումը ԵՄ Արևելյան գործընկերության երկրներում: 2012 թվականի համեմատական զեկույցում Հայաստանը շարունակում է թարմացնել իր կարգավիճակը միջազգային փաստաղթերում, որպես արդյունավետ տնտեսություն իրականացնող երկիր՝ արտացոլելով բարեփոխումների ընդհանուր ընթացքը և զարգացման դրական հեռանկարները: Այն շարունակում է կայուն, բայց միևնույն ժամանակ դանդաղ կերպով բարելավել հանրային կառավարման բարեփոխումների ցուցանիշները համապատասխանեցնելով դրանք եվրոպական չափանիշներին: Հայաստանը զգալի աճ է գրանցել թափանցիկ քաղաքականության մշակման ոլորտում և դարձել է տարածաշրջանի առաջատարը պետական միջոցների արդյունավետ տնօրինման ցուցիչով: Երկրում հանրային կառավարման թափանցիկության և արդյունավետության դրական առաջընթացը ընգծում է հուսալի և հաշվետու հանրային կառավարման համակարգի մշակման անհրաժեշտությունը երկարաժամկետ հեռանկարում[27]:

[26] Public Administration in EU Eastern Partner Countries: Comparative Report 2011. Estonian Center of Eastern Partnership, page 11
[27] Public Administration in EU Eastern Partner Countries: Comparative Report 2012. Estonian Center of Eastern Partnership, page 7.

Համաձայն 2013 թվականի զեկույցի Հայաստանը ԱԳ երկների շարքում անվանվում է «լուռ բարեփոխիչ» ի շնորհիվ հանրային կառավարման տարբեր ոլորտներում եվրոպական չափանիշներին համապատասխան, էական և շարունակական առաջընթացի: Կանխատեսելի և թափանցիկ հանրային կառավարում ստեղծելու երկրի ջանքերը ընդհանուր առմամբ հաջողությամբ են պսակվել: Անհրաժեշտ է ընգծել նաև հաջողությունները մրցակցության պաշտպանության, արդյունավետ ենթակառուցվածքների, ՏՀՏ զարգացման ոլորտներում, քանի որ երկրի քաղաքական և տնտեսական կառուցվածքների միջև եղած հակասությունը երկար ժամանակ խոչընդոտում էր բարեփոխումների ընթացքը[28]:

2013 թվականի սեպտեմբերի 3-ին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի կողմից Հայաստանի ԵՏՄ անդամակցության որոշումը ինչ-որ չափով ազդեց հանրային կառավարման ոլորտում իրականացվող բարեփոխումների ընթացքի և արդյունքների վրա: 2012 թվականին բաց և թափանցիկ կառավարման համատեքստում հասնելով տարածաշրջանում առաջատարի դիրքին՝ Հայաստանը 2014 թվականին աննախադեպ անկում ապրեց՝ նահանջելով նույնիսկ 2010 թվականին գրանցած արդյունքներից: Հայաստանի հանրային կառավարման ոլորտի եվրոպական չափանիշների համաձայն բարեփոխումները դանդաղել են: 2014 թվականին Հայստանը հետընթաց գրանցեց հանրային կառավարման մի քանի ոլորտներում, մասնավորապես՝ թափանցիկության և կառավարության կողմից ծախսերի արդյունավետության առումով: Նույն թվականի գարնանը տեղի ունեցած կառավարության փոփոխությունը նպաստեց օլիգարխիայի վրա հիմնված տնտեսական քաղաքականության ուժեղացմանը: Միակ ձեռքբերումը էլեկտրոնային կառավարման ոլորտում է՝ էլեկտրոնային ծառայությունների մատուցումը ընդլայնելու և էլեկտրոնային մասնակցությունը ամրապնդելու հաշվին[29]:

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[28] Public Administration in EU Eastern Partner Countries: Comparative Report 2013. Estonian Center of Eastern Partnership, page 7.

[29] Public Administration in EU Eastern Partner Countries: Comparative Report 2013. Estonian Center of Eastern Partnership, pages 7-8.

Թեև հանրային կառավարման ոլորտի բարեփոխումներն ընդհանուր առմամբ փոփոխություններ են ապահովել բյուրոկրատական կարգավորումների կրճատման, առանձին ոլորտներում էլեկտրոնային ծառայությունների ներդրման ուղությամբ պյնուամենայիվ, կարծում ենք, որ հանարային կառավարման ոլորտը դեռևս չի ապահովում եվրոպական չափանիշների արդյունավետ կիրառելոիթւոյւնը:

Կոռուպցիայի բարձր մակարդակը, պետական միջոցների տնօրինման ողջամտության վերաբերյալ հանրային ահազանգերը և բազմաթիվ հրապարակումներն ու տեսանյութերը վկայում են, որ հանրային կառավարման ոլորտի բարեփոխումները որակական փոփոխությունների դեռևս չեն հանգեցրել: Առանձին դեպքերում դրանք ձևական բնույթ են կրել: Մասնավորապես, հանրային կառավարման ոլորտում կոռուպցիան բացառելու և կառավարումն արդյունավետ դարձնելու նպատակով նախատեսվել է իրականացնել պետական կառավարման ապարատը գործարարությունից տարանջատելու գործուն քայլեր:

Իրականացված բարեփոխումների անարդյունավետությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով, որոնցից կառանձնացնենք հետևյալները

Հանրային ծառայությունների ոլորտում իրականացված բարեփոխումների ծրագրերը չեն պլանավորվել պատշաճորեն, դրանց արդյունքների նկատմամբ չափելի և հստակ ցուցանիշներ չեն դրվել: Այս հանգամանքը հնարավորություն չի տալիս չափել իրականացված ծրագրերի արդյունավետությունն առաջադրված նպատակի և ձեռք բերված արդյունքների համապատասխանելիության, ժամկետների և այլ առումով:

Բարեփոխումների ծրարգրերով նախատեսված գործողութությունները համաչափորեն չեն ներառել հանրային կառավարման ոլորտի բոլոր սկզբունքները, օրինակ, ինչպես երևում է վերլուծության արդյունքներից՝ թափանցիկության և հրապարակայնության ուղղությամբ իրականացվել է 8 գործողություն, արդյունավետության բարձրացման ուղղությամբ՝ մոտ 43 գործողություն: Այն դեպքում, երբ բացակայում է կարիքի գնահատումը մինչև գործողությունների ծրագրի մշակումը, նման անհամաչափությունը վկայում է ոչ արդյունավետորեն պլանավորված ծրագրի մասին:

Հաշվի առնելով ոլորտի կարևորությունը՝ հանրային կառավարման բարեփոխումների առանձին երկարաժամկետ ռազմավարական ծրագիր չի մշակվել: Կառավարության կողմից առանձնացված չի եղել հանրային կառավարման ոլորտը, որպես բարեփոխումների առանձին ճյուղ: Միայն իրականացված հետազոտության արդյունում է հնարավոր եղել առանձնացնել այն գործողությունները, նպատակները և խնդիրները, որոնք այս կամ այն կերպ առնչվում են հանրային կառավարման բարեփոխումների ոլորտին: Հստակեցված չէ նաև, թե որ գերատեսչությունն է պատասխանատու հանրային կառավարման բարեփոխումների շրջանակներում իրականացվող գործողությունների արդյունքների համար: Հետազոտության շրջանակներում պատրաստված հարցումներին ի պատասխան՝ պատասխանատվության ստանձնում կոնկրետ պետական մարմնի կողմից չի եղել,

փոխարենը՝ հարցված մարմիններ հղում են կատարել այլ մարմինների պատասխանատվության վրա:

Հաջորդ տարվա գործողությունների ծրագիրը մշակելիս նախորդի արդյունավետության գնահատում և արդյունքների ամփոփում չի իրականացվել, ինչպես նաև նույն գործողությանն առաջնայնություն տրամադրելու և այն հաջորդ տարվա ծրագրում վերարտադրելու համար որևէ բացատրություն չի գործում: Կառավարության առջև դրված տարբեր խնդիրներ և նպատակներ նույնությամբ կրկնվել են 2012, 2013 և 2014 թվականների գործողությունների ծրագրերում: Կառավարության առջև դրված խնդիրները որոշ դեպքերում կրկնվում են՝ ներառվելով այլ ավելի մեծ խնդիրների շրջանակներում: Առաջին հայացքից տպավորություն է ստեղծվում, որ դրանք առանձին խնդիրներ են, մինչդեռ բովանդակությունը նույնն է:

2007-2011 ովականներին իրականացված ծրագրերի արդյունքների ամփոփում իրականացվել է միայն report.gov.am կայքում, սակայն այդ կայքը 2011 թվականից հետո չի թարմացվել:

***Կանխատեսելիություն և վստահելիություն ցուցիչի ներքո*** նախատեսված են այնպիսի գործողություններ, որոնք կհստակեցնեն հանրային ծառայողների պարտականությունները և կսահմանեն պաշտոնյաների վարձատրության միասնական համակարգ, կբարձրացնեն պետական պաշտոնյաների սոցիալական երաշխիքները: Միաժամանակ, դրան պատակ են հետապնդում նվազեցնել բյուրոկրատական քաշքշուկները:

Նշված գործողությունները նույնությամբ կրկնվել են 2012, 2013 և 2014թվականների գործողությունների ծրագրերում:

Հաջորդ տարվա գործողությունների ծրագիրը մշակելիս նախորդի արդյունավետության գնահատում և արդյունքների ամփոփում չի իրականացվել և նույն գործողությանն առաջնայնություն տրամադրելու և այն հաջորդ տարվա ծրագրում վերարտադրելու համար որևէ բացատրություն չի գործում:

Կանխատեսելիության և վստահելիության ցուցիչի ներքո իրականացված բարեփոխումները ներառում են հետևյալ ոլորտները.

դատական համակարգը,

հարկային մարմնի գործունեություն,

մշակությանի ծառայությունների ոլորտ:

Դատական համակարգի համար ներկայացվել է «Datalex» ծրագիրը՝ որպես արդարադատության մատչելիության ապահովման համար հնարավորության ընձեռում: Մշակությանի ծառայությունների ոլորտում ներկայացվում է էլեկտրոնային թանգարանների, վիրտուալ ցուցադրությունների պրակտիկայի ներդրումը, համերգային դահլիճներում տոմսերի էլեկտրոնային վաճառքի գործարկումը և այլն:

Հարկային ոլորտում նախատեսվում է ընդլայնել հարկ վճարողների սպասարկման կենտրոնների թիվը, զարգացնել պետական եկամուտների կոմիտեի տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքները:
Այս գործողությունների վերաբերյալ արդյունքներ ներկայացված չեն:
***Թափանցիկության և հրապարակայնության ցուցիչի ներքո*** ներկայացվում են այնպիսի գործողություններ, ինչպիսիք են քաղաքացիական հասարակության մասնակցության հնարավորությունների ընդլայնումը, պետական կառավարման համակարգի թափանցիկության բարելավումը:
Որպես պետական կառավարման ոլորտի թափանցիկության բարելավման արդյունք՝ ներկայացվում է 2010թվականից գործող դիմումների ընթացքի առցանց համակարգի առկայությունը:

Մասնավորապես, ներդրվել է առցանց համակարգ, որը քաղաքացիներին հնարավորություն է տալիս հետևելու պետական մարմիններ ուղարկված գրությունների ընթացքին, e-gov.am կայքում տեղադրվել է «ինտերակտիվ բյուջե» առցանց համակարգը, որը հնարավորություն է տալիս ցանկացած պահի տեղեկանալ, թե ինչ նպատակով, ուղղությամբ և ինչպես են ծախսվում պետական բյուջեի գումարները:




Շարունակվել են էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրման աշխատանքները: Դրանց կիրառումն առավել արդյունավետ է բնակչության և գործարարների կողմից ժամանակային ծախսերի կրճատման, կառավարման թափանցիկության ու վերահսկելիության ավելացման առումով: 2009 – 2014 թվականները ընկած ժամանակահատվածում ներդրվել են՝

- *Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգը,*
- *Էլեկտրոնային ստորագրության համակարգը,*
- *Իրավաբանական անձանց պետական գրանցման էլեկտրոնային համակարգը,*

- *Լիցենզավորման դիմումների էլեկտրոնային ներկայացման համակարգը,*
- *Մտավոր սեփականության գործակալության էլեկտրոնային հայտերի ներկայացման համակարգը,*
- *Հրապարակային ծանուցման համակարգը,*
- *Դատական տեղեկատվական «ԴատաԼեքս» համակարգը,*
- *Հարկային հաշվետվության ներկայացման էլեկտրոնային համակարգ:*

Վերոնշյալ էլեկտրոնային համակարգերի ներդրումը կառավարության գործողությունների ծրագրում ներկայացված է որպես մեկ ամբողջական ծրագիր, մինդեռ տարիների ընթացքում նշված համակարգերը ներկայացվում են որպես առանձին նպատակներ և հաճախ կրկնվում են ներառվելով այլ նպատակների մեջ:

Թափանցիկ և հրապարակային պետական կառավարումն ապահովվելու համար ներդրվել է Mulberry” համակարգչային ծրագիրը, որը հնարավորություն է տալիս արդյունավետ կերպով կառավարել պետական մարմիններում փաստաթղթերի հոսքը, գրանցել փաստաթղթաշրջանառության պատմությունը, վերահսկել փաստաթղթի շարժը բոլոր փուլերում ապահովել կատարողական վերահսկողություն և այլն:

Երկրում գործարարության խթանման, ինչպես նաև ներդրումային դաշտի բարելավմանը խոչընդոտող պայմանների վերացման համար տնտեսության մեջ կիրառվում է «Կարգավորիչ գիլյոտինի» սկզբունքը: Կարգավորիչ գիլյոտինի միջոցով իրականացվում է բիզնես միջավայրին առնչվող նորմատիվ-իրավական ակտերի ամենաարագ ամփոփումը:

2012 թվականից սկսվել է կենսաչափական կողմնորոշիչ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնականացման քարտերի համակարգի ներդրումը: Այն ավարտին է հասցվել 2014 թվականին և այժմ գործում է և յուրաքանչյուր քաղաքացի, կատարելով համապատասխան վճարում, կարող է ստանալ նույնականացման քարտ և կենսաչափական անձնագիր:

Նոտարական ծառայությունների ոլորտում ներդրվել է էլեկտրոնային համակարգ, որի միջոցով նոտարական ծառայությունները մատուցվում են «մեկ պատուհանի» սկզբունքով: Իրականացվել է նաև միասնական սպասարկման կենտրոնների կողմից մի շարք հանրային ռեգիստրների՝ «Մեկ պատուհան» սկզբունքով ծառայությունների մատուցումը:

Շարունակվել են բարեփոխումները ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համակարգում:

ՀՀ պետական գնումների համակարգը ավելի թափանցիկ և հրապարակային դարձնելու համար գործարկվել է ՀՀ կենտրոնական կառավարման մարմինների կողմից բաց ընթացակարգով շրջանակային համաձայնագրերով կատարվող էլեկտրոնային գնումների համակարգը:

Կարևորվել է նաև պետական պարտքի գրանցման և հաշվառման միասնական էլեկտրոնային համակարգի ներդրումը:

***Հաշվետվողականության ցուցիչի ներքո*** նախատեսվել է կատարելագործել պետական համակարգի աշխատողների վարքագծի կանոնները և սահմանել պատասխանատվություն՝ խախտումների ու անհարկի խոչընդոտների ստեղծումը կանխելու համար, բացառել հանրային կառավարման ոլորտում աշխատողների սեփական բիզնես շահերը, ինչպես նաև կարևորել պետությանը պատկանող գույքային իրավունքների համապարփակ հաշվառման կիրառումը և պետական կառավարիչների ինստիտուտի ստեղծումը: Այս գործողությունների արդյունքների վերաբերյալ որևէ տեղեկատվություն չկա:

***Արդյունավետության ցուցիչի ներքո*** նախատեսվել է իրականացնել թվով ամենաշատ գործողությունները: Մասնավորապես, ծրագրվել է ներդնել պետական կառավարման մարմինների գործունեության արդյունքների գնահատման համակարգ և դրա հիման վրա իրականացնել նյութական խրախուսում, մինչ 2017 թվականը ապահովել միասնական սպասարկման կենտրոնների միջոցով կամ առցանց «Մեկ կանգառ» սկզբունքով արդարադատության ոլորտի ծառայությունների գերակշիռ մասի տրամադրումը պետության կողմից:

Կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում կարևորվել է էթիկայի հանձնաժողովի դերը, ինչպես նաև հակակոռուպցիոն ռազմավարության շրջանակում միջազգային կառույցների հետ ակտիվ համագործակցությունը: Միաժամանակ, նախատեսվել էր իրականացնել նաև գործարարությունը և քաղաքականությունը սահմանազատելու, պետական կառավարման ապարատը գործարարությունից տարանջատելու գործուն քայլեր:

Պետական գույքի կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով 2013 և 2014 թվականների ընթացքում պետք է մշակվեր և իրականացվեր պետական գույքի կառավարման միասնական քաղաքականություն:

Նախատեսված է եղել իրականացնել բարեփոխումներ արխիվային գործի բնագավառում՝ ներդնելով արխիվային ծառայությունների մատուցման էլեկտրոնային համակարգ:

2011 թվականին նախատեսված է եղել շարունակել Պետական ծախսերի կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով ծրագրային բյուջետավորման ներդրման ուղղությամբ իրականացվող բարեփոխումները, մինդեռ հաջորդող տարիներին բարեփոխումների իրականացման ընթացքի և արդյունքերի վերաբերյալ որևէ տեղեկատվություն չկա: Բարեփոխումները սկսվել են դեռևս 2002 թվականին:

Հարկային ոլորտը բարելավվելու և հարկային ծառայությունների մատուցման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով 2009-2014 թվականները ընկած ժամանակահատվածում պետք է իրականվեին մի շարք գոծողություններ, այդ թվում՝

- ✓ *Հարկային հսկողության մեխանիզմների արդիականացում,*
- ✓ *Հարկ վճարողների սպասարկման ծառայությունների որակի բարձրացում,*
- ✓ *ՀՀ կա ՊԵԿ-ի կառավարման արդյունավետության բարձրացում,*

- ✓ *Մաքսային ձևակերպումների ժամանակահատվածի կրճատում:*

Նախատեսվել էր բարձրացնել նաև նոտարական համակարգի գործունեության արդյունավետությունը:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Հանրային կառավարման ոլորտի միջոցառումների 2008-2014 թվականների ծրագրերն ըստ հանրային կառավարման ոլորտի սկզբունքների

| Կանխատեսելիություն և վստահելիություն | | | | |
|---|---|---|---|---|
| Նպատակ և խնդիրներ | Գործողություններ և ժամկետներ | Ակնկալվող արդյունքներ | Առկա արդյունքներ | Գնահատական |
| սահմանել պետական կառավարման համակարգի բոլոր ճյուղերում պաշտոնյաների վարձատրության միասնական և արդարացի համակարգ, որը հաշվի կառնի յուրաքանչյուր աշխատողի արտադրողականությունը և աշխատանքի արդյունավետությունը | 2012 | Տեղեկություններ չկան | Տեղեկություններ չկան | |
| պետական աշխատանքը գրավիչ դարձնելու նպատակով շարունակել սոցիալական երաշխիքների ներդրման քաղաքականությունը | 2012 | Տեղեկություններ չկան | Տեղեկություններ չկան | |
| հստակեցնել պետական կառավարման մարմինների գործառույթները: Մասնավորին պատվիրակել գործակալական, սպասարկման կամ մասնագիտական այն ծառայությունները, որոնք առավել արդյունավետ կարող են իրականացվել մասնավորի կողմից | 2012 | Տեղեկություններ չկան | Տեղեկություններ չկան | |
| վերացնել այն գործառույթները, որոնք ստեղծում են բյուրոկրատական անհարմարություն ու քաշքշուկ՝ բիզնեսի | 2012 | Տեղեկություններ չկան | Տեղեկություններ չկան | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| և քաղաքացիների համար: Ուժեղացնելով պետության կարգավորիչ դերը խաղի կանոնների սահմանման առումով՝ նվազագույնի հասցնել միջամտությունը տնտեսավարողի գործերին | | | | |
| սահմանել պետական կառավարման համակարգի բոլոր ճյուղերի պաշտոնյաների վարձատրության միասնական և արդարացի համակարգ, որը հաշվի կառնի յուրաքանչյուր աշխատողի արտադրողականությունը և աշխատանքի արդյունավետությունը | 2013 2012թ կառավարության ծրագրում այս նպատակը նույնությամբ կրկնվում է | Տեղեկություններ չկան | Տեղեկություններ չկան | |
| պետական աշխատանքը գրավիչ դարձնելու նպատակով շարունակել սոցիալական երաշխիքների ներդրման քաղաքականությունը, միաժամանակ բարելավել մասնագետների ընտրության, վերապատրաստման և որակավորման գործընթացները, | 2013 2012թ կառավարության ծրագրում այս նպատակը նույնությամբ կրկնվում է<br><br>«Կենդանական ծագում ունեցող սննդամթերքի հիգիենային ներկայացվող առանձնակի | Տեղեկություններ չկան | Տեղեկություններ չկան | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | պահանջնե րի կանոնակա րգը հաստատել ու մասին» ՀՀ կառավարու թյան որոշման նախագիծը | | | |
| հստակեցնել պետական կառավարման մարմինների գործառույթները, մասնավորին պատվիրակել գործակալական, սպասարկման կամ մասնագիտական այն ծառայությունները, որոնք կարող են առավել արդյունավետ իրականացել մասնավորի կողմից, | 2013 2012թ կառավարու թյան ծրագրում այս նպատակը նույնությամ բ կրկնվում է | Տեղեկություններ չկան | Տեղեկություններ չկան | |
| վերացնել այն գործառույթները, որոնք ստեղծում են բյուրոկրատական անհարմարություն ու քաշքշուկ՝ բիզնեսի և քաղաքացիների համար: Ուժեղացնելով պետության կարգավորիչ դերը՝ խաղի կանոնների սահմանման առումով՝ նվազագույնի հասցնել միջամտությունը տնտեսվարողի գործերին | 2013 2012թ կառավարու թյան ծրագրում այս նպատակը նույնությամ բ կրկնվում է | Տեղեկություններ չկան | Տեղեկություններ չկան | |
| Պետական քաղաքականությամբ ամրագրված սկզբունքներին համապատասխան՝ հետևողական կատարելագործել պետական պաշտոնյաների վարձատրության ներդրված միասնական և արդարացի | 2014թ | | Տեղեկություններ չկան | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| համակարգը | | | | |
| Պետական աշխատանքը գրավիչ դարձնելու նպատակով շարունակել սոցիալական երաշխիքների ներդրման քաղաքականությունը, ընտրության, վերապատրաստման և որակավորման գործընթացները | 2014թ | նպաստավոր պայմաններ ստեղծելով պետական ծառայողների համար մատչելի պայմաններով հիփոթեքային վարկերի հասանելիության համար, միաժամանակ բարելավել մասնագետների | Տեղեկություններ չկան | |
| Հստակեցնել պետական կառավարման մարմինների գործառույթները. մասնավորին պատվիրակել գործակալական, սպասարկման կամ մասնագիտական այն ծառայությունները, որոնք կարող են առավել արդյունավետ իրականացվել մասնավորի կողմից | 2014թ 2012 և 2013 թթ կառավարության ծրագրերում այս նպատակը նույնությամբ կրկնվում է | Տեղեկություններ չկան | Տեղեկություններ չկան | |
| Վերացնել այն գործառույթները, որոնք ստեղծում են բյուրոկրատական անհարմարություն ու քաշքշուկ՝ բիզնեսի և քաղաքացիների համար: Ուժեղացնելով պետության կարգավորիչ դերը՝ կանոնների սահմանման առումով՝ նվազագույնի հասցնել միջամտությունը տնտեսվարողի գործերին | 2014թ 2012թ և 2013թթ կառավարության ծրագրերում այս նպատակը նույնությամբ կրկնվում է | Տեղեկություններ չկան | Տեղեկություններ չկան | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Արդարադատության ոլորտում մատչելիության սկզբունքի գործնական հիմքերի բարելավման նկատառումով «Datalex» ծրագրի հնարավորությունների զարգացում՝ հատկապես համակարգչային եղանակով հայցեր հարուցելու, բողոքներ բերելու ինստիտուտ ներդնելու տեսքով | 2011թ Արդարադատության ոլորտում մատչելիության սկզբունքի գործնական հիմքերի բարելավման նկատառումով «Datalex» ծրագրի հնարավորությունների զարգացում՝ հատկապես համակարգչային եղանակով հայցեր հարուցելու, բողոքներ բերելու ինստիտուտ ներդնելու համար անհրաժեշտ քայլերն են՝ Հայաստանի Հանրապետ | Արդարատության մատչելիության սկզբունքի լիարժեք կիրառման խոչընդոտները, որոնք պայմանավորված են փաստաթղթային շրջանառության ներկա բարդությունների հետ, կբացառվեն. յուրաքանչյուր իրավասու անձ հնարավորություն կունենա սոսկ համակարգչային եղանակով ներկայացնելու հայցադիմումներ, բողոքներ և այլն: Գործող կարգի պայմաններում հաճախ կողմերը դժգոհում են, որ դատական ծառայողները հրաժարվում են ընդունել հայցեր կամ պարտադրում են անորոշ ժամանակով սպասել, ինչը համատեղելի չէ սպասարկման քաղաքակիրթ պահանջներին և | Տեղեկություններ չկան | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | ության կառավարության համապատասխան որոշման մշակում, «Datalex» ծրագրում էլեկտրոնային ստորագրության ներդնում, փաստաթղթերի և քաղաքացիների ու իրավաբանական անձանց համար ուղեցույցների մշակում: | խախտում է արդարադատության մատչելիության սկզբունքը: Ներդրվող համակարգը բացառում է այդ բացասական երևույթների որևէ դրսևորում: | | |
| Մշակութային ծառայությունների ոլորտում էլեկտրոնային տեղեկատվական համակարգերի ներդրում և գործարկում | 2012թ | թանգարաններ՝<br>- 2 վիրտուալ թանգարանների (գորգի և գրատպության) և 1 մանկական սրահի ստեղծում<br>- վիրտուալ թեմատիկ ցուցադրությունների կազմակերպում<br>- էլեկտրոնային | Տեղեկություններ չկան | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | տեղեկատվական 20 կրպակների գործարկում գրադարաններ՝<br>- Հայաստանի գրադարանների միացյալ ավտոմատացված ցանցում 376000 միավոր գրքի մուտքագրում<br>- էլեկտրոնային տեղեկատվության 2 աղբյուրների («EBSKO», «Integrum World») էլեկտրոնային հրապարակումների բաժանորդագրություն 4 համերգային դահլիճներում տոմսերի էլեկտրոնային վաճառքի գործարկում<br>- մշակութային ծառայություններ մատուցող մասնագետների վերապատրաստում (100 թանգարանային աշխատողներ, 90 համայնքային գրադարանավարներ, 800 երաժշտություն դասավանդողներ, 30 ճարտարապետ | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | վերականգնողներ, 14 հնագետ վերականգնողներ, 10 որմնանկարներ վերականգնողներ և 10 շինարարության կազմակերպիչներ՝ աշղեկներ) | | |
| Հարկ վճարողների սպասարկման որակի բարձրացում և հարկային ու մաքսային մարմինների տեխնիկական ապահովվածության մակարդակի բարելավում, որով հարկման հարաբերություններում կընդլայնվեն ինքնագնահատման համակարգի կիրառման մոտեցումները<br><br>Հարկային վարչարարության 2012-2014 թթ. ռազմավարությամբ, ինչպես նաև ՀՀ Նախագահի կարգադրությամբ հաստատված 2011-2013 թթ. բարեփոխումների ծրագրով ՊԵԿ-ի համար հարկ վճարողների սպասարկման համակարգի զարգացումը սահմանված է որպես բարեփոխումների առանցքային ուղղություն:<br>Մասնավորապես, հարկ վճարողների սպասարկման բարեփոխման ասպարեզում հատկապես կարևորվում են՝ ՊԵԿ-ի սպասարկման ենթակառույցների զարգացումը և կարողությունների ընդլայնումը, սպասարկման ծառայությունների հասանելիության ապահովումը հարկ վճարողների ամենալայն շրջանակների համար, ինչպես նաև էլեկտրոնային եղանակով մատուցվող ծառայու-թյունների կիրառության ընդլայնմանն ուղղված վարչարարական միջոցառումները: | 2013թ | Նշված խնդրի կարգավորման շրջանակներում նախատեսվում է, մասնավորապես, ընդլայնել հարկ վճարողների սպասարկման կենտրոնների ցանցը, գործարկել հարկ վճարողների սպասարկ-ման կետեր, հագեցնել ՊԵԿ-ի ուսումնական կենտրոնը ժամանակակից սարքավորումներով, զար-գացնել ՊԵԿ-ի ՏՏ ենթակառուցվածքները:<br>Խնդրի հաջող լուծման դեպքում ակնկալվում է, որ հարկ վճարողների սպասարկման նոր | Տեղեկություններ չկան | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | կենտրոնները և կետերը հնարավորություն կընձեռեն բարձրացնել մատուցվող ծառայությունների հասանելիությունը և կիրառությունը՝ հարկ վճարողների ամենալայն շրջանակների համար: Նախատեսվում է հարկային և մաքսային մարմինների ուսումնատեխնիկական բազայի վերա-զինման շնորհիվ ամբողջությամբ գործարկել կենտրոնի՝ Երևանի և Դիլիջանի ուսումնական մաս-նաշենքերը, ինչը հնարավորություն կտա ՊԵԿ-ին հաջորդող տարիներին իրագործելու անձնա-կազմի երկարաժամկետ ուսուցման, ինչպես նաև արդյունավետ հանգստի կազմակերպման ծրագրեր: Նախատեսվում է ՊԵԿ-ի ՏՏ | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | ենթակառուցվածքների զարգացման շնորհիվ ապահովել մատուցվող էլեկտրոնային ծառայությունների ընդլայնման տեխնիկական հնարավորությունները, բարձ-րացնել դրանց որակը, ինչպես նաև ապահովել ՊԵԿ-ի էլեկտրոնային համակարգի անխափան աշխատանքը և տվյալների անվտանգությունը: | | |

**Թափանցիկություն և հրապարակայնություն**

| Նպատակ և խնդիրներ | Գործողություններ և ժամկետներ | Ակնկալվող արդյունքներ | Առկա արդյունքներ | Գնահատական |
|---|---|---|---|---|
| Ընդլայնել պետական կառավարման գործընթացներին քաղաքացիական հասարակության մասնակցությունն ու համակարգի վերաբերյալ իրազեկվածությունը, բարելավել պետական կառավարման համակարգի գործունեության թափանցիկությունը | 2008-2012թթ | պետական մարմինների աշխատանքի թափանցիկության ապահովվում | ▪ 2010 թվականից ներդրվեց առցանց համակարգ, որը քաղաքացիներին հնարավորություն է տալիս հետևելու պետական մարմիններ ուղարկված գրությունների ընթացքին: Միայն | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | ընթացիկ տարում 41000 դիմումատուներ համակարգի միջոցով հետնել են իրենց դիմումի ընթացքին։<br>▪ 2010 թվականից գործում է նաև «Ինտերակտիվ բյուջե» առցանց համակարգը, որը հնարավորություն է տալիս ցանկացած պահի տեղեկանալ, թե ինչ նպատակով, ուղղությամբ և ինչպես են ծախսվում պետական բյուջեի գումարները։ 2011 թվականի առաջին կիսամյակի ընթացում կայքի շուրջ 7000 այցելու օգտվել է ներկայացված տեղեկատվությունից։<br>▪ Առցանց համակարգում բաց և հասանելի են | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | կառավարության և վարչապետի բոլոր որոշումները: Ավելին, ամեն ոք կարող է նախապես ծանոթանալ բոլոր այն հարցերին և նախագծերին, որոնք կառավարությունը պատրաստվում է քննարկել առաջիկա նիստի ընթացքում. կառավարության նիստի օրակարգը և բոլոր հարցերը նախօրոք տեղադրվում են առցանց համակարգում: 2011 թ. օգոստոսի դրությամբ կայքի «ՀՀ կառավարության որոշումները» հատվածի այցելուների թիվը եղել է մոտ 495000, «ՀՀ վարչապետի որոշումները» հատվածի այցելուների թիվը՝ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | 136000, «ՀՀ կառավարության նիստի օրակարգը» հատվածի այցելուների թիվը՝ 139000։<br>▪ Կառավարությունը թափանցիկություն է ապահովել նաև պետական գնումների գործընթացում։ Բացի գնումների համակարգը ներկայացնող արդեն իսկ գործող առցանց համակարգից, որը հնարավորություն է տալիս տեսնել գնումների հայտարարությունները և բոլոր ընթացակարգերը, 2010 թվականից հանրությանը հասանելի է նաև պետության կողմից մեկ աղբյուրից առանց մրցույթի իրականացվող | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | գնումների տեղեկատվությունը։<br>▪ Հանրության համար բաց և հասանելի է նաև պետական ոչ առևտրային կազմակերպությունների կողմից իրականացվող բոլոր ծրագրերի, պայմանագրերի և ֆինանսավորման վերաբերյալ տեղեկատվությունը։ 2011 թ. դրությամբ այս հատվածն արդեն ունեցել է շուրջ 16000 այցելու։<br>▪ Կառավարությունը հասանելի է դարձրել նաև մի շարք ռեեստրներ և ցանկեր,մասնավորապես՝ արտադրական վտանգավոր օբյեկտների ռեեստրը, օգտակար հանածոների արդյունահանման | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | համար տրամադրված հանքային իրավունքների ցանկը, գործող ուսումնասիրության արտոնագրերի վերաբերյալ տեղեկատվությունը, ՀՀ տարածքի ոչ մետաղային և մետաղային օգտակար հանածոների հանքավայրերի ցուցակը: Կառավարության որոշման նախագիծ մշակող մարմիններն այսուհետև նախագիծը տեղադրում են իրենց ինտերնետային կայքում, որպեսզի հանրությունը դեռևս քննարկման փուլում իրազեկվի նախագծի վերաբերյալ և իր առաջարկություններով մասնակից դառնա կառավարության որոշումների ընդունմանը: | |
| Կառավարությունը շարունակելու է էլեկտրոնային կառավարման | | | ՀՀ կառավարությունը նախաձեռնեց | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| համակարգերի ներդրման աշխատանքները՝ առաջնահերթ համարելով այն ոլորտները, որտեղ դրանց կիրառումն առավել արդյունավետ է բնակչության և գործարարների կողմից ժամանակային ծախսերի կրճատման, կառավարման թափանցիկության ու վերահսկելիության ավելացման առումով: Նախատեսվում է պետական մարմինների կողմից մատուցվող ծառայությունների առնվազն 50 տոկոսն իրականացնել առցանց եղանակով: | | | էլեկտրոնային կառավարության համակարգի ներդրման ծրագիրը: Հիմք ընդունելով ՀՀ Նախագահի նախընտրական ծրագիրը՝ ՀՀ կառավարության ծրագրում ամրագրվեց միջազգային լավագույն չափորոշիչներին համապատասխան էլեկտրոնային կառավարության լիարժեք ներդրման դրույթը: **Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ:** Առաջին հերթին կառավարությունը նախաձեռնել է պետական մարմիններում էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի ներդրման ծրագիրը: 2008 թվականից պետական կառավարման մարմիններում աստիճանաբար հաջողությամբ ներդրվեց Mulberry էլեկտրոնային փաստաթղթաշրջանառ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | ության համակարգը։ Այսօր այն հաջողությամբ կիրառվում է 35 պետական մարմիններում։ Արդյունքում ապահովվում է արդյունավետ և վերահսկելի աշխատանք՝ միաժամանակ նվազեցնելով վարչական ծախսերը։ Օրինակ, եթե պետական մարմինները 2009 թվականին ծախսել էին 95 տոննա թուղթ՝ 67 մլն դրամ արժողությամբ, ապա 2010 թվականին՝ 33 տոննայով ավելի քիչ՝ խնայելով շուրջ 20 մլն դրամ։ Իսկ եթե հաշվի առնենք, որ 2010 թվականին մուտքագրված փաստաթղթերի քանակն ավելացել է շուրջ 30 տոկոսով, ապա խնայողությունն ավելի շատ կլինի։ *Համակարգի ներդրման կարևորագույն արդյունքներից մեկը կատարողական կարգապահության բարձրացումն է, քանի որ* | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | *ավտոմատացված կերպով վերահսկվում են կատարման ժամկետը և գործընթացը: Ընդ որում, ներդրված է նաև կատարողականի գնահատման համակարգ:* **Էլեկտրոնային ստորագրության համակարգ:** Էլեկտրոնային ծառայության հասանելիությունը և էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգերի աշխատանքն անհնար է ապահովել առանց համապատասխան նույնականացման միջոցների ներդրման: Չնայած «Էլեկտրոնային ստորագրության մասին» ՀՀ օրենքը գործում է 2004 թվականից, էլեկտրոնային ստորագրությունը կիրառություն չէր ստացել համապատասխան ենթակառուցվածքների բացակայության պատճառով: 2008 թվականին | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | կառավարության կողմից հիմնադրվեց էլեկտրոնային ստորագրություն տրամադրող կենտրոնը: Այսօր տրամադրված էլեկտրոնային ստորագրությունների քանակը հասնում է 6500-ի, որից շուրջ 300-ը պատկանում է պետական պաշտոնյաների: Կառավ արությունը 2010 թվականի մայիսին գործարկեց էլեկտրոնային կառավարման համակարգերը համատեղող միասնական կայք` www.e-gov.am հասցեով: Կայքի նպատակն է մեկտեղել պետական գերատեսչությունների էլեկտրոնային կառավարման բոլոր գործիքներն ու տվյալների բազաները և ստեղծել դրանց օգտագործման հարմարավետ միջավայր: Կայքի միջոցով հասանելի են | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | հետնյալ ենթահամակարգերը և առցանց ծառայությունները. **Իրավաբանական անձանց պետական գրանցման էլեկտրոնային համակարգ,** որի ներդրմամբ քաղաքացիներին և կազմակերպությունների ն հնարավորություն տրվեց գրանցել իրենց բիզնեսը մեկ պատուհանի սկզբունքով և ժամանակի էական խնայողությամբ (15 րոպեում), բոլոր այլ պետական մարմիններից ստացվող գրանցման համար անհրաժեշտ տեղեկատվությունն ստանալ համացանցի միջոցով նույն պահին, ինչպես նաև էլեկտրոնային համակարգի միջոցով իրականացնել համապատասխան պետական գրանցման համար անհրաժեշտ տուրքի վճարումը։ *Այսուհետև կարելի է գրանցել բիզնեսը՝* | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | *չայցելելով իրավաբանական անձանց պետական գրանցման գործակալություն, այլ օգտվելով առցանց համակարգից:* **Լիցենզավորման դիմումների էլեկտրոնային ներկայացման համակարգ,** որը հնարավորություն է տալիս ինտերնետի միջոցով դիմել լիցենզիա ստանալու, հետևել ներկայացված դիմումի քննարկման ընթացքին: Միաժամանակ համակարգը կոնկրետ կատարողի համար սահմանում է օրենքով խոստացված վերջնաժամկետը: **Մտավոր սեփականության գործակալության էլեկտրոնային հայտերի ներկայացման համակարգ,** որը հնարավորություն է տալիս գյուտերը և օգտակար մոդելները, ինչպես նաև ապրանքային նշանները | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | և արդյունաբերական նմուշներն էլեկտրոնային եղանակով ներկայացնել մտավոր սեփականության գործակալություն: **Հրապարակային ծանուցման համակարգ,** որով առցանց համակարգում հնարավորություն է տրվում տեղադրել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում քաղաքացիների կամ կազմակերպությունների հայտարարությունները: www.azdarar.am կայքը գործարկվել է 2011 թ. մայիսին, և կայքում արդեն տեղադրվել է ավելի քան 800 հրապարակային ծանուցում: **Դատական տեղեկատվական «ԴատաԼեքս» համակարգն** էլեկտրոնային կառավարման և տեղեկության տրամադրման հանրային տեղեկատվական համակարգ է, որը | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | հնարավորություն է տալիս իրական ռեժիմում տեղեկություն ստանալ բոլոր դատարաններում քննվող գործերի մասին և տրամադրում է մի շարք այլ ծառայություններ: **Հարկային հաշվետվության ներկայացման էլեկտրոնային համակարգը** գործում է 2010 թվականի հունվարից: Այն նպատակ ունի պարզեցնել հարկային հաշվետվության հանձնման գործընթացն ու ավտոմատացնել դրա լրացումն ու ստուգումը` խնայելով հարկատուների ռեսուրսն ու ժամանակը, ինչպես նաև նվազագույնի հասցնել հարկատու-հարկային տեսուչ շփումը: 2010 թվականի արդյունքով ընդհանուր հարկային մուտքերում էլեկտրոնային եղանակով հաշվետվություն ներկայացնողների | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | կողմից վճարված տարեկան հարկային մուտքերի տեսակարար կշիռը եղել է 75.6 տոկոս: Այսօր էլեկտրոնային եղանակով հաշվետվություն ներկայացնելու ծրագրային համակարգում ներդրված է 39 տեսակի հարկային հաշվետվություն, իսկ համակարգից օգտվող հարկ վճարողների թիվը հասնում է 6100-ի: **Էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրմամբ հեշտացել է հարկ վճարողներին հիշեցում-ծանուցումների ուղարկման գործընթացը:** Աշխատանքներ են իրականացվել «Հարկատու 3» էլեկտրոնային կառավարման համակարգի ամբողջական ներդրման ուղղությամբ: 2010թ. Իրականացվել է «Հարկատու 3» էլեկտրոնային | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | կառավարման համակարգի պիլոտային ծրագրի ներդրում ՀՀ ԿԱ ՊԵԿ բոլոր հարկային (տարածքային) տեսչություններում: Միաժամանակ, հաստատվել են «Հարկատու 3» էլեկտրոնային կառավարման համակարգի ենթածրագրերի տեխնիկական առաջադրանքները, որոնք հնարավորություն են ընձեռել նախագծել և գործարկել ԷԿՀ մյուս ենթահամակարգերը, մասնավորապես՝ էլեկտրոնային հաշվարկ-հաշվետվությունների ստացման, էլեկտրոնային եղանակով անձնական հաշիվների քարտերի վարման, ավտոմատացված կամերալ հսկողության, հատուկ հարկային հաշիվների խաչաձև ստուգման, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության: | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | Այսպիսով, Հայաստանի ամբողջ տարածքում ինտերնետ տեխնոլոգիաների համատարած հասանելիության ապահովմանը զուգահեռ էլեկտրոնային կառավարման համակարգերից օգտվողների թիվը կայուն աճ է արձանագրում: | |
| Պետական քաղաքականությունն իրականացվելու է պետություն-հասարակություն, պետություն-մասնավոր հատված ինստիտուցիոնալ համագործակցության և հետադարձ կապի զարգացման միջոցով: | | | | |
| "Mulberry"-ին համակարգչային ծրագիր է, որի հիմնական խնդիրներն են պետական մարմիններում փաստաթղթերի հոսքի արդյունավետ կառավարում, փաստաթղթերի և կից նյութերի էլեկտրոնային տարբերակների կենտրոնացված պահպանում, փաստաթղթաշրջանառության պատմության գրանցում ու վերահսկում փաստաթղթի շարժի բոլոր փուլերում, կատարողական վերահսկողության ապահովում, անհրաժեշտ փաստաթղթերի արագ որոնում, փաստաթղթերի հետ աշխատանքի | Այս պարտավորության կատարումը հիմնվում է 2004թ. Ընդունված «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2005թ որոշման վրա:<br>2009 թվականին տարածքային կառավարման նախարարության աշխատակազմում փաստաթղթաշրջանառություն ն իրականացվել է "Mulberry" | Հայաստանի Հանրապետության բոլոր 48 քաղաքային վարչական մարմինները կմիանան «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթերի շրջանառության համակարգին: | | Արտակ ՔյուրումյանMu lberry (ինտրանետ) համակարգում տեղեկատվությ ան փոխանակումը հիմնականում կատարվում է պետական մարմինների միջև: Համակարգն |

| | | | | |
|---|---|---|---|---|
| միասնական ձևի ապահովում, մի քանի ստորաբաժանումների միաժամանակյա աշխատանքի ապահովում և փաստաթղթերի կորստի բացառում: Համակարգը ներդրողների խոսքերով, ծրագրի ամենամեծ առավելությունն այն է, որ վերահսկելի է դառնում աշխատակազմի գործունեությունը:<br>Նպատակ է սահմանվել Mulberry էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգը ներդնել 1000-ից ավելի բնակչություն ունեցող բոլոր համայնքներում: Ծրագրված է 2014թ.-ին համակարգը ներդնել 500 համայնքում | համակարգով: 2009 թվականի ընթացքում տարածքային կառավարման նախարարություն ստացվել, մշակվել և “Mulberry” համակարգի միջոցով գրանցվել է 14131 մտից փաստաթուղթ, որից դիմումներ քաղաքացիներից՝ 653, գրություններ քաղաքացիների դիմումների հիմքով՝ 539, գրություններ՝ 10000, այլ գրություններ(որոշումներ, քաղվածքներ, արձանագրություններ)՝ 2939: Նույն ժամանակահատվածում իրականացվել է 7429 ելից փաստաթղթերի առաքում:<br>2013թ. հուլիսի 1-ի դրությամբ համակարգը ներդրված էր քաղաքային 48 համայնքներից 45-ում: Մնացած համայնքներում (Ախթալա, Շամլուղ և Դաստակերտ)լրացուցիչ կազմակերպական, մարդկային, տեխնիկական և տեխնոլոգիական խնդիրներ կային: ՀՀ տարածքային կառավարման նախարարությունից ստացված տեղեկատվության համաձայն, հաշվետվությունը գրելու պահին համակարգը | | | ինքնին հանրությանը հասու չի դարձնում կառավարությ ան ունեցած որևէ տեղեկատվությ ուն: Սակայն այն կարող է օգտակար լինել քաղաքացիներ ից ստացված նամակներին արագ պատասխանել ու համար: Այն կարող է նաև բարելավել կառավարությ ան գործառույթներ ի որակը, տեղեկատվակ ան հոսքերը, տվյալների պահպանումը և այլն: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | տեխնիկապես ներդրվել է քաղաքային բոլոր համայնքներում: Մոտ 300 բնակիչ ունեցող Դաստակերտի քաղաքապետարանում ուսուցման դասընթացներին մասնակցելու համար չկան համապատասխան կադրեր, իսկ Լոռու մարզի Ախթալայի և Շամլուղի համայնքներում առկա են տեխնիկական բնույթի խնդիրներ՝ կապված կապի ոչ բավարար որակի հետ: Այդ կապակցությամբ դիմել են համապատասխան բջջային օպերատորներին՝ վերոնշյալ խնդրին լուծում տալու նպատակով: Գյումրու քաղաքապետարանում աշխատանքները դեռևս ընթացքի մեջ են, քանի որ քաղաքապետարանը նպատակ ունի զուգահեռաբար ներդնել նաև «Մեկ պատուհան» համակարգ: Քաղաքապետարանի պաշտոնյաների հավաստմամբ աշխատանքները պետք է ավարտվեին 2013 թ. հունիսին: | | | |
| Գործարարության զարգացման և ներդրումային դաշտի բարելավմանը խոչընդոտող պայմանների վերացման համար տնտեսության մեջ կիրառվում է "գիլյոտինի սկզբունքը": Դա գործիք է, | 2011 թ. նոյեմբերի 3-ին Հայաստանում "կարգավորիչ գիլյոտինի" ծրագիրն իրականացնելու մտադրությունների մասին | | | ԲԿԳ շրջանակներում ԱՀՄ հետազոտող Արտակ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| որն իրականացնում է բիզնես միջավայրին առնչվող նորմատիվ-իրավական ակտերի ամենաարագ ամփոփումը: "Գիլյոտինի" էությունը կայանում է նրանում, որ այն արագ կերպով ուսումնասիրում է առկա իրավական ակտերի հսկա բազան և որոշում տնտեսապես անաարդյունավետները կարճաժամկետ և երկրաժամկետ հեռանկարների համար: | հուշագիր է ստորագրվել ԵԱՀԿ, Հայաստանի կառավարության, "Զարգացման ավստրիական գործակալության", ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության Համաշխարհային բանկի և ՄԱԶԾ (ՄԱԿ-ի համընդհանուր զարգացման ցանց) միջև: Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ծրագրի իրականացման գրասենյակ» (այսուհետ՝ ՕԿԱԿ ԾԻԳ) պետական հիմնարկը ստեղծվել է 2011թ.1 և իր գործունեությունն սկսել է 2012թ. մայիսից: ՀՀ կառավարությունն արդեն իսկ ընդունել է ՕԿԱԿ ԾԻԳ-ի կողմից պատրաստված լիցենզավորման պարզեցման, էլեկտրոնային հաղորդակցության, էլեկտրաէներգիայի, գազամատակարարման և ջրային տնտեսության ոլորտներին, դեղերի արտադրությանը, դեղատնային գործունեությանը, բժշկական օգնության և սպասարկման լիցենզավորմանը վերաբերող առաջարկությունները: | | | Քյուրումյանի կարծիքով այս պարտավորութ յունը կատարվել է և անհրաժեշտ է ձևավորել դրա վրա հիմնված նոր պարտավորութ յուն, որում կնշվեն Հայաստանում բիզնես միջավայրի բարելավման հստակ նպատակներ: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Հանրային ծառայությունների ոլորտի մասին օրենքների փաթեթը (վերաբերում է էներգետիկայի և հեռահաղորդակցության բնագավառներին) ԱԺ-ում անցել է երկու ընթերցում: Բարելավվում են, հիմնականում, հոսանքի միացման աշխատանքները քաղաքացիների կամ բիզնեսի կողմից, կարգավորվում է փոքր ՀԷԿ-երի կառուցման լիցենզավորման գործընթացը: Հեռահաղորդակցության ոլորտում կրճատվում է երկու տեսակի լիցենզիա, փոխարենը դրվում է ծանուցման մեխանիզմ: Կապի բնագավառում ներմուծվում է “number portability” գաղափարը. այսինքն՝ լինելով մի օպերատորի սպասարկման դաշտում, հնարավոր է կամավոր կերպով փոխել օպերատորին՝ առանց փոխելու հեռախոսահամարը: Էապես պարզեցվել են տաքսի ծառայությունների հիմնման և գործունեության հետ կապված գործընթացները՝ կրճատվել են մի շարք տեղեկանքներ և քայլեր, որոնք մինչ այդ տաքսի ծառայությունը պարտավոր էր իրականացնել լիցենզիա | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | ստանալու և գործունեություն ծավալելու համար: Փոփոխություններ են կատարվել նաև բեռնափոխադրումների ոլորտում: Առողջապահության ոլորտի նախագծերը դեռևս քննարկման փուլում են: Դրանք, հիմնականում, վերաբերում են դեղատնային գործունեությանը, ինչպես նաև դեղերի գրանցման ընթացակարգին: Քննարկվող ոլորտում ՀՀ կառավարության կողմից զուգահեռաբար իրականացվում են նաև առավել խորքային բարեփոխումներ: Այժմ ՕԿԱԿ ԾԻԳ-ն զբաղված է հարկային, մաքսային, ձեռնարկատիրության, արտաքին և միջազգային հարաբերությունների, մաշկույթի և սոցիալական ոլորտների, օրենսդրական կարգավորման խնդիրների ուսումնասիրությամբ, ինչպես նաև հողային օրենսդրության բարեփոխումներով: | | | |
| ավարտել կենսաչափական կողմնորոշիչ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնականացման քարտերի | 2012 | կդյուրացնի բոլոր քաղաքացիների համար հանրապետության ամբողջ տարածքում էլեկտրոնային | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| համակարգի ներդրումը | | ծառայություններից օգտվելը, շարունակել էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրման աշխատանքը՝ առաջնահերթ համարելով այն ոլորտները, որտեղ դրանց կիրառումն առավել արդյունավետ է բնակչության և գործարարների կողմից ժամանակային ծախսերի կրճատման, կառավարման թափանցիկության ու վերահսկելիության ավելացման առումով | | |
| ներդնել բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի, եկամտի հայտա-րարագրերը հանրությանը հասանելի դարձնելու մեխանիզմներ, ստեղծել քաղաքացի-գործադիր իշխանություն հարաբերություններում մարդկանց սահմանադրական իրավունքները հարգելու և ապահովելու անհրաժեշտ երաշխիքներ | 2012 | | | |
| ավարտին հասցնել կենսաչափական կողմնորոշիչ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնականացման քարտերի համակարգի ներդրումը, | 2013<br>2012 թ կառավարության ծրագրում այս նպատակը նույնությամբ կրկնվում է | կդյուրացնի բոլոր քաղաքացիների համար հանրապետության ամբողջ տարածքում էլեկտրոնային ծառայություններից օգտվելը | | |
| շարունակել էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրման աշխատանքը՝ առաջնահերթ համարելով այն ոլորտները, որտեղ դրանց կիրառումն առավել արդյունավետ է՝ բնակչության և | 2013 | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| գործարարների կողմից ժամանակային ծախսերի կրճատման, կառավարման թափանցիկության ու վերահսկելիության ավելացման առումով | | | | |
| նոտարական ծառայությունների ոլորտում ներդնել էլեկտրոնային համակարգ՝ նպատակ ունենալով ծառայությունները մատուցել «Մեկ պատուհանի» սկզբունքով, | 2013 | | | |
| Ավարտին հասցնել կենսաչափական կողմնորոշիչ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնականացման քարտերի համակարգի ներդրումը կդյուրացնի բոլոր քաղաքացիների համար հանրապետության ամբողջ տարածքում էլեկտրոնային ծառայություններից օգտվելը, | 2014<br>2012 և 2013 թթ կառավարության ծրագրերում այս նպատակը նույնությամբ կրկնվում է | կդյուրացնի բոլոր քաղաքացիների համար հանրապետության ամբողջ տարածքում էլեկտրոնային ծառայություններից օգտվելը, | | |
| Շարունակել էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրման աշխատանքը՝ առաջնահերթ համարելով այն ոլորտները, որտեղ դրանց կիրառումն առավել արդյունավետ է՝ բնակչության և գործարարների կողմից ժամանակային ծախսերի կրճատման,կառավարման թափանցիկության ու վերահսկելիության ավելացման առումով | 2014<br>2013 թ կառավարության ծրագրում այս նպատակը նույնությամբ կրկնվում է | | | |
| Նոտարական ծառայությունների ոլորտում ներդնել էլեկտրոնային համակարգ՝ նպատակ ունենալով ծառայություններւ մատուցել «Մեկ պատուհան» սկզբունքով | 2014<br>2013 թ կառավարության ծրագրում այս նպատակը նույնությամբ կրկնվում է | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համակարգում բարեփոխումների իրականացում, այդ թվում` Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների միասնական էլեկտրոնային ռեեստրի ստեղծում | 2011<br>կադաստրային տվյալների միասնական էլեկտրոնային բազայի ստեղծում<br><br>քաղաքային բնակավայրերում ինքնակամ զբաղեցված հողամասերի առկայությամբ գույքի օրինական մասի նկատմամբ իրավունքների պետական գրանցման սահմանափակման վերացում<br><br>ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կորպորատիվ ցանցի տրամաբանական միացում այն բոլոր ցանցերին, որոնք օգտվում են և որոնց տվյալները անհրաժեշտ են անշարժ գույքի ռեեստրի վարման համար<br><br>իրավունքի պետական գրանցման վկայականների ձևաթղթերի փոփոխություն<br><br>անշարժ գույքի չափագրման (տեղազննության աշխատանքների իրականացման կանոնակարգում (տեղեկատվության տրամադրման համար | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | տեղազննության իրականացման պահանջի վերացում, գույքի չափագրման պահանջ միայն առաջնային գրանցման կամ դիմումի հիման վրա՝ փոփոխությունների առկայության դեպքում)<br><br>անշարժ գույքի չափագրման աշխատանքների մասնակի մասնավորեցում<br>Երևան քաղաքում սպասարկման գրասենյակների ստեղծում<br><br>Երևան քաղաքում տարածքային ստորաբաժանումների քանակի օպտիմալացում<br><br>անշարժ գույքի կադաստրի տվյալների վերաբերյալ տեղեկա- տվություն (այդ թվում՝ նաև միասնական տեղեկատվություն) ստանալու համար դիմումների առցանց՝ կոմիտեի պաշտոնական վեբ-կայքի միջոցով ներկայացման, այդ թվում նաև էլեկտրոնային վճարման համակարգի ներդրում<br><br>որոշ կատեգորիաների դիմողների համար իրավունքի | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | պետական գրանցման դիմումների և իրավահաստատող փաստաթղթերի առցանց ներկայացման համակարգի ներդրում<br><br>կադաստրային գործերի էլեկտրոնային արխիվի նյութերի՝ ինտերնետ համացանցի միջոցով առցանց դիտարկման և փաստաթղթերի էլեկտրոնային պատճենների ներբեռնման համակարգի ներդրում | | | |
| <<Ինտերնետ ցանցում պետական մարմինների պաշտոնական կայքերին ներկայացվող պահանջները հաստատելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագծի<br><br>Համաձայն ՀՀ Նախագահի 2009 թ. հունիսի 26-ի <<Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության հայեցակարգը հաստատելու մասին>> ՆԿ-97-Ն կարգադրության՝անհրաժեշտ է մշակել <<Ինտերնետ ցանցում պետական մարմինների պաշտոնական կայքերին ներկայացվող պահանջները հաստատելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագիծը։ Որոշման նախագծի նպատակը Հայաստանի Հանրապետությունում պետական մարմինների պաշտոնական | 2011 | Որոշման նախագծի ընդունումը և կիրարկումը կապահովի Հայաստանի Հանրապետությունում պետական մարմինների պաշտոնական ինտերնետային կայքերի տեխնիկական և կազմակերպչական բնույթի խնդիրների լուծումները, անվտանգության ապահովման մեխանիզմները, ինչպես նաև պետական մարմինների պաշտոնական ինտերնետային կայքերի բովանդակության ներկայացման նկատմամբ միասնական մոտեցումները։ | Ներկայումս ՀՀ օրենսդրությամբ Հայաստանի Հանրապետությունում լիարժեք կարգավորված չեն պետական մարմինների պաշտոնական ինտերնետային կայքերի ստեղծման, շահագործման և սպասարկման միասնական մոտեցումներ։ Միջոցառումներ են ձեռնարկվում պետական մարմինների պաշտոնական ինտերնետային կայքերի անվտանգության | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| ինտերնետային կայքերի տեխնիկական, տեխնոլոգիական և կազմակերպչական բնույթի խնդիրները, անվտանգության ապահովման մեխանիզմները, ինչպես նաև բովանդակության նկատմամբ միասնական մոտեցումները կարգավորելն է:<br><br>Որոշման նախագիծը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում պետական մարմինների պաշտոնական ինտերնետային կայքերի ստեղծման, շահագործման և սպասարկման միասնական քաղաքականությունը | | | ապահովման ուղղությամբ: Հաճախ պետական մարմինների պաշտոնական ինտերնետային կայքերի վրա հարձակումներ են տեղի ունենում հակերների կողմից, ուստի անհրաժեշտ է ցուցաբերել միասնական մոտեցում ինտերնետային կայքերի անվտանգության ապահովման խնդիրներն իրականացնելու ուղղությամբ: | |
| ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի և Նորվեգիայի Թագավորության կադաստրի և քարտեզագրության գերատեսչության (Ստատենս Կարտվերկ) միջև կնքված պայմանագրի իրականացման շրջանակներում ներդնել «Անշարժ գույքի արդյունավետ գրանցում և քարտեզագրման ծառայություններ Հայաստանի համարե ծրագիրը, որի հիմնական նպա- տակն է գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման ընթացակարգերի էլեկտրոնային եղանակով իրականացման գործողությունների ծրագիրը և ապահովել տեղեկատվության, այդ թվում՝ գրաֆիկական տեղեկատվության | Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի և Նորվեգիայի Թագավորության կադաստրի և քարտեզագրության գերատեսչության (Ստատենս Կարտվերկ) միջև կնքված պայմանագրի իրականացման շրջանակներում ներդնել «Անշարժ գույքի արդյունավետ գրանցում և քարտեզագրման ծառայություններ Հայաստանի համարե ծրագիրը, որի հիմնական նպատակն է գույքի նկատմամբ իրավունքների | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| (կադաստրային քարտեզների), հասանելիությունը կոմիտեի վեբ-կայքի միջոցով: | պետական գրանցման ընթացակարգերի էլեկտրոնային եղանակով իրականացման գործողությունների ծրագիրը և ապահովել տեղեկատվության հասանելիությունը կոմիտեի վեբ-կայքի միջոցով: Նորվեգիայի արտաքին գործերի նախարարությունը Նորվեգիայի կառավարության անունից 2009 թվականի նոյեմբերի 5-ին հատկացրել է մինչև 10 000 000 նորվեգական կրոն (01.06.2010 դրությամբ - 1.560.000 ԱՄՆ-ի դոլար, 1.270.000 եվրո) ծրագրի իրականացման համար: | | | |
| ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համակարգում բարեփոխումների իրականացում, այդ թվում՝ Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների միասնական էլեկտրոնային ռեեստրի ստեղծում<br><br>Բարեփոխումների հիմնական նպատակը և արդյունքը պետք է հանդիսանա համակարգի զարգացմանը խոչընդոտող գործոնների վերացումը և արդիական, զարգացող տեղեկատվական հասարակության նորանոր պահանջները բավարարելու ունակ՝ տեղեկատվական | նախատեսվում է իրականացնել համակարգի բարեփոխմանն ուղղված միջոցառումներ հետևյալ հիմնական ուղղություններով՝<br>1) ինստիտուցիոնալ բարեփոխումներ.<br>2. համակարգի ավտոմատացմանն ուղված բարեփոխումներ.<br>3. իրավական բարեփոխումներ.<br>Բարեփոխումների նշված ուղղությունները միմյանց հետ սերտորեն փոխկապակցված են և դրանց համալիր գործողության հաջողության | Բարեփոխումների իրականացման արդյունքում նախատեսվում է՝<br>1) կադաստրային տվյալների միասնական էլեկտրոնային բազայի ստեղծում.<br>2) քաղաքային բնակավայրերում ինքնակամ զբաղեցված հողամասերի առկայությամբ գույքի օրինական մասի նկատմամբ իրավունքների պետական գրանցման սահմանափակման վերացում.<br>3) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| տեխնոլոգիաների կիրառման բարձր մակարդակով համակարգի ձևավորման համար համապատասխան իրավական և ինստիտուցիոնալ հիմքերի ձևավորումը: | դեպքում միայն կարելի է հասնել ակնկալվող գերակա նպատակներին: | պետական կոմիտեի կորպորատիվ ցանցի տրամաբանական միացում այն բոլոր ցանցերին, որոնք օգտվում են, և որոնց տվյալներն անհրաժեշտ են անշարժ գույքի ռեեստրի վարման համար.<br>4) իրավունքի պետական գրանցման վկայականների ձևաթղթերի փոփոխություն.<br>5) անշարժ գույքի չափագրման (տեղազննության աշխատանքների իրականացման կանոնակարգում) տեղեկատվության տրամադրման համար տեղազննության իրականացման պահանջի վերացում, գույքի չափագրման պահանջ միայն առաջնային գրանցման կամ դիմումի հիման վրա՝ փոփոխությունների առկայության դեպքում).<br>6) անշարժ գույքի չափագրման աշխատանքների մասնակի մասնավորեցում.<br>7) երևան քաղաքում սպասարկման գրասենյակների ստեղծում.<br>8) երևան քաղաքում տարածքային ստորաբաժանումների քանակի օպտիմալացում.<br>9) անշարժ գույքի կադաստրի | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | տվյալների վերաբերյալ տեղեկատվություն (այդ թվում՝ նաև միասնական տեղեկատվություն) ստանալու համար դիմումների առցանց՝ Կոմիտեի պաշտոնական վեբ-կայքի միջոցով ներկայացնելու, այդ թվում՝ նաև էլեկտրոնային վճարման համակարգի ներդրում.<br>10) որոշ կատեգորիաների դիմողների համար իրավունքի պետական գրանցման դիմումների և իրավահաստատող փաստաթղթերի առցանց ներկայացնելու համակարգի ներդրում.<br>Կադաստրային գործերի էլեկտրոնային արխիվի նյութերի՝ ինտերնետ համացանցի միջոցով առցանց դիտարկման և փաստաթղթերի էլեկտրոնային պատճենների ներբեռնման համակարգի ներդրում: | | |
| «Հայաստանի Հանրապետությունում կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնականացման քարտերի համակարգի գործարկումե գերակա խնդրի | Նշված խնդիրները լուծելու համար 2011 թվականին անհրաժեշտ է գործարկել Հայաստանի Հանրապետությունում կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնականացման քարտերի | Նշված գերակա խնդրի իրականացման արդյունքում՝<br>1) կնվազի անձը հաստատող փաստաթղթերի կեղծման հավանականությունը.<br>2) հնարավորություն կտրվի պարզեցնելու և ավտոմատացնելու անձի նույնականացման գործընթացը. | Ներկայումս ՀՀ-ում կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնականացման քարտերի համակարգի բացակայության | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | համակարգը: «Հայաստանի Հանրապետությունում կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնականացման քարտերի համակարգի գործարկումե գերակա խնդրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել համակարգի շահագործումն իրականացնող ծառայողների ուսուցում: | 3) կմեծանա «անցանկալիե անձանց հայտնաբերման հավանականությունը. 4) ՀՀ քաղաքացիները հնարավորություն կունենան Եվրամիության անդամ պետություններ մուտքի վիզաներ ստանալ պարզեցված ընթացակարգով: | պատճառով երբեմն խոչընդոտվում է ՀՀ քաղաքացիների ազատ տեղաշարժվելու իրավունքի իրացման գործընթացը: | |
| Պետական գույքի օտարման գործարքների թափանցիկության և հրապարակայնության ապահովում | 2012 պետական գույքի օտարման գործարքների թափանցիկության և հրապարակայնության ապահովման նպատակով պետական գույքի օտարման աճուրդներն էլեկտրոնային եղանակով իրականացնելու համար նախապայմանների ստեղծում | Պետական գույքի օտարման նպատակով կազմակերպվող աճուրդներն էլետրոնային եղանակով իրականացնելու արդյունքում աճուրդը կլինի առավել թափանցիկ, հրապարակային, հնարավորություն կընձեռի հասարակության առավել լայն զանգվածներին մասնակցելու աճուրդների, ինչը կնպաստի պետական գույքի աճուրդների կայացման աստիճանի բարձրացմանը, ինչպես նաև օտարերկրյա ներդրումների խթանմանը: Աճուրդին մասնակցելու ավելի դյուրին պայմանների առկայությունը կմեծացնի աճուրդներին մասնակցող գնորդների թիվը, ինչը կնպաստի | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | օտարվող պետական գույքի մեկնարկային գնի բարձրացմանը, ՀՀ պետական բյուջե լրացուցիչ գումարների մուտքագրմանը, ինչպես նաև կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը: | | |
| Համայնքների սոցիալ-տնտեսական իրավիճակը բնութագրող շուրջ 650 տվյալների առկայություն | 2013<br>«Հայաստանի Հանրապետության համայնքների տեղեկատվական բազայի թարմացման նպատակով տվյալների հավաքագրման, ամփոփման և տեղեկատվական բազա մուտքագրման կարգը սահմանելու մասին» իրավական ակտի նախագծի ընդունման<br><br>Նախատեսվում է ՀՀ մարզպետարանների կողմից տեղեկատվության հավաքագրման, ամփոփման մեթոդաբանության մշակում և հաստատում: | Համայնքների սոցիալ-տնտեսական իրավիճակի վերաբերյալ շարունակական թարմացվող տեղեկատվական բազայի ստեղծում | | |
| «Ինտերնետ կառավարման սկզբունքները հաստատելու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի ընդունման<br><br>Արձանագրային որոշման նախագծի հիմնական նպատակն է՝ | | Արձանագրային որոշման նախագծի ընդունմամբ կձևավորվեն ինտերնետ կառավարման հիմնական սկզբունքներ՝<br>1) կսահմանվեն ինտերնետ ցանցի չեզոքության | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1) կարգավորել ինտերնետ ծառայությունների մատուցման ոլորտը.<br>2) ձևավորել ինտերնետ կառավարման հիմնական սկզբունքներ.<br>3) ստեղծել միջգերատեսչական աշխատանքային խումբ.<br>4) ձևավորել ինտերնետ կառավարման ոլորտում պետական քաղաքականության սկզբունքներ.<br>5) աջակցել մասնավոր ոլորտում ցանցերի շահագործման, հուսալիության, անվտանգության և զարգացման խնդիրներին.<br>6) աջակցել ինտերնետ կառավարման ոլորտում միջպետական կազմակերպությունների և այլ կազմակերպությունների հետ համագործակցությանը.<br>7) աջակցել տեղեկատվության և առաջատար փորձի փոխանակմանը.<br>8) զարգացնել Հայաստանի Հանրապետությունում ինտերնետ կառավարման ոլորտը: | | սկզբունքները.<br>2) կնպաստի՝<br>- ՀՀ բնակչությանը ՀՀ տարածքում իրենց կայքերի տեղակայման բարենպաստ պայմանների ստեղծմանը,<br>- DNSSEC անվտանգ արձանագրության տարածմանը,<br>- ԱյՓի 6-րդ վարկածի տարածմանը<br>- օգտվողների միջև ցանցային էթիկետի նորմերի ներդրմանը,<br>- ինտերնետ համարակալման համակարգի ներդրմանը,<br>- դինամիկ երթուղման համակարգի ներդրմանը,<br>- ինտերնետի տրաֆիկի տեղական փոխանակման կենտրոնների ստեղծմանը.<br>3) կաջակցվի պետական, մասնավոր, հասարակական, գիտական, ճյուղային ցանցային պատահարների արձագանքման կառույցների համագործակցությանը.<br>4) կսատարվեն՝<br>- այնպիսի տեխնոլոգիաների ներդրմանը, որոնք թույլ կտան պահպանել անհատական տվյալների պաշտպանությունը,<br>- նորամուծությունների անարգելք մուտքը ՀՀ ինտերնետ հասանելիության ծառայություններ մատուցողների և օգտվողների համար՝ ներառյալ | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | ինտերնետ-տնտեսությունը, էլեկտրոնային առևտուրը, հեռաբժշկությունը, հեռահար կրթությունը, նոր տեխնոլոգիական լուծումները. 5) կստեղծվի միջգերատեսչական աշխատանքային խումբ, որը կապահովի ոլորտում միջազգային համագործակցությունը, միջազգային փորձի փոխանակումը և ոլորտում առկա խնդիրների վերհանման ու լուծման գործընթացները | | |
| Հայաստանի Հանրապետության կենտրոնական կառավարման մարմինների կողմից բաց ընթացակարգով շրջանակային համաձայնագրերով կատարվող էլեկտրոնային գնումների համակարգի լիարժեք գործարկման համար նախապայմանների ապահովում<br><br>2012 թվականի հունվարի 1-ից ներդրվել է էլեկտրոնային գնումների համակարգը, և ՀՀ պետական կառավարման մարմիններն իրենց կարիքների համար բաց ընթացակարգով գնումներն իրականացնում են էլեկտրոնային եղանակով: Սակայն այս մեկ տարվա ընթացքում բացահայտվեցին համակարգում առկա բացերն ու խնդիրները, որոնք | 2013 | Էլեկտրոնային գնումների համակարգի լիարժեք գործարկման դեպքում հնարավորություն կստեղծվի համակարգը որոշակիորեն զերծ պահել հնարավոր բացասական երևույթներից: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է հակամրցակցային համաձայնություններին և ստվերային պայմա-նավորվածություններին, որոնք լրջորեն ազդում են գնումների արդյունավետության վրա: Բացի դրանից՝ համակարգի լիարժեք գործարկման արդյունքում կբարձրանա պետական ծախսերի կառավարման արդյունավետությունը, | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| վերաբերում են ինչպես համակարգի SS միջավայրին, այնպես էլ՝ համակարգի անհամապատասխանություններին, թե՛ ՀՀ գնումների ոլորտը կարգավորող օրենսդրությանը, և թե՛ համակարգի ձեռնարկներում ներկայացված քայլերի ամբողջականությանն ու հաջորդականությանը: Միաժամանակ, համակարգն ամբողջությամբ տեղայնացված չէ, համակարգում առկա են մի շարք ենթաէջեր և փաստաթղթեր, որոնք թարգմանված չեն հայերեն, ինչպես նաև համակարգում առկա են սխալ թարգմանությունների տարբեր օրինակներ: Համակարգի ամբողջական գործողությունն ապահովելու համար անհրաժեշտ է գնել նաև նոր մոդուլներ: Մասնավորապես, նախատեսվում է գնել հետևյալ մոդուլները՝ գնումների պլանավորման, պայմանագրերի գրանցման, հաշվետվության և էլեկտրոնային կատալոգների մոդուլները, քանի որ, առանց վերջիններիս, հնարավոր չի լինում ստանալ գնումների վերաբերյալ ամբողջական վիճակագրություն և իրականացնել մոնիթորինգ: Այս կապակցությամբ 2013 թվականին նախատեսվում է միջազգային դոնոր | | կապահովվի մրցակցության ավելի լայն շրջանակ, կարդիականացվի պետական վարչարարությունը: Կնվազեն պայմանագրերի կատարման ժամկետները և տվյալների մշակման ծախսերը՝ թե՛ կառավարության, թե՛ մատակարարների համար, ինչի արդյունքում կնվազեն նաև ձեռք բերվելիք ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գները: | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| կազմակերպությունների հետ վարել բանակցություններ: Նշված խնդիրները հնարավորություն չեն տալիս լիարժեք գործարկելու էլեկտրոնային գնումների համակարգը, մասնավորապես, նշված համակարգի միջոցով կազմակերպելու բաց ընթացակարգով շրջանակային համաձայնագրերով գնումների գործընթացները: | | | | |
| Էլեկտրոնային նոտարի համակարգի ներդրում և փորձնական գործարկում<br><br>Նոտարական գործողություններ կատարելիս նոտարը պարտավոր է քաղաքացիներից պահանջել համապատասխան փաստաթղթեր, որի արդյունքում քաղաքացին ստիպված է լինում դիմել համապատասխան պետական մարմին՝ անհրաժեշտ փաստաթղթերն ստանալու նպատակով: Բացի դրանից չկա կտակների միասնական էլեկտրոնային բազա, որի արդյունքում երբեմն կտակի (կտակների) առկայության փաստը պարզվում է ժառանգությունն ընդունվելուց հետո, ինչն էլ իր հերթին հանգեցնում է վեճերի դատական քննությանը, և, ըստ այդմ, լրացուցիչ ծանրաբեռնելով դատական համակարգը: Նշված խնդիրների լուծման, ինչպես նաև նոտարական | 2013 | Նոտարիատում էլեկտրոնային նոտարի համակարգի ներդրմամբ կբարձրանա նոտարական գործողությունների որակը, կնվազեն գործողությունների կատարման ժամկետները, հնարավորություն կտրվի նոտարի մոտ «Մեկ պատուհան» կանգառի սկզբունքով ծառայությունների ստացումը, կնվազի քաղաքացիների՝ տարբեր պետական մարմիններին դիմելու անհրաժեշտությունը՝ նվազեցնելով կոռուպցիոն ռիսկերը: | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| գործողությունների որակի բարձրացման և ժամկետների կրճատման լավագույն միջոց կարող է հանդիսանալ նոտարիատում ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ներմուծումը՝ էլեկտրոնային նոտարի համակարգի ներդրումը: | | | | |
| | | | | |

**Հաշվետվողականություն**

| Նպատակ և խնդիրներ | Գործողություններ և ժամկետներ | Ակնկալվող արդյունքներ | Առկա արդյունքներ | Գնահատական |
|---|---|---|---|---|
| կատարելագործել պետական համակարգի աշխատողների վարքագծի կանոնները և սահմանել պատասխանատվություն՝ խախտումների ու անհարկի խոչընդոտների ստեղծումը կանխելու համար: | | | | |
| Ռազմավարական ծրագրերի հիման վրա ներդնել պետական կառավարման մարմինների գործունեության արդյունքների գնահատման համակարգ և դրա հիման վրա իրականացնել նյութական խրախուսում: | 2008-2012 | | Պետական կառավարման համակարգում հաշվետվողականության ապահովման նպատակով ներդրվել են նոր սկզբունքներ և մոտեցումներ.<br>▪ ցանկացած միջոցառում կամ միջոցառումների ծրագիր, որ ներկայացվում է որևէ պետական մարմնի կողմից, պետք է պարունակի ծրագրի արդյունքների հստակ ձևակերպում, ընդ որում այդ արդյունքները պետք է | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | լինեն չափելի,<br>▪ պետական կառավարման մարմինները պարբերաբար ներկայացնում են կատարողական հաշվետվություններ, որոնց հիման վրա գնահատվում է նրանց իրականացրած աշխատանքը,<br>▪ կատարողականի հիման վրա գնահատվում է ոչ միայն պետական մարմնի, այլև ամեն մի աշխատակցի կատարած աշխատանքը:<br>Նոր սկզբունքներն արդեն երկու տարի հաջողությամբ գործում են, ընդ որում նախատեսվում է անցնել նաև կատարողականի հիման վրա վարձատրման նոր համակարգի, որը կկիրառվի արդեն 2011 թվականի ընթացքում: | |
| Պետական գույքի կառավարման ոլորտում կարևորվելու են պետությանը պատկանող գույքային իրավունքների համապարփակ հաշվառման կիրառումը և պետական կառավարիչների ինստիտուտի ստեղծումը: | 2008-2012 | | | |
| Բացառել հանրային կառավարման ոլորտում աշխատողների սեփական բիզնես շահերը | 2014 | | | |
| Իրականացնել աշխատանքներ բիզնեսի կողմից տարբեր տեսակի | 2014 | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| հաշվետվությունների միասնականացման նպատակով, | | | | |
| | 2012 թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ<br><br><<Քաղաքացիական ծառայողների էթիկայի կանոնագիրք>> ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Ակնկալվում է՝<br>1) ներդնել շահերի բախումը բացառելու և բացահայտելու մեխանիզմներ.<br>2.) կանոնակարգել քաղաքացիական ծառայողների կողմից նվերների ստացման և նվերներ տալու հետ կապված հարաբերությունները.<br>3) սահմանել քաղաքացիական ծառայողների կողմից ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ իրենց հայտնի դարձած տեղեկատվության օգտագործման հետ կապված որոշ սահմանափակումներ.<br>4) կանոնակարգել քաղաքացիական ծառայողի հետծառայողական գործունեության հետ կապված որոշ հարաբերություններ.<br>5) սահմանել էթիկայի կանոնների խախտման դեպքերում դրանց մասին տեղեկացման ընթացակարգերը: | | |
| Հարկ վճարողներին մատուցվող | 2012 | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| ծառայություններ | - հարկային և մաքսային մարմինների կողմից հարկ վճարողներին մատուցվող էլեկտրոնային ծառայությունների տեսակի և քանակի էական ավելացում՝ էլեկտրոնային եղանակով ներկայացվող հաշվետվությունների քանակի ավելացում, հարկային պարտավորությունների, հարկային հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ հիշեցում-ծանուցումների ուղարկման ավտոմատ համակարգի կիրառում<br>- հարկ վճարողների երեք սպասարկման սրահների գործարկում և սպասարկման միասնական ստանդարտների ներդրում, հարկ վճարողներին օժանդակող տեղեկատվության հրապարակում | | | |
| **Արդյունավետություն** | | | | |
| Նպատակ և խնդիրներ | Գործողություններ և ժամկետներ | Ակնկալվող արդյունքներ | Առկա արդյունքներ | Գնահատական |
| Զարգացնել պետական համակարգի ռազմավարական կառավարման ներուժը՝ ապակենտրոնացման համատեքստում կառավարման որոշակի գործառույթները փուլ առ փուլ | 2008-2012 | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| պատվիրակելով տեղական ինքնակառավարման մարմիններին: | | | | |
| Ռազմավարական ծրագրերի հիման վրա ներդնել պետական կառավարման մարմինների գործունեության արդյունքների գնահատման համակարգ և դրա հիման վրա իրականացնել նյութական խրախուսում: | 2008-2012 | | Գործառութային բարեփոխման հաջորդ փուլը ՀՀ պետական կառավարման մարմիններում բիզնես (աշխատանքային) գործընթացների ներդրման ծրագիրն է: Կառավարությունը նպատակադրված է այս ծրագիրն իրականացնել «գործարարության օրենքներով» կառավարելու և առաջնորդվելու, գործունեության արդյունավետությունն ու թափանցիկությունը հետևողականորեն բարձրացնելու միջոցով: Կարևոր խնդիր է ցանկալի արդյունքները հստակ ձևակերպելու և դրանց հսկողությունն իրականացնելու ուղղությամբ պետական կառավարման մարմինների կարողությունների զարգացումը: Բիզնես գործընթացների նկարագրությունն արդեն հաջողությամբ ավարտվել է պետական կառավարման 7 մարմիններում: Ուսումնասիրության արդյունքում կազմվել են գործընթացների կանոնակարգման միջոցառումների ծրագրեր: Համակարգի ներդրմամբ բոլոր նախարարություններում կձևավորվեն բիզնես գործընթացների հիերարխիկ ցանկը, գործընթացների | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | սխեմատիկ նկարագրությունը, հստակ պատկերացում կկազմվի քաղաքացիական ծառայողների իրավասությունների և պարտականությունների, ինչպես նաև ռեսուրսների օգտագործման օպտիմալության վերաբերյալ: Մշակվում և ներդրվում են ռիսկերի բացահայտման, վերլուծության, գնահատման, կանխարգելման և կառավարման, ինչպես նաև ներքին հսկողության և հաշվետվողականության համակարգերը: Կատարված աշխատանքի շնորհիվ պետական մարմինների կողմից իրականացվող գործառույթները դարձել են հստակ ձևակերպված, և հնարավոր է հեշտությամբ վերահսկել ցանկացած գործընթաց: Այս ամենը նշանակում է ռեսուրսների օպտիմալ օգտագործում, արդյունավետ և արագ աշխատանք, ինչպես նաև պետական կառավարման համակարգի հաշվետվողականության ապահովում: | |
| Ձևավորել վարչական տեղեկատվական ռեգիստրների (հիմնապաշարների) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորություններից բխող իրավունքների (քաղաքացիական | 2008-2012 | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| կացության, սեփականության, ձեռնարկատիրական գործունեության արտոնման ու թույլտվության և այլն) գրանցման և միասնականացված Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիր նույնականացման հնարավորություններով նիշավորմամբ (այդ թվում՝ միջազգային դասակարգումների հենքի վրա): | | | | |
| Կառավարությունը պետական կառավարման համակարգի կադրային ներուժի հետևողական ամրապնդման նպատակով մտադիր է զգալիորեն ավելացնել համակարգում աշխատելու գրավչությունը, աշխատանքի որակը և աշխատավարձի մակարդակը մրցունակ դարձնելով մասնավոր հատվածին՝ միջնաժամկետ հատվածում ձեռնպահ մնալով աշխատողների թվի ավելացումից: | 2008-2012 | | | |
| Կառավարությունը նախատեսում է շարունակել պետական կառավարմանը ոչ հատուկ գործառույթներից հրաժարվելու գործընթացները՝ հաշվի առնելով միջազգային փորձը: Այդ առումով կառավարությունը ձեռնամուխ է լինելու պետական և մասնավոր հատվածների միջև գործընկերության հայեցակարգի ներդրմանը, ինչն ապահովվելու է կարևորագույն ազգային ու տեղական ծրագրերի համատեղ մշակումը և իրականացումը, պետության այնպիսի գործառույթների բացառումը, որոնք կարող են վնասել | 2008-2012 | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| ազատ շուկայական մրցակցային հարաբերությունների բնականոն զարգացմանը: | | | | |
| Կառավարությունը պետական կառավարման գերակայություններից է համարում հանրային ծառայության բնագավառը կանոնակարգող օրենսդրության մշակումը և համակարգի կայացումը, ինչպես նաև որակյալ հանրային ծառայության համակարգի կայացման նպատակով հանրային ծառայողների վարձատրության ռազմավարության մշակումն ու իրականացումը: | 2008-2012 | | Կառուցվածքային և գործառութային բարեփոխումն իրականացվել է հետևյալ ուղղություններով.<br>▪ պետական կառավարման մարմիններում քաղաքական ու հայեցողական պաշտոնյաների ու աշխատակազմերի գործառույթների հստակ տարանջատում,<br>▪ պետական կառավարման մարմիններում ծառայությունների մատուցման, կանոնակարգման ու տեսչական գործառույթների հստակեցում:<br>Գործառութային և կառուցվածքային վերլուծության ենթարկելով ՀՀ պետական կառավարման բոլոր մարմինների գործունեությունը՝ սահմանվեցին պետական մարմնի տեսլականը, նպատակն ու խնդիրները, տարանջատվեցին ու հստակեցվեցին գործառույթները, կոնկրետացվեցին պետական մարմնին վերապահված ոլորտներն | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | ու բնագավառները: Բոլոր նախարարություններում և կառավարության առընթեր մարմիններում քաղաքականության մշակման գործառույթները տարանջատվեցին ծառայության մատուցման գործառույթներից: Գնահատվեց գործակալությունների գործունեությունը` այն առումով, որ դրանք պետք է մատուցեն միայն կառավարչական բնույթի ծառայություններ: Դրանց ոչ բնորոշ բոլոր տեսակի աշխատանքները ապակենտրոնացվեցին կամ պատվիրակվեցին տարածքային ու տեղական ինքնակառավարման մարմիններին կամ իրականացվեցին մասնավոր հատվածի հետ պայմանագիր կնքելու միջոցով: Լիցենզավորման, հավատարմագրման և համանման այլ գործառույթները վերապահվեցին գործակալություններին: | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Կառավարությունը քայլեր կձեռնարկի պետական և մասնավոր հատվածներում կորպորատիվ կառավարման մշակույթի ձևավորման և այն միջազգային լավագույն փորձին համապատասխանեցնելու, մասնավորապես, կապիտալի շուկաների զարգացման միջոցով օտարերկրյա ներդրումների հասանելիությունն ապահովելու ուղղությամբ: | 2008-2012 | | ▪ Պետական ձեռնարկություններում կառավարությունը նախաձեռնել է կորպորատիվ կառավարման սկզբունքների ներդրման գործընթացը: 2010 թվականի դեկտեմբերին կառավարությունը հավանության արժանացրեց Հայաստանի Հանրապետության կորպորատիվ կառավարման կանոնագիրքը:<br>▪ 2011 թվականի հունիսին կառավարությունն ընդունեց որոշում, համաձայն որի՝ 50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ ընկերությունները պետք է առաջնորդվեն Հայաստանի Հանրապետության կորպորատիվ կառավարման կանոնագրքով:<br>▪ 2008 թվականին կառավարության հավանությանն արժանացավ պետություն-մասնավոր հատված համագործակցության | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | հայեցակարգը: Նպատակը պետության և մասնավոր հատվածի գործընկերության (ՊՄԳ) մոդելի միջոցով խոշոր ներդրումային ծրագրերի իրականացման նախադրյալների ստեղծումն էր: Պետական և մասնավոր հատվածների գործընկերությունը ենթակառուցվածքների զարգացման և ծառայությունների մատուցման եղանակ է, որը ներգրավում է մասնավոր հատվածի ռեսուրսները և խրախուսման միջոցները: Սահմանափակ մրցակցության պայմաններում կառավարությունը հանդես է գալիս որպես պայմանագրի կողմ և կարգավորիչ: | |
| Տեսչական բարեփոխման նպատակը տեսչական գործընթացի արդյունավետության բարձրացումն է, ընդ որում այն ֆիսկալ նպատակ չի հետապնդում, այսինքն՝ տեսչության արդյունավետությունը չի չափվելու գանձված տուգանքների քանակով ու մեծությամբ: | 2008-2012, ՀՀ կառավարությունը հաստատեց տեսչական բարեփոխման նոր ռազմավարություն, ըստ որի տեսչական գործընթացը գործադիր իշխանության կողմից կիրառվող գործիք է՝ ուղղված օրենքների և այլ | Տեսչական բարեփոխման նպատակը տեսչական գործընթացի արդյունավետության բարձրացումն է | Այս ամենի արդյունքում կառավարությունը ՀՀ Ազգային ժողովի հաստատմանն է ներկայացրել «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որն ընդունվել է 2011 | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ պետական հսկողության ապահովմանը: Այն կոչված է աջակցելու տնտեսավարող սուբյեկտներին՝ գործել օրենսդրության շրջանակում: Սակայն տեսչական ստուգումը ռեսուրս և ժամանակ է կլանում տնտեսվարող սուբյեկտից, նաև տեսուչների՝ «իշխանությունը» չարաշահելու հակումը տեսչական գործընթացը դարձնում են առավել անարդյունավետ: Աշխատանքը ճիշտ չկազմակերպելու դեպքում տեսչական ստուգումը կարող է լրջորեն խոչընդոտել գործարար միջավայրը, սահմանափակել ներդրումները՝ միաժամանակ չլուծելով այն խնդիրները, որոնց լուծման համար պետությունը ռեսուրս է ներդնում: Տեսչական բարեփոխումը ներառում է՝ <br>▪ տեսչական մարմինների կրկնվող գործառույթների բացահայտում և բացառում, <br>▪ տեսչական | | թվականի հունիսին: Մեկնարկել են 4 տեսչություններում իրականացվող պիլոտային ծրագրերը: | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | մարմինների միջև տեղեկատվության փոխանակման արդյունավետ համակարգի ձևավորում,<br>▪ տվյալների միասնական բազայի ստեղծումը և առողջ համակարգման ապահովում,<br>▪ ռիսկի վրա հիմնված տեսչական ստուգման համակարգի ներդրում (հաճախակի, չհամակարգված և ոչ տեղին ստուգումը բացառելու նպատակով),<br>▪ տեսչական գործընթացում ստուգման ցանկերի և տեսուչների վարքագծի կանոնների ներդրում (որոնք նվազեցնում են անորոշությունը գործարարների համար),<br>▪ տեսուչների վերապատրաստում:<br>Բարեփոխման շրջանակում արդեն իսկ իրականացվել են հետևյալ աշխատանքները.<br>▪ ուսումնասիրվել են Հայաստանում գործող | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | տեսչությունների վերահսկման ոլորտները կարգավորող օրենքները, ենթաօրենսդրական ակտերը, կարգերը, տեխնիկական կանոնակարգերը (450 իրավական ակտ),<br>▪ քննարկումներ են կազմակերպվել գործող տեսչությունների ներկայացուցիչների, գործարարների, բիզնես ասոցիացիաների հետ՝ վերահսկման ոլորտում առկա խնդիրների վերաբերյալ գործարարների մոտեցումները և խնդիրները հասկանալու համար,<br>▪ ուսումնասիրվել է պետական վերահսկողության գործող ընթացակարգը, բացահայտվել են առկա խնդիրները,<br>▪ ուսումնասիրվել է պետական | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | վերահսկողության ընթացակարգերի վերաբերյալ միջազգային փորձը։ | | | |
| հանրությանը մատուցվող արդարադատության ոլորտի ծառայությունների մատչելիությունը բարձրացնելու համար գալիք հինգ տարիների ընթացքում ապահովել միասնական սպասարկման կենտրոնների միջոցով կամ առցանց «Մեկ կանգառ» սկզբունքով արդարադատության ոլորտի ծառայությունների գերակշիռ մասի տրամադրում պետության կողմից, | 2012 | | | |
| ուժեղացնել էթիկայի հանձնաժողովի դերը, օրենսդրության մեջ վերացնել այն դրույթները, որոնք ստեղծում են կոռուպցիոն ռիսկերի դրսևորման բարենպաստ միջավայր | 2012 | | | |
| ապահովել հակակոռուպցիոն ռազմավարության շրջանակում միջազգային կառույցների հետ ակտիվ համագործակցությունը, կատարել բիզնեսը և քաղաքականությունը սահմանազատելու, պետական կառավարման ապարատը բիզնեսից տարանջատելու գործուն քայլեր։ | 2012 | | | |
| պետական գույքի կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով մշակել և իրականացնել պետական գույքի կառավարման միասնական քաղաքականություն | 2013 | | | |
| իրականացնել հանրային ռեգիստրների | 2013 | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| հետազա բարեփոխում՝ որպես անձանց գույքային իրավունքների պաշտպանության գործուն մեխանիզմ, ապահովելով միասնական սպասարկման կենտրոնների կողմից մի շարք հանրային ռեգիստրների՝ «Մեկ պատուհանի» սկզբունքով ծառայությունների մատուցում | | | | |
| Հայաստանի Հանրապետության արխիվային գործի բնագավառում իրականացնել բարեփոխում, այդ թվում՝ ներդնել արխիվային ծառայության մատուցման էլեկտրոնային համակարգ: | 2013 | | | |
| Օպտիմալացնել պետական համակարգի ծախսերը | 2014 | | | |
| Պետական գույքի կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով մշակել և իրականացնել պետական գույքի կառավարման միասնական քաղաքականություն | 2014<br>2013 թ կառավարության ծրագրում այս նպատակը նույնությամբ կրկնվում է | | | |
| Իրականացնել հանրային ռեգիստրների հետազա բարեփոխում՝ որպես անձանց գույքային իրավունքների պաշտպանության գործուն մեխանիզմ՝ ապահովելով միասնական սպասարկման կենտրոնների կողմից մի շարք հանրային ռեգիստրների՝ «Մեկ պատուհան» սկզբունքով ծառայությունների մատուցումը | 2014<br>2013 թ կառավարության ծրագրում այս նպատակը նույնությամբ կրկնվում է | | | |
| Հայաստանի Հանրապետության արխիվային գործի բնագավառում իրականացնել բարեփոխում, այդ թվում՝ ներդնել արխիվային ծառայության | 2014<br>2013 թ կառավարության ծրագրում այս նպատակը նույնությամբ կրկնվում է | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| մատուցման էլեկտրոնային համակարգ: | | | | |
| Պետական ծախսերի կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով ծրագրային բյուջետավորման ներդրման ուղղությամբ իրականացվող բարեփոխումների շարունակում, այդ թվում՝<br>– բոլոր գերատեսչությունների կողմից ծրագրային բյուջետավորման ձևաչափով 2012 թվականի բյուջետային ֆինանսա- վորման հայտերի ներկայացում ծրագրային նոր կառուցվածքի և նոր դասիչների համակարգին համապատասխան<br>– մեթոդական ցուցումներին համապա- տասխան փորձարարական 3 գերա- տեսչությունների կողմից ՀՀ 2012-2014 թվականների ՄԺԾԾ-ի հայտի հետ մեկտեղ յուրաքանչյուրը 1-ական բյուջետային ծրագրի նկարագրի (անձնագրի) ներկայացում | 2011<br>ՀՀ պետական բյուջեով ծախսային ծրագրեր իրականացնող բոլոր գերատեսչությունների գծով նոր ծրագրային կառուցվածքի և այդ ծրագրերի նոր դասիչների համակարգի մշակում և կիրառման հետ կապված խորհրդատվության տրամադրում<br><br>բյուջետային ծրագրի նկարագրի (անձնագրի) ակազմման մեթոդական ցուցումների մշակում և համապատասխան գերատեսչություններին կիրառման հետ կապված խորհրդատվության տրամադրում | | | |
| Պետական պարտքի գրանցման և հաշվառման միասնական էլեկտրոնային համակարգի ներդրում | 2011<br>ՄԱԿ-ի առևտրի և զարգացման կազմակերպության Պարտքի կառավարման DMFAS ծրագրի թեսթավորում<br><br>բրիտանական համագործակցության քարտուղարության պարտքի | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | գրանցման և կառավարման CS-DRMS համակարգի թեսթավորում<br><br>պետական պարտքի գրանցման և հաշվառման համակարգերի վերաբերյալ խորհրդատվության ստացում և դրանցից մեկի ներդրման վերաբերյալ որոշման կայացում | | | |
| ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի և Նորվեգիայի Թագավորության կադաստրի և քարտեզագրության գերատեսչության (Ստատենս Կարտվերկ) միջև կնքված պայմանագրի իրականացման շրջանակներում ներդնել «Անշարժ գույքի արդյունավետ գրանցում և քարտեզագրման ծառայություններ Հայաստանի համար ծրագիրը, որի հիմնական նպատակն է գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման ընթացակարգերի էլեկտրոնային եղանակով իրականացման գործողությունների ծրագիրը և ապահովել տեղեկատվության, այդ թվում՝ գրաֆիկական տեղեկատվության (կադաստրային քարտեզների) հասանելիությունը կոմիտեի վերկայքի միջոցով | 2011<br>ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 9-ի N 1768-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի գործարար միջավայրի բարելավման միջացառումների ծրագրի 8.1. -ին և 8.2.-րդ ենթակետերի պահանջների համաձայն 2011 թվականին «Անշարժ գույքի արդյունավետ գրանցում և քարտեզագրման ծառայություններ Հայաստանի համար ներդրումային ծրագրի միջոցով կապահովվի գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման ընթացակարգերի պարզեցումը, ժամանակի և ծախսերի կրճատումը, առցանց ռեժիմով գույքի գրավադրման մասին տեղեկանքի ստացումը։ Անշարժ գույքի գործարքների | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | թափանցիկության բարձրացումը<br>կներդրվի Եվրոպական չափանիշներով ստեղծված անշարժ գույքի և այլ քարտեզների ապահովման համակարգ, ԵՄ-ի Ինսփայր դիրեկտիվներին համապատասխան | | | |
| Հարկային հսկողության մեխանիզմների արդիականացում | 2011<br>ՀՀ-ում պիտակավորման ենթակա ապրանքների պիտակավորման համակարգի ներդրում<br><br>ռիսկային չափանիշների հիման վրա ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության համակարգի ներդրում<br>ռիսկերի կառավարման հիման վրա ԱԱՀ-ի գերավճարների հայտերի ուսումնասիրության համակարգի ներդրում<br><br>երրորդ անձանցից ստացվող տեղեկությունների հարկային մարմնի տեղեկատվական բազայում ինտեգրում և կիրառման ընթացակարգերի մշակում<br><br>էներգետիկայի, կապի և հանքարդյունաբերության ոլորտներում ստուգումների | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | իրականացման ուղեցույցերի մշակում և ներդրում | | | |
| Հարկ վճարողների սպասարկման ծառայությունների որակի բարձրացում | 2011<br>հարկային և մաքսային մարմինների կողմից մատուցվող էլեկտրոնային ծառայությունների ավելացում՝ էլեկտրոնային եղանակով ներկայացվող հաշվետվությունների քանակի էական ավելացում և հիշեցում-ծանուցումների ուղարկման ավտոմատ համակարգի ներդրում<br><br>հարկ վճարողների առնվազն մեկ նոր սպասարկման կենտրոնի գործարկում և սպասարկման միասնական ստանդարտների ներդրում, հարկ վճարողներին օժանդակող տեղեկատվության հրապարակում<br><br>հարկ վճարողների հեռախոսազանգերի սպասարկման կենտրոնի (Call center) գործարկում | | | |
| ՀՀ կա ՊԵԿ-ի կառավարման արդյունավետության բարձրացում | 2011<br>«Հարկատու 3Ե էլեկտրոնային համակարգի նոր ենթահամակարգերով (մոդուլներով) համալրում՝ այդ թվում՝ կամերալ ուսումնասիրությունների | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | համակարգի ներդրում<br><br>ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի ուսումնական կենտրոնի ներդրման ծրագրի գործարկում, այդ թվում՝ հարկային և մաքսային ծառայողների համապարփակ և պարտադիր ուսուցման ծրագրի ներդրում<br><br>հարկային և մաքսային մարմիններում վերլուծական կարողությունների ուժեղացում<br><br>չկատարված հարկային պարտավորությունների աճի և նոր ապառքների կուտակման ռիսկերի կանխարգելում<br><br>միջազգային լավագույն փորձի հիման վրա հարկային մարմնի հիմնական բիզնես գործընթացների վերակազմակերպման և ավտոմատացման ծրագրի նախագծում և իրականացում<br><br>հարկային և մաքսային ծառայողների առաջխաղացման և խրախուսման համակարգի ներդրում | | | |
| Մաքսային ձևակերպումների ժամանակահատվածի կրճատում | մաքսային հայտարարագրի վճարման էլեկտրոնային | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | համակարգի ներդրում<br><br>մաքսային ձևակերպումների առանձին փուլերի էլեկտրոնային հաշվառում<br><br>մաքսային մարմինների կողմից մատուցվող ծառայությունների որակի բարձրացման և հսկողության համակարգի ներդրում<br><br>սահմանային անցման կետերի արդիականացում և եվրոպական չափանիշերին համապատասխանեցում | | | |
| «Նոտարիատի բնագավառում էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի<br><br>Ներկայումս ստեղծվել է մի իրավիճակ, երբ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման գրեթե բոլոր մարմինները միմյանց հետ հաղորդակցվում են էլեկտրոնային տարբեր համակարգերի միջոցով, իսկ նոտարներն ընդգրկված չեն էլեկտրոնային որևէ համացանցում և նոտարական գործողություններից բխող իրավահարաբերությունների մեջ մտնելը, թեկուզև հենց պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ, | 2011<br>Նոտարիատի բնագավառում փաստաթղթային շրջանառության ներկա բարդությունները վերացնելու և նոտարական գործողությունների հետ կապված անհրաժեշտ ընթացակարգերը պարզեցնելու հստակ մեխանիզմների ներդնումը:<br><br>Նոտարիատի բնագավառում կիրառվող էլեկտրոնային կառավարման համակարգի վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրություն և նոտարիատի բնագավառում էլեկտրոնային կառավարման | Նշված նախագծի ընդունման դեպքում կկանոնակարգվի և հետագայում հնարավորություն կստեղծվի նոտարական գործողությունների հետ կապված ընթացակարգերը և փաստաթղթային շրջանառությունը պարզեցնելու և նոտարի կողմից նոտարական գործողություններ կատարելու և քաղաքացիներին սպասարկելու որակը բարձրացնելու համար: | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| դարձել է երկարատև գործընթաց, ինչը խոչընդոտներ է ստեղծում թե նոտարների և թե նոտարներին դիմող անձանց համար՝ բարդություններ առաջացնելով փաստաթղթային շրջանառության համար և երբեմն անհարկի ձգձգելով նոտարական գործողությունների հետ կապված ընթացակարգերը: | համակարգի ներդրման հայեցակարգի մշակում՝ դրանով իսկ հետագայում կանոնակարգելով նոտարների համար նոտարական գրասենյակներում պետական բոլոր մարմիններից էլեկտրոնային եղանակով անհրաժեշտ տեղեկությունների ստացման հնարավորության ստեղծումը, նոտարների միջև էլեկտրոնային համացանցի ստեղծումը և բոլոր նոտարներին այդ համացանցում ներգրավման ապահովումը: | | | |
| «Հարկերի մասինե Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասինե և «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասինե Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասինե ՀՀ օրենքների նախագծերի<br><br>«Հարկերի մասինե և «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասինե ՀՀ օրենքներում փոփոխությունների կատարումը պայմանավորված է հարկ վճարողների գերավճարների և փաստացի վճարումների հաշվին հարկային և | 2011<br>Նշված խնդրի լուծման նպատակով նախատեսվում է կատարել փոփոխություններ «Հարկերի մասինե և «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասինե ՀՀ օրենքներում և դրանց կից N 1 հավելվածում: | Օրենսդրական փոփոխությունների հետևանքով հնարավոր է լինելու պարզեցնել գերավճարների և փաստացի վճարումների հաշվին հարկային և սոցիալական վճարների պարտավորությունների դիմաց (և հակառակը) հաշվանցումների կատարումն էլեկտրոնային եղանակով: | Գործող օրենսդրության շրջանակներում գրավճարների և փաստացի վճարումների հաշվին հարկային և սոցիալական վճարների պարտավորությունների դիմաց (և հակառակը) հաշվանցման տարբեր մեխանիզմների առկայությունը զգալիորեն բարդացնում է էլեկտրոնային եղանակով հաշվանցումների կատարումը: | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| սոցիալական վճարների պարտավորությունների դիմաց (և հակառակը) հաշվանցման մեխանիզմների նույնականացմամբ, ինչը պարզեցնելու է էլեկտրոնային եղանակով հաշվանցումների կատարումը: | | | | |
| «Հայաստանի Հանրապետության տարածքում առաքվող, տեղափոխվող կամ վաճառվող ձեռնարկատիրական գործունեության առարկաների և դրանց գների գրանցման (հաշվառման) էլեկտրոնային եղանակով վարման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ Առկա խնդիրներն են՝<br><br>ՀՀ տարածքում առաքվող, տեղափոխվող կամ վաճառվող ձեռնարկատիրական գործունեության առարկաների ու դրանց գների գրանցման (հաշվառման) էլեկտրոնային եղանակով վարման կարգի և ընթացակարգերի սահմանումը<br><br>էլեկտրոնային եղանակով հարկային հաշիվների ներդրման դեպքում ձեռնարկատիրական գործունեության առարկաների հաշվառման (գրանցման) հարցերի կարգավորումը: | 2011<br><br>1) սահմանել ձեռնարկատիրական գործունեության առարկաների և դրանց գների գրանցման (հաշվառման) էլեկտրոնային եղանակով վարման կարգը՝ հարկ վճարողին հնարավորություն ընձեռելով կամովին ընտրել ձեռնարկատիրական գործունեության առարկաների և դրանց գների գրանցման (հաշվառման) եղանակը.<br><br>2) սահմանել էլեկտրոնային եղանակով գրանցման (հաշվառման) անցնելու ընթացակարգերը.<br><br>3) սահմանել ձեռնարկատիրական գործունեության առարկաների և դրանց գների գրանցման (հաշվառման) էլեկտրոնային եղանակով վարման կարգն ու առանձնահատկությունները: | Ակնկալվում է, որ նախագծի ընդունման արդյունքում կկանոնակարգվեն ձեռնարկատիրական գործունեության առարկաների ու դրանց գների գրանցման (հաշվառման) և դրա նկատմամբ հարկային հսկողության արդյունավետության բարձրացման հարցերը: Նախագիծը կկանոնակարգի Հայաստանի Հանրապետությունում փաստաթղթաշրջանառության հետ կապված հարցերը, հարկային հաշվառմանը վերաբերող գրանցումների առկա խնդիրները՝ դրանք հստակեցնելու և պարզ ընթացակարգեր սահմանելու միջոցով: Հարկ վճարողներին հնարավորություն կընձեռվի առավել արդյունավետ կազմակերպելու հարկային գրանցումներին առնչվող աշխատանքները՝ դրանով էապես կրճատելով նաև հարկային հաշվառման և | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Նախագծի կարգավորման առարկան ձեռնարկատիրական գործունեության առարկաների գրանցման (հաշվառման) առումով հարկային հաշվառման հստակեցումն ու պարզեցումն է: | գրանցումների համար տրամադրվող ժամանակը: | | |
| Քաղաքաշինական էլեկտրոնային թույլտվությունների տրամադրման մեխանիզմների կանոնակարգում | 2011 Քաղաքաշինական էլեկտրոնային թույլտվությունների տրամադրման մեխանիզմների կանոնակարգմանն ուղղված միջոցառումների իրագործումը պայմանավորված է 2010 թվականի դեկտեմբերի 2-ի մշտապես գործող տարածքային զարգացման և բնապահպանական նախարարական կոմիտեի նիստի N 24.11/55051-10 արձանագրության 8-րդ կետի 2-րդ ենթակետի հանձնարարականով, համաձայն որի նախատեսվում է մշակել օպտիմալացված ընթացակարգեր համայնքի ղեկավարների կողմից տրվող թույլտվությունների տրամադրման մատչելիության ապահովման և սահմանված ժամկետների կրճատման նպատակով: | ըստ առաջնահերթության, նախատեսվում է ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 15-ի «Հայաստանի Հանրապետության համայնքներում (բնակավայրերում) անհատական բնակելի տների բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի և դրանց կատալոգի ներդրման ու կիրառման կարգը հաստատելու մասին» N 440-Ն որոշմամբ հաստատված կարգում կատարել համապատասխան փոփոխություններ՝ կառուցապատողի կողմից տարածքի հետ տեղակապված ու համաձայնեցված բնակելի տան նախագծի, շինարարության թույլտվության, ինչպես նաև ավարտված շինարարության շահագործման ակտի փաստագրման ձեռքբերումը՝ սահմանված ժամկետների կրճատմամբ, էլեկտրոնային | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | թույլտվությունների մեխանիզմների ներդրման միջոցով ապահովելու համար: | | |
| Ագրարային ոլորտի տեղեկատվական և խորհրդատվական համակարգի բարեփոխումների միջոցով ծառայությունների մատուցման արդյունավետության բարձրացում<br><br>Գերակա խնդրի նպատակն է գյուղատնտեսական գործունեություն իրականացնող սուբյեկտներին տեղեկատվական և խորհրդատվական ծառայությունների մատուցման համակարգի բարելավում: | 2011<br>անհրաժեշտ է անցում կատարել ծառայությունների գնման ընթացակարգերով առավել արդյունավետ գործունեություն իրականացվող սուբյեկտների ընտրությանը և համապատասխան կառուցվածքային փոփոխությունների միջոցով բարձրացնել համակարգի արդյունավետությունը:<br><br>Առաջարկվում է՝<br>1) հստակեցնել ԳԱՀԿ-ի և ԳԱՄԿ-երի գործառույթները.<br>2) ըստ մարզերի և տարածաշրջանների՝ տարեկան կտրվածքով սահմանել խորհրդատվական կարիքները և գնահատել դրանց բավարարման ֆինանսական հնարավորությունները.<br>3) ըստ խորհրդատվական ծառայության ուղղությունների՝ սահմանել տեխնիկական առաջադրանք, մրցութային կարգով ընտրել ծառայություն մատուցող | Ակնկալվում է՝<br>1) ներկայումս մշտապես գործող գյուղական 132 խորհրդատուի կրճատման արդյունքում գոյացած գումարը կնպատակաուղղվի մրցութային կարգով ընտրված խորհրդատուների կողմից նպատակային խորհրդատվական ծառայությունների մատուցմանը.<br>2) Հայաստանում խորհրդատվության և տեղեկատվության վիրտուալ ցանցի հիմնումը հնարավորություն կընձեռի արտադրող սուբյեկտներին համացանցի միջոցով օգտվելու միջազգային և հայաստանյան գյուղատնտեսական հետազոտական կազմակերպություններիԴ Հայաստանի պետական ագրարային համալսարանիԴ ԳԱՀԿ-ի և ԳԱՄԿ-երի վեբ-կայքերում տեղադրված բազմաբնույթ տեղեկատվությունից, և հետադարձ կապով ներկայացնելու իրենց խորհրդատվական կարիքները: Բացի դրանից՝ ցանցը նշված | Ներկայումս ՀՀ գյուղատնտեսության նախարարության տեղեկատվական և խորհրդատվական գործառույթները հիմնականում իրականացվում են ԳԱՀԿ-ի և ԳԱՄԿ-երի միջոցով, որը սահմանափակում է մրցակցային հնարավորությունները և չի նպաստում ծառայությունների որակի բարձրացմանը: | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | սուբյեկտներին, կնքել պայմանագրեր և ապահովել կատարման նկատմամբ մոնիթորինգ.<br>4) ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ) աջակցությամբ ավարտին հասցնել Հայաստանում խորհրդատվության և տեղեկատվության վիրտուալ ցանցի հիմնման ուղղությամբ տարվող աշխատանքները: | կազմակերպություններին կընձեռի արտաբյուջետային միջոցների ներգրավման բիզնես հնարավորություններ.<br>3) ԳԱՀԿ-ի գործառույթները հիմնականում կուղղորդվեն այսպես կոչված «խորհրդատուի խորհրդատվությանե մատուցմանըԴ ԳԱՄԿ-երի միջոցով առաջադիմական տեխնոլոգիաների ներդրմանը և ծառայությունների գնման համակարգի կազմակերպմանըԴ որը հնարավորություն կընձեռի նրանց աշխատանքի արտադրողականությունը բարձրացնել 25-30 տոկոսով: | | |
| Սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական բազաների արդիականացում | 2011<br>Սոցիալական պաշտպանության ոլորտում ներդրվել և կիրառվում են տասնյակից ավելի տեղեկատվական համակարգեր: 2010 թվականին Համաշխարհային բանկի Սոցիալական պաշտպանության ոլորտի կառավարման վարկային ծրագրի շրջանակներում իրականացվել է սոցիալական պաշտպանության ոլորտում գործող տեղեկատվական համակարգերի և համապատասխան գործընթացների գնահատում, | Առկա իրավիճակում ոլորտի հետագա զարգացման առաջնահերթություններն են՝<br>· Արդիականացված տեղեկատվական համակարգերի ներդրում, մասնավորապես՝<br>o փորձնական գործարկում՝ ընտրված տարածքային մարմիններում,<br>o փորձարկման արդյունքների հիման վրա ծրագրային ապահովման լրամշակում,<br>o հիմնական գործարկում սոցիալական պաշտպանության ոլորտի կենտրոնական և համապատասխան տարածքային մարմիններում,<br>o տարածքային մարմինների | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | որի արդյունքում արդիականացվել են հետևյալ տեղեկատվական համակարգերը՝<br>1) սոցիալական ապահովության քարտերի.<br>2) աշխատանք փնտրողների հաշվառման «Գործե.<br>3) կենսաթոշակառուների հաշվառման «Արաքսե.<br>4) ընտանիքի անապահովության գնահատման «Նպաստե.<br>5) մինչև 2 տարեկան երեխաների խնամքի նպաստների հաշվառման «Նպաստ-2ե.<br>6) աշխատանքի պետական տեսչության.<br>7) բարեգործական ծրագրերի հաշվառման:<br>Մշակվել է տեղեկատվության ավտոմատ փոխանակման տեղեկատվական համակարգը, որը հնարավորություն է տալիս ոլորտի կազմակերպությունների տվյալներն ստանալ անմիջապես առաջնային աղբյուրից:<br>Ըստ էության, մշակվել են նոր համակարգեր, որոնք հիմնված են նորագույն տեխնոլոգիաների և | աշխատողների վերապատրաստում:<br>• Նոր տեղեկատվական համակարգերի մշակում և ներդրում, այդ թվում՝<br>o ֆինանսական կառավարման համակարգ,<br>o հաշմանդամներին և սոցիալապես անապահով անձանց պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների, ինչպես նաև սայլակների և լողական սարքերի տրամադրման:<br>• Տեղեկատվության ավտոմատ փոխանակության համակարգի ներդրում:<br>2010 թ. մշակվել է տեղեկատվության ավտոմատ փոխանակման համակարգը, որի ներդրման և հիմնական գործարկման աշխատանքները նախատեսվում է իրականացնել 2011 թ.:<br>• Սոցիալական պաշտպանության ոլորտի կազմակերպությունների ինտերնետ/ինտրանետ կապի ապահովում:<br>• Էլեկտրոնային առաջնահերթ ծառայությունների մշակում:<br>• Ծառայությունների մատուցման միասնական | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | լուծումների վրա: 2011 թ. նախատեսվում է իրականացնել արդեն մշակված տեղեկատվական համակարգերի ներդրում: Նախարարությունում գործում է ՏՀՏ-ի ներդրման և զարգացման աշխատանքային խումբ՝ բոլոր ստորաբաժանումների մասնակցությամբ: | համալիր կենտրոնների ստեղծման համար անհրաժեշտ տեխնիկական, ծրագրային և ցանցային ապահովում: Իրականացվող միջոցառումների արդյունքում՝ <br>• ոլորտի շահառուների հաշվառման գործող գործընթացների զարգացում և արդիականացում, <br>• տեղեկատվության ամբողջականության և հավաստիության ապահովում, <br>• տեղեկատվության ուղղակի հասանելիություն կամ կիրառում՝ ոլորտի կազմակերպությունների, ինչպես նաև քաղաքացիների կողմից, <br>• կառավարման թափանցիկության ապահովում, <br>• վերահսկելիության մակարդակի բարձրացում, <br>• աշխատակազմի որակի, աշխատանքի արդյունավետության բարձրացում, <br>• իրականացվող ծրագրերի հասցեականության բարձրացում: | | |
| «Հարկ վճարողների սպասարկման ծառայությունների որակի բարձրացումե | 2012 անհրաժեշտ է աշխատանքներ | Նախատեսվում է կատարելագործել էլեկտրոնային | Ներկայումս հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| գերակա խնդիր<br><br>Հարկ վճարողների սպասարկման ծառայությունների ընդլայնման շրջանակներում հատկապես կարևորվում է էլեկտրոնային եղանակով հաշվետվություններ ներկայացնելու համակարգի բարելավմամբ հարկային մարմնի կողմից մատուցվող էլեկտրոնային ծառայությունների ավելացմանն ուղղված աշխատանքների իրականացումը՝ նպաստելով հարկային մարմնի և հարկ վճարողի միջև անմիջական շփման հնարավորինս կրճատմանն ու ժամանակին համահունչ որակյալ ծառայությունների մատուցմանը:<br>Խնդրի կարգավորման մաս կազմող հաջորդ կարևոր բաղադրիչը հարկ վճարողների հեռախոսազանգերի սպասարկման կենտրոնի և նոր սպասարկման կենտրոնի գործարկումն է՝ դրանցում մատուցվող ծառայությունների շրջանակի ընդլայնմամբ և որակի բարձրացմամբ, սպասարկման միասնական ստանդարտների ներդրմամբ, հարկ վճարողներին օժանդակող տեղեկատվության հրապարակմամբ: | իրականացնել էլեկտրոնային կառավարման համակարգի կատարելագործման ուղղությամբ, ինչը հնարավորություն կընձեռի՝<br>- բարելավել հաշվետվությունները հարկային մարմին էլեկտրոնային եղանակով ներկայացնելու ամբողջ շղթան՝ շտկելով հաշվետվություններն էլեկտրոնային ներկայացնելու առկա խնդիրները,<br>- ընդլայնել հարկ վճարողներին մատուցվող էլեկտրոնային ծառայությունների շրջանակը, մասնավորապես, ներդնելով հարկ վճարողներին հիշեցում-ծանուցումների ուղարկման ավտոմատ համակարգ՝ միաժամանակ ապահովելով տեղեկատվության փոխանակման և իրազեկման աշխատանքների շարունակական իրագործումը,<br>- ավտոմատացնել 3-րդ անձանցից ստացվող տեղեկությունները, ինչպես նաև հարկային մարմիններում իրականացվող բոլոր հիմնական գործընթացները: | կառավարման, ինչպես նաև հաշվետվական համակարգերը՝ նպաստելով հարկային մարմնի կողմից մատուցվող էլեկտրոնային ծառայությունների ավելացմանը, հարկ վճարողների կողմից հաշվետվություններ ներկայացնելու առումով հարկային կարգապահության բարձրացմանը: Նշված կատարելագործված համակարգերի գործարկման արդյունքում ակնկալվում է ՊԵԿ-ի գործընթացների ավտոմատացում և ինտեգրում էլեկտրոնային կառավարման այլ համակարգերին:<br>Նոր սպասարկման կենտրոնի և հեռախոսազանգերի սպասարկման կենտրոնի գործարկման արդյունքում հնարավորություն է ընձեռվում բարձրացնել հարկ վճարողների սպասարկման մակարդակը՝ խթանելով հարկ վճարողների ինքնագնահատման համակարգի զարգացմանը՝ հնարավորինս նվազեցնելով նաև հարկ վճարողների վարչարարական ծախսերը: | ընդլայնման և դրանց որակի բարելավման գործընթացի ամբողջովին ավարտված չլինելով պայմանավորված՝ հարկ վճարողների սպասարկման մակարդակը դեռևս ցածր է : Հարկ վճարողների սպասարկման մակարդակի բարձրացման, հարկ վճարողների ինքնագնահատման համակարգի ներդրման նպատակով աշխատանքներ են իրականացվել հարկ վճարողների սպասարկման կենտրոնների գործարկման ուղղությամբ : Առաջիկա տարում նախատեսվում է ստեղծել նոր սպասարկման կենտրոն՝ ապահովելով հարկ վճարողներին որակյալ ծառայությունների մատուցման առավել լայն շրջանակ : Միաժամանակ՝ հարկային օրենսդրության շրջանակներում հարկ վճարողներին հետաքրքրող հարցերի կարգավորման առնչությամբ որակյալ ծառայությունների մատուցման նպատակով ֆինանսական միջոցների առկայության պայմաններում ընթացիկ տարում նախատեսվում է միջոցառումներ ձեռնարկել հարկ վճարողների հեռախոսազանգերի սպասարկման | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Հարկ վճարողների որակյալ և արագ սպասարկումն ապահովելու նպատակով հանրապետության խոշոր ռեգիոնալ կենտրոններում առաջարկվում է ստեղծել առնվազն 1 սպասարկման կենտրոն՝ դրանցում մատուցվող ծառայությունների շրջանակի շարունակական բարելավմամբ: | | կենտրոնի գործարկման ուղղությամբ: | |
| «ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կառավարման արդյունավետության բարձրացում» գերակա խնդիր<br><br>ՀՀ կառավարությանն առընթեր ՊԵԿ-ի հարկային մարմնի կառավարման արդյունավետ համակարգի ներդրման անհրաժեշտությունը պայմանավորված է հարկային վարչարարության հիմնախնդիրների արդյունավետ իրականացմամբ՝ հարկային ծառայողների աշխատանքի արդյունավետության բարձրացման, էլեկտրոնային կառավարման համակարգի ամբողջական ներդրման ու կատարելագործման միջոցով:<br><br>ՀՀ կառավարությանն առընթեր ՊԵԿ-ի հարկային մարմնի կառավարման արդյունավետության բարձրացում, տեղեկատվական տեխնոլոգիաների կատարելագործում՝ | 2012<br>Շարադրված խնդիրների լուծման համար նախատեսվում է ներդնել էլեկտրոնային կառավարման համակարգ, ինչի արդյունքում հնարավորություն կընձեռվի ՀՀ կառավարությանն առընթեր ՊԵԿ-ի աշխատողներին լիարժեք օգտվել այդ համակարգից՝ արդյունավետ օգտագործելով աշխատաժամանակը, էլեկտրոնային համակարգ կմուտքագրվեն և արդյունավետորեն կկիրառվեն նաև երրորդ անձանցից ստացվող տեղեկությունները, կավտոմատացվեն նաև հարկային մարմիններում իրականացվող բոլոր հիմնական գործընթացները՝ սկսած էլեկտրոնային | Նախատեսվում է ներդնել էլեկտրոնային կառավարման համակարգ, որի արդյունքում կիրականացվեն հարկային համակարգի էլեկտրոնային միասնական տեղեկատվական բազայի վերակառուցում, արդիականացում, ՊԵԿ-ի գործընթացների ավտոմատացում և ինտեգրում էլեկտրոնային կառավարման այլ համակարգերին: «Հարկատու 3Ե էլեկտրոնային համակարգը նոր ենթահամակարգերով համալրելու դեպքում առավել մեծ հնարավորություններ կտրամադրվեն ՀՀ կառավարությանն առընթեր ՊԵԿ-ի տեղեկատվական բազայից օգտվողներին վերլուծական աշխատանքներ իրականացնելու | Հարկային մարմնում լիարժեք չի գործում էլեկտրոնային կառավարման համակարգը, որը հնարավորություն կտար ստեղծել և կառավարել հարկ վճարողների վերաբերյալ տվյալների ժամանակակից բազա՝ արդյունավետ կիրառելով նաև 3-րդ անձանցից ստացված տվյալները, ՀՀ կառավարությանն առընթեր ՊԵԿ-ի միասնական տեղեկատվական բազայից օգտվողներին տրամադրվում է սահմանափակ հնարավորություններ վերլուծական աշխատանքներ իրականացնելու համար, ամբողջությամբ նկարագրված չեն ՀՀ կառավարությանն առընթեր ՊԵԿ-ի բիզնես-պրոցեսները, ինչը հնարավորություն չի տալիս հստակ սահմանելու հարկային մարմնի կողմից իրականացման | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| նոր ենթահամակարգերով համալրելով «Հարկատու 3» էլեկտրոնային համակարգ | հաշվարկների (հաշվետվությունների) և այլ տեղեկությունների ստացումից, անձնական հաշվի քարտերի վարումից մինչև անհրաժեշտ բոլոր վերլուծությունների իրականացումը: Միաժամանակ, նախատեսվում է հարկային օրենսդրությամբ սահմանված գործիքների կիրառման արդյունքում սահմանափակել չկատարված հարկային պարտավորությունների աճը, մասնավորապես, բացառել նախկինում կուտակված ապառքների բացարձակ թվի աճը, ինչպես նաև արգելադրման, բռնագանձման և այլ ինստիտուտների ակտիվացման միջոցով հնարավորինս կանխարգելել ընթացիկ նոր ապառքների բացարձակ մեծության աճը: | համար, կընդլայնվեն էլեկտրոնային կառավարման հնարավորությունները, կներդրվի կամերալ ուսումնասիրու-թյունների էլեկտրոնային համակարգը՝ արդյունքում նպաստելով վերլուծական և վարչարարական աշխատանքների արդյունավետության բարձրացմանը, աշխատաժամանակի արդյունավետ ծախսմանը: Միաժամանակ նախատեսվում է կատարելագործել մարդկային ռեսուրսների կառավարման համակարգը, լիարժեք կգործարկվի ՀՀ կառավարությանն առընթեր ՊԵԿ-ի ուսումնական կենտրոնի ներդրման ծրագիրը, կապահովվի հարկային և մաքսային ծառայողների վերլուծական կարողությունների ուժեղացումը (մասնավորապես, հարկային գերավճարների և չկատարված հարկային պարտավորությունների հաշվառման և վերլուծության մեխանիզմների կատարելագործման տեսանկյունից), ՀՀ կառավարությանն առընթեր | ենթակա գործընթացների ամբողջ շղթան: Առկա չէ աշխատանքային ռեսուրսների վերաբաշխման գործուն մեթոդաբանություն, միաժամանակ համակարգման կարիք ունեն հարկային ծառայողների վերապատրաստման կարիքների ուսումնասիրության, առաջնայնությունների գնահատման հարցերը: ՀՀ կառավարությանն առընթեր ՊԵԿ-ում լիարժեք չի գործում կատարողականի հիման վրա աշխատանքների գնահատման համակարգը՝ հիմնված առաջխաղացման և խրախուսման, մոտիվացման մեխանիզմների հստակեցման, աշխատանքային ծանրաբեռնվածության մակարդակի գնահատման մեխանիզմների վրա: Միաժամանակ, շարունակվում են արդիական մնալ չկատարված հարկային պարտավորությունների աճի և նոր ապառքների կուտակման ռիսկերի կանխարգելման հարցերը: | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | ՊԵԿ-ի բիզնես-գործընթացների կատարելագործումն ու հարկ վճարողների իրազեկվածությունը: | | |
| «Մաքսային ձևակերպումների ժամանակահատվածի կրճատումէ գերակա խնդրի վերաբերյալ<br><br>Մաքսային ձևակերպումների ժամանակահատվածի կրճատումը հնարավորություն կտա մաքսային հայտարարագրերը ներկայացնելու էլեկտրոնային եղանակով՝ կիրառելով էլեկտրոնային ստորագրությունը: Բացի դրանից՝ հնարավորություն կստեղծվի մաքսային հայտարարագրով նախատեսված մաքսային վճարները կատարել էլեկտրոնային վճարման համակարգի միջոցով: | 2011<br>Նախատեսվում է ներդնել էլեկտրոնային ստորագրության և մաքսային հայտարարագրի էլեկտրոնային վճարման, ինչպես նաև մաքսային ձևակերպումների փուլերի էլեկտրոնային եղանակով հաշվառման իրականացման ենթահամակարգ մաքսային հայտարարագրի լրացման «ԹԻ ՎԻ ԷՄ» ավտոմատացված համակարգում: Միաժամանակ աշխատանքներ կտարվեն մաքսային մարմինների կողմից մատուցվող ծառայությունների որակի բարձրացման և հսկողության համակարգի ներդրման ուղղությամբ՝ նախատեսելով արդիականացնել սահմանային անցման կետերը՝ համապատասխանեցնելով եվրոպական չափանիշներին: | Մաքսային ձևակերպումների ժամանակահատվածի կրճատումով նախատեսվում է պարզեցնել մաքսային հայտարարագրման գործընթացը և նվազեցնել մաքսային տեսուչ ԱՏԳ-ի մասնակից շփումը: | Ներկայումս գործող ընթացակարգի համաձայն բոլոր մաքսային հայտարարագրերը ներկայացվում են թղթային տարբերակով, ինչպես նաև մաքսավճարների վճարման համար տնտեսավարող սուբյեկտներն ստիպված են լինում այցելել բանկ, այնուհետև վճարման հանձնարարականով ներկայանալ մաքսային մարմին, որը զգալիորեն երկարացնում է ապրանքների մաքսային ձևակերպումների ժամանակահատվածը, այն դեպքում, երբ հնարավորություն կա ամբողջ պրոցեսն իրականացնել տնտեսավարողի գրասենյակից: | |
| | 2012 թ. հոկտեմբերի 1-ին Տասնօրյակ | ՀՀ առողջապահության ոլորտում միասնական էլեկտրոնային տեղե-կատվական համակարգի, այդ | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | «ՀՀ առողջապահության ոլորտում միասնական էլեկտրոնային տեղեկա- տվական համակարգի ներդրման ծրագիրը և միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | թվում՝ բժշկական էլեկտրոնային քարտերի համակարգի ներդրման ծրագրի և միջոցառումների ժամանակացույցի հաստատում ՀՀ կառավարության կողմից | | |
| | 2012 թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ<br><br>«Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային առևտրի զարգացման, ցանցային պատրաստվածության և տեխնիկական հագեցվածության ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային ճանապարհով իրականացվող առևտրային ծառայությունների և գործարքների բնագավառում պատվիրատուի և մատակարարի միջև հարաբերությունների սահմանում | | |
| | 2012 թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ<br><br>«Հայաստանի Հանրապետության | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի օգոստոսի 30-ի N 1038-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | | | |
| | 2012 թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ<br><br>«Առաքվող կամ տեղափոխվող արտադրանքի, ապրանքների էլեկտրոնային եղանակով գրանցման (հաշվառման) կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | առաքվող կամ տեղափոխվող արտադրանքի, ապրանքների գրանցման (հաշվառման) էլեկտրոնային եղանակի ներդրում | | |
| Ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման համակարգի ներդրման իրավական, տեխնիկատնտեսական հիմքերի ստեղծում | 2012<br>1) ՀՀ տարածքային կառավարման նախարարի և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի համատեղ հրամանով համայնքի սոցիալական կարիքների | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | գնահատման, դրա հիման վրա տեղական սոցիալական ծրագրերի մշակման մեթոդական ուղեցույցի հաստատում.<br>2) ինտեգրված սոցիալական ծառայությունների տեխնիկական և գույքային վերազինման, վերանորոգման աշխատանքների շարունակականության ապահովում՝ ինտեգրված սոցիալական ծառայությունների առնվազն 10 կենտրոնի գործարկում.<br>3) տեղեկատվության ինքնաշխատ փոխանակության (պետական նպաստների, կենսաթոշակային ապահովության, զբաղվածության, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների, սոցիալական ապահովության քարտերի, բնակչության պետական ռեգիստրի, անշարժ գույքի կադաստրի և այլ (ըստ պատրաստվածության մակարդակի) տեղեկատվական բազաների | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | միջև) միասնական համակարգի ներդրում | | | |
| Մարդու իրավունքների և ազատությունների արդյունավետ պաշտպանության և իրականացման նպատակով՝<br>1) դատական իշխանության գործունեության արդյունավետության բարձրացում.<br>2) քրեակատարողական ծառայության գործունեության արդյունավետության բարձրացում.<br>3) նոտարական համակարգի գործունեության արդյունավետության բարձրացում: | 2012<br>1. Անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունների և միջոցառումների իրականացում, որոնք կապահովեն՝<br>ա) դատարանների նկատմամբ վստահության աճը,<br>բ) դատարանների կողմից գործերի առավել արագ քննությունը (միջին ժամկետները կրճատվել են 10 %-ով),<br>գ) իրավունքների դատական պաշտպանության մատչելիության բարձրացում,<br>դ) դատական ակտերի կանխատեսելիության բարձրացում (վերադաս դատարան բողոքարկումների տոկոսի նվազեցում 5 %-ով),<br>ե) դատական իշխանության թափանցիկության ապահովում.<br>1.1. Վեճերի լուծման այլընտրանքային մեխանիզմների զարգացում՝<br>ա) արբիտրաժի միջոցով վեճերի լուծման թվի աճ (100 %-ով),<br>բ) հաշտարարության (մեդիացիա) ինստիտուտի | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | ներդրում և կիրառում (օրենքի նախագիծը պատրաստվել է և ներկայացվել է ՀՀ Ազգային ժողովի քննարկմանը).<br>1.2. Փաստաբանության ինստիտուտի արդյունավետության բարձրացում՝<br>ա) անվճար իրավաբանական օգնություն ստացողների թվի ավելացում (20%-ով).<br>1.3. Դատավորների և դատախազների վերապատրաստման, ինչպես նաև թեկնածուների պատրաստման գործընթացի արդյունավետության բարձրացում՝<br>ա) վերապատրաստում անցած անձանց թվի աճ (10%-ով),<br>բ) մեկ անձի թվով վերապատրաստման դասընթացների ժամաքանակի աճ (կամավոր սկզբունքներով) (10%-ով),<br>գ) դատախազների թեկնածուների և առաջխաղացման ցուցակում ընդգրկված անձանց նշանակման ընթացակարգերի օբյեկտիվության ապահովում (օրենքի նախագիծը ներկայացվել է ՀՀ Ազգային ժողովի | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | քննարկմանը).<br>1.4. ԴԱՀԿ ծառայության արդյունավետության բարձրացում՝<br>ա) դատական ակտերի հարկադիր կատարման ժամկետի կրճատում (10%-ով),<br>բ) դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության դեմ բերված բողոքների թվի նվազեցում (10%-ով),<br>գ) դատական ակտերի հարկադիր կատարման արդյունքում բռնագանձման տոկոսի աճ (10%-ով),<br>դ) հրապարակային աճուրդների թափանցիկության և արդյունավետ աճ, որի արդյունքում կավելանա աճուրդների մասնակիցների թիվը (10%-ով):<br>2. Քրեակատարողական համակարգ՝<br>ա) ազատազրկման ձևով պատիժը կրող անձանց զբաղվածության աճ (10%-ով),<br>բ) քրեակատարողական հիմնարկում հանցագործությունների թվի | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | նվազեցում (10%-ով),<br>գ) քրեակատարողական հիմնարկներում մահացության դեպքերի նվազեցում (10%-ով),<br>դ) վարակիչ հիվանդություններով հիվանդացած անձանց թվի կրճատում (10%-ով),<br>ե) ազատազրկման ձևով պատիժը կրող անձանց՝ ուսումնական և մասնագիտական ծրագրերում ներգրավվածության աճ (10%-ով),<br>զ) դատապարտված անձանց՝ հանրային աշխատանքներում ընդգրկվածության ավելացում (առկա թվի աճ 10%-ով),<br>է) պատժից ազատելու ինստիտուտների արդյունավետության և կանխատեսելիության աստիճանի բարձրացում (պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման և պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ դիմումների ընդհանուր քանակում բավարարված դիմումների չափաբաժնի աճ՝ 5%-ով), | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | ը) պատիժը կրած անձանց զբաղվածության մասնաբաժնի աճ (5%-ով),<br>թ) խոշտանգումների և անմարդկային վերաբերմունքի դեմ կոնվենցիայով (CPT) նախատեսված վերահսկողության մեխանիզմի զեկույցի առաջարկությունների կատարողականի բարելավում:<br>3. Նոտարիատ՝<br>ա) նոտարի կողմից մեկ պատուհանի սկզբունքով մատուցվող ծառայությունների թվի աճ (ընդհանուր ծառայությունների 5%-ը),<br>բ) նոտարական գործարքների բողոքարկման / վիճարկման տոկոսի նվազեցում (10%-ով),<br>գ) նոտարների շրջանում էլեկտրոնային միջոցների և ինտերնետի կիրառման ավելացում (բոլոր նոտարական գրասենյակներում առկա են համացանցին բավարար թողունակությամբ միացած համակար-գիչներ, բոլոր նոտարներն ունեն էլեկտրոնային ստորագրություն, նոտարների 20%-ը անցել են | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | համապատասխան վերապատրաստման դասընթացներ) | | | |
| Հայաստանի Հանրապետությունում կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի, նույնականացման քարտերի և հանրային ծառայությունների համարանիշերի տրամադրման համար անհրաժեշտ համակարգի ներդրում ՀՀ ամբողջ տարածքում | 2012<br>- էլեկտրոնային անձնագրերում և նույնականացման քարտերում անհատական տվյալների մուտքագրման (պերսոնալացման) համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների տեղադրում ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունում<br>- անձնագրային ծառայությունների անձնակազմի ուսուցման ծրագրերի հաստատում և ուսուցման կազմակերպում<br>- անձնագրային նոր համակարգի օրենսդրության կիրառման վերաբերյալ իրավական իրազեկում զանգվածային լրատվամիջոցներով | | | |
| ՀՀ ԿԱ ՊԵԿ ՏՏ ենթակառուցվածքներ | 2012<br>«Հարկատու 3» էլեկտրոնային կառավարման համակարգի կատարելագործում, նոր ենթահամակարգերով (մոդուլներով) համալրում (անձնական հաշվի քարտերի էլեկտրոնային վարման, | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | երրորդ անձանց տվյալների մշակման ենթահամակարգերի ներդրում) | | | |
| | 2012 «Հայաստանի Հանրապետության առողջապահության ոլորտում միասնական էլեկտրոնային տեղեկատվական համակարգի ներդրման ծրագիրը և միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունում<br><br>ՀՀ առողջապահության միասնական տեղեկատվական համակարգ ստեղծելու նպատակով անհրաժեշտ է նախ և առաջ, օգտագործելով արդեն իսկ գործող ավտոմատացված տեղեկատվական համակարգերի հնարավորությունները, ձևավորել միօրինականացված տվյալների փոխանակման և դինամիկ թարմացման ծրագրային միջոց, հաստատել համակարգի պատասխանատու ստորաբաժանումը, որը | Խնդրի կատարման արդյունքում հնարավորություն է ստեղծվելու ճիշտ ժամանակին ապահովել անհրաժեշտ տեղեկատվության հասանելիությունը մասնագետների համար: Համակարգի շրջանակներում տեղեկատվության հոսքերը կազմակերպված են լինելու այնպես, որպեսզի անձի մասին բժշկական անհրաժեշտ տվյալները նվազագույն ժամանակում հասանելի լինեն համապատասխան մասնագետին: Բժշկական քարտերի միջոցով անձի բժշկական անհրաժեշտ տվյալները կտեղադրվեն նույնականացման քարտերում՝ հնարավորություն ստեղծելով անհրաժեշտության դեպքում ամենակարճ ժամանակահատվածում միշտ և ամենուր ստանալու տեղեկատվություն մարդու առողջական վիճակի մասին: Համակարգը հնարավորություն կտա բարձրացնելու ընդհանուր վերահսկողությունը մատուցվող բուժօգնության որակի վրա, | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | կստանձնի Հայաստանի Հանրապետությունում առողջապահական միասնական շտեմարանի ստեղծման նախագծի ղեկավարումը: Անհրաժեշտ է նաև իրականացնել համակարգի գործարկման համար անհրաժեշտ բոլոր ենթակառուցվածքների մշակումը և տեխնիկայի ներդրումը, մասնավորապես, ցանցային ենթակառուցվածքի, համակարգիչների, քարտային տերմինալների, այլ սարքավորումների, ինչպես նաև ծրագրային ապահովման ներդրումը, տեխնիկական միջոցների ձեռքբերումը, համակարգի ներդրման համար օրենսդրական փոփոխությունների իրականացումը և համակարգի փորձարկումը: | կբարձրացնի ծառայություններից օգտվելու մատչելիությունը, կնվազեցնի տարբեր տեսակի թղթային տվյալների պահպանման կամ տեղափոխման անհրաժեշտությունը: | | |
| Որոշման նախագծի նպատակն է Հայաստանի Հանրապետությունում զարգացնել էլեկտրոնային եղանակով իրականացվող առևտրային և այլ ծառայություններն ու գործարքները, սահմանել պատվիրատուի և մատակարարի միջև հարաբերությունները, տեղեկատվության փոխանակման և անվտանգության ապահովման | 2012 «Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային առևտրի զարգացման, ցանցային պատրաստվածության և տեխնիկական հագեցվածության ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման | Որոշման նախագծի ընդունման արդյունքում կկանոնակարգվեն Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային եղանակով իրականացվող առևտրային ծառայությունների և գործարքների բնագավառում պատվիրատուի ու մատակարարի միջև | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| մեխանիզմները, ինչպես նաև ցանցային պատրաստվածության և տեխնիկական հագեցվածության նվազագույն պահանջները:<br><br>«Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային առևտրի զարգացման, ցանցային պատրաստվածության և տեխնիկական հագեցվածության ծրագրին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի նպատակն է՝<br>1) ապահովել հանրությանը հասանելի էլեկտրոնային եղանակով իրականացվող առևտրային ծառայությունների լայն տեսականի.<br>2) սահմանել էլեկտրոնային առևտրի զարգացման մեխանիզմները.<br>3) սահմանել պատվիրատուի և մատակարարի միջև հարաբերությունները.<br>4) սահմանել տեղեկատվության փոխանակման և անվտանգության ապահովման մեխանիզմները.<br>5) սահմանել ցանցային պատրաստվածության և տեխնիկական հագեցվածության նվազագույն պահանջները: | նախագծի ընդունման | հարաբերությունները, ինչի արդյունքում կզարգանան էլեկտրոնային եղանակով իրականացվող առևտրային և այլ ծառայությունները, ինչպես նաև կբարձրանա ծառայություն մատուցողների կողմից տեղեկատվության անվտանգության ապահովման, ցանցային պատրաստվածության և տեխնիկական հագեցվածության աստիճանը: | | |
| Կարգավորման առարկան առաքվող կամ տեղափոխվող արտադրանքի, ապրանքների գրանցման (հաշվառման) առումով գրանցման գրքերի էլեկտրոնային եղանակով վարման հետ կապված հարաբերություններն են: | 2012<br>Առաքվող կամ տեղափոխվող արտադրանքի, ապրանքների էլեկտրոնային եղանակով գրանցման (հաշվառման) կարգը հաստատելու մասին» | Առաքվող կամ տեղափոխվող արտադրանքի, ապրանքների գրանցման (հաշվառման) էլեկտրոնային եղանակի ներդրում, գրանցումների համար ծախսվող ժամանակի կրճատում | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման<br><br>Խնդրի լուծման նպատակով անհրաժեշտ է մշակել «Առաքվող կամ տեղափոխվող արտադրանքի, ապրանքների էլեկտրոնային եղանակով գրանցման (հաշվառման) կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ: | | | |
| Իրավական ակտի ընդունումից հետո կկանոնակարգվեն քաղաքացիական ծառայողների վարքագծի հետ կապված հարաբերությունները: | 2012<br>«Քաղաքացիական ծառայողների էթիկայի կանոնագիրք» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ<br><br>Սահմանվելու է, թէ որն է համարվում շահերի բախում, որ դեպքերում են առաջանալու շահերի բախում, ներդրվելու է շահերի հայտարարագրման ինստիտուտը, առաջարկվելու են իրավական լուծումներ` շահերի բախումներից խուսափելու համար, ինչպես նաև շահերի բախման իրավիճակում հայտնվելու դեպքերում ինչպիսի վարքագիծ պետք է դրսևորեն քաղաքացիական ծառայողները: | Քաղաքացիական ծառայողների էթիկայի կանոնների ներդրման արդյունքում կամբողջականացվեն քաղաքացիական ծառայողների էթիկայի կանոնները, կներդրվեն միջազգային պրակտիկայում լայնորեն կիրառելի մի շարք ինստիտուտներ, որի արդյունքում էլ ավելի կանխատեսելի կլինի քաղաքացիական ծառայողների վարքագիծն իրենց ծառայողական պարտականությունները կատարելիս: | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Քաղաքացիական ծառայության համակարգում կանոնակարգվելու է քաղաքացիական ծառայողների կողմից նվերներ ընդունելու հարցը, սահմանվելու է նաև, թե որն է համարվում թույլատրելի նվեր, ինչպես նաև քաղաքացիական ծառայողի վարքագիծը չթույլատրելի համարվող նվեր ստանալու դեպքում: Սահմանվելու են քաղաքացիական ծառայողների կողմից ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ իրենց հայտնի դարձած տեղեկատվության օգտագործման հետ կապված որոշ սահմանափակումներ: Կանոնակարգվելու են նաև քաղաքացիական ծառայողի հետծառայողական գործունեությունը, մասնավորապես, պաշտոնից ազատվելու դեպքերում սահմանվելու են որոշակի սահմանափակումներ այլ գործատուների մոտ աշխատանքի անցնելու հետ կապված: Սահմանվելու են նաև էթիկայի կանոնների | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | խախտման դեպքերում դրանց մասին տեղեկացման ընթացակարգերը: | | | |
| Նոտարական համակարգի գործունեության արդյունավետության բարձրացումը | 2012<br>Անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունների և գործնական միջոցառումների իրականացմանն ուղղված անհրաժեշտ քայլերն են՝<br>1) նոտարի կողմից մեկ պատուհանի սկզբունքով մատուցվող ծառայությունների թվի մասնաբաժնի աճին նպաստող միջոցների ձեռնարկումը.<br>2) նոտարական գործարքների բողոքարկման (վիճարկման) տոկոսի նվազեցումը.<br>3) նոտարների շրջանում էլեկտրոնային միջոցների և ինտերնետի կիրառման ավելացումը: | Անհրաժեշտ միջոցառումների իրականացման արդյունքում հնարավոր կլինի առավել արդյունավետ ապահովել մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունն ու իրականացումը՝ նոտարական համակարգի գործունեության արդյունավետության բարձրացման լույսի ներքո: | | |
| Հայաստանի Հանրապետությունում կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնականացման քարտերի համակարգի ներդրումը Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում<br><br>Հայաստանի Հանրապետությունում կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնականացման | 2012<br>Հայաստանի Հանրապետությունում կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնականացման քարտերի համակարգի գործարկումը ենթադրում է էլեկտրոնային անձնագրերում և նույնականացման քարտերում անհատական տվյալների | Հայաստանի Հանրապետությունում կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնականացման քարտերի համակարգի գործարկումը 2012 թվականի գերակա խնդիր ճանաչվելու դեպքում կապահովվի համակարգի արդյունավետ գործարկումը: | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| քարտերի համակարգի գործարկումը 2012 թվականի գերակա խնդիր ճանաչվելու դեպքում կապահովվի համակարգի արդյունավետ գործարկումը: | մուտքագրման (պերսոնալացման) անհրաժեշտ տեխնիկական միջոցների տեղադրում՝ ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունում, անձնագրային ծառայությունների անձնակազմի ուսուցման ծրագրերի հաստատում և ուսուցման կազմակերպում, ինչպես նաև անձնագրային նոր համակարգի օրենսդրության կիրառման վերաբերյալ իրավական իրազեկում զանգվածային լրատվամիջոցներով: | | | |
| Հարկ վճարողներին մատուցվող ծառայությունները | 2012 Նշված խնդիրների կարգավորման նպատակով անհրաժեշտ է աշխատանքներ իրականացնել՝ էլեկտրոնային կառավարման համակարգի կատարելագործման համար, ինչը հնարավորություն կընձեռի՝ 1) բարելավելու հաշվետվությունները հարկային մարմին էլեկտրոնային եղանակով ներկայացնելու ամբողջ շղթան՝ շտկելով հաշվետվություններն | Նախատեսվում է կատարելագործել էլեկտրոնային կառավարման, ինչպես նաև հաշվետվական համակարգերը՝ նպաստելով հարկային մարմնի կողմից մատուցվող էլեկտրոնային ծառայությունների ավելացմանը, հարկ վճարողների կողմից հաշվետվությունները ներկայացնելու առումով հարկային կարգապահության բարձրացմանը, էլեկտրոնային եղանակով ներկայացվող հաշվետվությունների թվի և | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | էլեկտրոնային եղանակով ներկայացնելու առկա խնդիրները՝ ավելացնելով էլեկտրոնային եղանակով ներկայացվող հաշվետվությունների թիվը.<br><br>նախատեսվում է՝<br>1) ավելացնել հարկային մարմնի կողմից մատուցվող էլեկտրոնային ծառայությունները՝ էլեկտրոնային եղանակով հաշվետվությունները ներկայացնելու համակարգի շրջանակի ընդլայնմամբ.<br>2) գործարկել հարկ վճարողների նոր սպասարկման սրահներ՝ սպասարկման միասնական ստանդարտների ներդրմամբ, հարկ վճարողներին օժանդակող տեղեկատվության հրապարակմամբ.<br>3) կատարելագործել հաշվետվական համակարգը, այդ թվում՝ հիշեցում-ծանուցումների ուղարկման ավտոմատ համակարգի ձևավորման, համակարգի ամբողջական կիրառման միջոցով: | հարկ վճարող-ներին մատուցվող նոր էլեկտրոնային ծառայությունների ավելացմանը: Նոր սպասարկման սրահների գործարկման արդյունքում հնարավորություն կընձեռվի բարձրացնելու հարկ վճարողների սպասարկման մակարդակը՝ խթանելով հարկ վճարողների ինքնագնահատման համակարգի զարգացումը: | | |
| Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական | Նախատեսվում է ներդնել ճկուն և ժամանակակից | ակնկալվում է ՀՀ կառավարությանն առընթեր | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| եկամուտների կոմիտեի տեղեկատվական տեխնոլոգիաների Ենթակառուցվածքներ<br><br>ՀՀ կառավարությանն առընթեր ՊԵԿ-ի կարևորագույն խնդիր է միասնական տեղեկատվական բազայից օգտվողների համար դյուրին վերլուծական և տեղեկատվական համակարգի ստեղծումը՝ էլեկտրոնային կառավարման համակարգի ամբողջական ներդրման ու կատարելագործման միջոցով: | հարկային տեղեկատվական համակարգ, առավելագույնի հասցնել հարկ վճարողների և հարկային ծառայության աշխատողների կողմից ՏՏ-ի համակարգերի կիրառումը:<br><br>ՀՀ կառավարությանն առընթեր ՊԵԿ-ի հարկային մարմնի կառավարման արդյունավետության բարձրացում, տեղեկատվական տեխնոլոգիաների կատարելագործում, ժամանակակից էլեկտրոնային կառավարման համակարգի ստեղծում | պետական եկամուտների կոմիտեի գործընթացների ավտոմատացում և ինտեգրում էլեկտրոնային կառավարման այլ համակարգերին, որի արդյունքում՝<br>1) կբարձրանա վերլուծական և վարչարարական աշխատանքների արդյունավետությունը.<br>2) կընդլայնվեն էլեկտրոնային կառավարման հնարավորությունները.<br>3) կկրճատվի օգտվողների կողմից ծախսվող աշխատաժամանակը: | | |
| | 2013<br>«Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպության տարածքային ստորաբաժանումների օպտիմալացման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ՀՀ կառավարության որոշման ընդունմամբ կապահովվի ազգային արխիվի տարածքային ստորաբաժանումների նկատմամբ իրականացվող հսկողությունը, ֆինանսական միջոցների ռացիոնալ օգտագոր-ծումը, իրենց գործունեությունը շարունակող ստորաբաժանումների տեխնիկական վերազինումը, անցումն էլեկտրոնային եղանակով ծառայությունների մատուցման | | |
| | 2012 | ՀՀ զբաղվածության | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | 2013-2018 թվականների ռազմավարությամբ նախա-տեսվող զբաղվածության պետական կարգավորման նոր մոդելի իրավական հիմքերի առկայություն, որը գործնականում հնարավո-րություն կտա ապահովելու զբաղվածության պետական քաղաքականության ինստի-տուցիոնալ ու կառուց-վածքային փոփոխու-թյունների իրականացումը, աշխատաշուկայի ընթացիկ և հեռանկարային կարգա-վորման թափանցիկության ու արդյունավետության բարձրացումը, զբաղվածության պետական ծառայությունների և ծրագրերի որակի, հասցեականության, մատչելիության ու հնարավորությունների նպատակային կառավարումը, գնահատման և մոնիթորինգի համակար-գերի ներդրումը: | | |
| ՀՀ արխիվային գործի բնագավառում բարեփոխումների իրականացման, այդ թվում` արխիվային ծառայությունների մատուցման էլեկտրոնային համակարգի ներդրման հայեցակարգի մշակում | 2013<br>- ՀՀ արխիվային գործի բնագավառում բարեփոխությունների իրականացման հայեցակարգը ներառում է հետևյալ քայլերը`<br>1) «Հայաստանի ազգային | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | արխիվ» ՊՈԱԿ-ի (այսուհետ` ՀԱԱ) և նրա տարածքային ստորաբաժանումների կողմից քաղաքացիներին մատուցվող ծառայությունների ծավալի և որակի վերլուծություն, օտարերկրյա արխիվային ծառայությունների կողմից քաղաքացիներին մատուցվող ծառայությունների փորձի ուսումնասիրում. 2) ֆինանսական միջոցների նախնական գնահատում. 3) քաղաքացիներին արխիվային ծառայու-թյունների մատուցման էլեկտրոնային համա-կարգի ներդրման նպատակով տեխնիկական վերազինման ծրագրի մշակում. 4) ՀԱԱ-ի և նրա տարածքային ստորաբաժանումների կորպորատիվ ցանցի ստեղծում և դրա տրամաբանական միացում այն բոլոր պետական մարմինների ցանցերին, որոնք օգտվում են արխիվային տեղեկատվությունից. 5) սոցիալական | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | ապահովության պետական ծառայության և այլ մարմինների հարցումների միջոցով քաղաքացիների սոցիալ-իրավական բնույթի արխիվային տեղեկությունների (տեղեկանքների) էլեկտրոնային տարբերակի տրամադրման իրականացման իրավական դաշտի սահմանում.<br>6) ՀԱԱ-ում էլեկտրոնային հարցումներն ստացող, մշակող, կատարման համար համապատասխան ստորաբաժանման տրամադրող և պատրաստի պատասխանը հետադարձ հասցեով փոխանցող ստո-րաբաժանման ստեղծում և արխիվային տեղեկությունը (այդ թվում՝ միասնական տեղեկություն-տեղեկանքը) ստանալու համար դիմումների առցանց՝ ՀԱԱ-ի պաշտոնական վեբ-կայքի միջոցով ներկայացնելու, այդ թվում՝ նաև էլեկտրոնային վճարման համակարգի ներդրում. | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | 7) ՀԱԱ-ի տարածքային ստորաբաժանում-<br>ների թվի օպտիմալացում, Երևան քաղաքում<br>«մեկ պատուհանի» սկզբունքի ներդրում | | | |
| ՀՀ կենտրոնական կառավարման մարմինների կողմից բաց ընթացակարգով<br>շրջանակային համաձայնագրերով կատարվող<br>էլեկտրոնային գնումների համակարգի լիարժեք<br>գործարկման համար նախապայմանների<br>ապահովում | 2013<br>- ՀՀ էլեկտրոնային գնումների համակարգը<br>միջազգային ընկերության կողմից համակարգի<br>ուսումնասիրություն, համակարգային<br>խնդիրների վերհանում և լուծման<br>վերաբերյալ առաջարկություններ<br>ներկայացնելը,<br>- էլեկտրոնային գնումների համակարգում<br>բարեփոխումների հետ կապված ՀՀ<br>գնումների ոլորտը կարգավորող օրենս-<br>դրության մեջ փոփոխության կատարում,<br>- ARMEPS համակարգի ամբողջական<br>գործողությունն ապահովելու համար նոր<br>մոդուլների (գնումների պլանավորման,<br>պայմանագրերի գրանցման, հաշվետվության<br>և էլեկտրոնային կատալոգների | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | մոդուլներ) ձեռքբերման համար բանակցությունների վարում | | | |
| Հեռահաղորդակցության ոլորտում ծառայությունների աշխարհագրության ընդլայնում և նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ առաջարկվող ծառայությունների բազմազանության և միջազգային չափանիշներին համապատասխան բարձր որակի ապահովում, մասնավորապես, բնակչության առնվազն 45 տոկոսի կողմից համակարգիչների միջոցով համացանցի օգտագործման հնարավորության ապահովում | քննարկումների կազմակերպում ոլորտում գործող օպերատորների հետ՝ վերջիններիս կողմից համապատասխան գործողություններ իրականացնելու նպատակով՝ բնակչության մոտավորապես 45 տոկոսի կողմից համակարգչի միջոցով համացանցի օգտագործման հնարավորության ապահովման համար | | | |
| Էլեկտրոնային նոտարի համակարգի ներդրում և փորձնական գործարկում | 2013 էլեկտրոնային կառավարման համակարգչային համակարգի ծրագրային և տեխնիկական ապահովումն իրականացված լինելը | | | |
| ՀՀ գույքահարկի և հողի հարկի 2014-2016 թթ. հարկման բազաների ձևավորում | 2013 «Գույքահարկի մասին» և «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքների պահանջների համաձայն նոր եռամյա ժամանակահատ-վածի՝ 2014-2016 թթ. հարկման բազաների | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | ձևավորման համար 2013 թ. հուլիսի 1-ի դրությամբ հաշվառված տվյալների հիման վրա իրականացված՝ ՀՀ տարածքում գտնվող, հարկվող օբյեկտ համարվող շենքերի և շինությունների, հողամասերի կադաստրային արժեքների նոր գնահատությունները ՀՀ կառավարության 2003 թ. մայիսի 22-ի N 641 որոշմամբ հաստատված կարգի 2.3-րդ կետի «ա» ենթակետի պահանջների համաձայն հարկվող օբյեկտ համարվող, տվյալ տարվա հուլիսի 1-ի դրությամբ հաշվառված ու գնա-հատված շենքերի, շինությունների ամփոփ ցուցակները մինչև գնահատման (վերա-գնահատման) տարվա սեպտեմբերի 1-ը կտեղադրվեն ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի պաշտոնական | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | ինտերնետային կայքում: ՀՀ կառավարության 2007 թվականի ապրիլի 19-ի N 465 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ կետի 1-ին ենթա- կետի համաձայն հողի հարկ վճարողներին սեփականության կամ անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով պատկանող հողամասերի հաշվառման ու գնահատման տվյալների ամփոփ ցուցակները մինչև գնահատման (վերագնահատման) տարվա օգոստոսի 1-ը կտեղադրվեն կադաստրի պետական կոմիտեի պաշտոնական ինտերնետային կայքում: | | | |
| Եկամտային հարկի և կուտակային վճարի անձնավորված հաշվառման համակարգի ներդրում | 2013 - կենսաթոշակային բարեփոխումների ծրագրի շրջանակներում եկամտային հարկի և կուտակային վճարի անձնավորված հաշվառման ավտոմատ համակարգի գործարկում «Հարկատու 3» էլեկտրոնային կառավարման համակարգում, | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | ծրագրային<br>ներդրումն ապահովող ՊԵԿ-ի ընթացակար-<br>գերի սահմանում և իրագործում,<br>- եկամտային հարկի և կուտակային վճարի<br>անձնավորված հաշվառման համակարգի<br>ՊԵԿ-ի ընթացակարգերի վերաբերյալ<br>մեթոդական, ուսուցողական նյութերի<br>մշակում և ուսուցում, ձեռնարկների<br>հրապարակում | | | |
| Հարկ վճարողների սպասարկման որակի<br>բարձրացում և հարկային ու մաքսային մար-<br>մինների տեխնիկական ապահովվածության<br>մակարդակի բարելավում, որով հարկման<br>հարաբերություններում կընդլայնվեն<br>ինքնագնահատման համակարգի կիրառման<br>մոտեցումները | 2013<br>- հարկ վճարողների սպասարկման նոր<br>կենտրոնների և կետերի գործարկում,<br>- ՀՀ կառավարությանն առընթեր պետական<br>եկամուտների կոմիտեի ուսումնական<br>կենտրոնի հագեցում ժամանակակից,<br>համակարգչային սարքավորումներով,<br>- էլեկտրոնային հաշվետվության համակարգի<br>համատարած կիրառման համար պայման-<br>ների ապահովում, այդ թվում՝ նոր հարկային | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | հաշվետվական տեսակների ավտոմատացում,<br>- ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեում ՏՏ-ի ենթակա-<br>ռուցվածքի զարգացում՝ էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության, տվյալների<br>մշակման և վերլուծության անխափան<br>ընթացքը և նոր մոդուլներով «Հարկատու 3»<br>համակարգի համալրումն ապահովելու<br>նպատակով,<br>- հարկային և մաքսային մարմինների կողմից<br>հարկ վճարողներին մատուցվող<br>էլեկտրոնային<br>ծառայությունների տեսակների<br>և ծավալների ավելացում | | | |
| ՀՀ կառավարությունը, կարևորելով ՏՏ արդյունաբերության զարգացումը ոչ միայն<br>որպես առանձին ոլորտ, այլ նաև որպես տնտեսության ընդհանուր առաջընթացի,<br>արտադրողականության բարձրացման և մրցունակությունն ապահովելու հիմնական<br>գործոն, շեշտադրել է Հայաստանում ՏՏ ոլորտի արդյունավետության | 2013 թվականի ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունում<br><br>էլեկտրոնային գրագիտության բարձրացմանն ու ոլորտի զարգացմանն ուղղված պետական նպատակային ծրագրերի մշակում և իրականացում | Իրավական ակտի կիրառման արդյունքում ակնկալվում է երկրում գիտելիքահենք տնտեսության ձևավորման ուղղությամբ իրական հնարավորությունների ստեղծում: | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| շարունակական աճի ապահովումը, տնտեսության այլ բնագավառներում ոլորտի արտադրանքի և ծառայությունների կիրառումն ու երկրում տեղեկատվական հասարակության ձևավորումը: | մասնավոր հատվածի կողմից իրականացվող ծրագրերի խթանում, մասնավորապես, «Համակարգիչ բոլորի համար» ազգային ծրագրի իրականացում,<br><br>ՏՏ լուծումների և արտադրանքի նկատմամբ տեղական պահանջարկի խթանում,<br><br>հասարակության իրազեկման, հայկական ՏՏ արտադրանքի պարբերական ներկայացման ու առաջմղման, ոլորտի ապագա զարգացումների և հաջորդ սերնդի անելիքների քննարկման միջոցառումների իրականացում,<br><br>ոլորտում հաջողությունների հասած երկրների և համապատասխան միջազգային կառույցների հետ համագործակցության հաստատում և ընդլայնում,<br><br>Հայաստանի վարկանիշի ձևավորում՝ որպես ՏՏ | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | տարածաշրջանային կենտրոն, այդ թվում՝ նպաստելով Հայաստանում մի շարք միջազգային նշանակության միջոցառումների պարբերական անցկացմանը: | | | |
| Հանրային ռեգիստրների վարման (գրանցման) միասնական սպասարկման կենտրոնների ներդրման հայեցակարգ<br><br>Հանրային ռեգիստրների վարման (գրանցման) միասնական սպասարկման կենտրոնների ներդրման հայեցակարգով կսահմանվեն ֆիզիկական և իրավաբանական անձանց «Մեկ պատուհան» սկզբունքով կենտրոնացված ծառայությունների մատուցման նպատակով հանրային ռեգիստրների վարման (գրանցման) միասնական սպասարկման կենտրոններ հիմնելու համար անհրաժեշտ քայլերը: | 2013<br>Հանրային ռեգիստրների վարման (գրանցման) միասնական սպասարկման կենտրոնների ներդրման հայեցակարգ<br><br>Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանրային ռեգիստրների վարման (գրանցման) միասնական սպասարկման կենտրոնների հիմնումը լայնածավալ և համակարգային լուծումներ է պահանջում, անհրաժեշտ է ընդունել հանրային ռեգիստրների վարման (գրանցման) միասնական սպասարկման կենտրոնների ներդրման հայեցակարգ: | Հանրային ռեգիստրների վարման (գրանցման) միասնական սպասարկման կենտրոնների հայեցակարգի ընդունմամբ հնարավոր կլինի դրա հիման վրա իրականացնել հանրային ռեգիստրների վարման (գրանցման) միասնական սպասարկման կենտրոնների հիմնումը: | | |
| Նախագծի կարգավորման առարկան հարկային մարմնում հարկ վճարողների հաշվառման կանգնելու, հաշվառման տվյալները փոփոխելու և հաշվառումից հանելու հետ կապված մասնակի խնդիրների կարգավորումն է, օրենքի | 2013<br>«Կազմակերպություններին և ֆիզիկական անձանց հարկային հաշվառման վերցնելու և հարկային հավառումից հանելու մասին» ՀՀ օրենքում փոփոխություն | Նախագծի ընդունման արդյունքում լիարժեքորեն կկարգավորվեն հարկային մարմին-ներում հարկ վճարողների հաշվառման հետ կապված իրավահարաբերությունները: | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| տեքստի համապատասխանեցումն օրենսդրական տեխնիկայի կանոններին՝ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքում 2012 թ.-ին կատարված փոփոխությունների ներքո: | կատարելու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի ընդունում<br><br>Առաջարկվում է վերաշարադրել օրենքի տեքստն օրենսդրական տեխնիկային համապատասխան՝ ներառելով տերմինների սահմանումներ, կարգավորել հարկ վճարողների էլեկտրոնային հաշվառման և հարկային մարմնում հաշվառումից հանելու կարգի հետ կապված հարաբերությունները, ֆիզիկական անձանց և իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների հաշվառման հիմնախնդիրները, սահմանել օրենքի պահանջների խախտման համար պատասխանատվության միջոցները և կանոնակարգել մի շարք այլ հարցեր: | | | |
| ՀՀ կառավարության գործունեության ծրագրում մեծ տեղ է հատկացվում քաղաքացի-ներին մատուցվող ծառայությունների | Հայաստանի Հանրապետության արխիվային գործի բնագավառում | ՀՀ և օտարերկրյա քաղաքացիներին, քաղաքացիություն չունեցող անձանց արխիվային | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| որակի բարձրացմանը, որի իրականացման առաջին գրավականը քաղաքացիներին էլեկտրոնային եղանակով ծառայությունների մատուցումն է: Հայաստանի ազգային արխիվի շահառուների թիվը տարեկան կազմում է 25 հազ. քաղա-քացի, որոնց 80 տոկոսը կենսաթոշակի անցնող քաղաքացիներն են: Նրանց անհրաժեշտ արխիվային տեղեկությունների (տեղեկանքների) տրամադրման գործընթացների դյուրա-ցումը կարևոր նշանակություն ունի հասարակության մեջ վստահության ամրապնդմանն ուղղված՝ ՀՀ կառավարության որդեգրած ծրագրերի կենսագործման գործընթացում: Ուստի, արխիվային ծառայությունների մատուցման նոր համակարգի ներդրումն առավել մատչելի կդարձնի քաղաքացիների կողմից արխիվային տեղեկությունների ստացումը՝ կրճատելով տեղեկության ստացման տևողությունը: | բարեփոխումների իրականացման, այդ թվում՝ արխիվային ծառայությունների մատուցման էլեկտրոնային համակարգի ներդրման հայեցակարգի մշակում | ծառայությունները կմատուցվեն էլեկտրոնային համակարգի միջոցով, որի շնորհիվ նրանք հնարավորություն կունենան տեղեկություն ստանալու առցանց համակարգով՝ առանց որևէ շփման տեղեկություն տրամադրող մարմնի հետ, կամ տեղեկությունը պահանջում և ստանում է այն մարմինը, որին դիմել է քաղաքացին: | | |
| «Մեկ պատուհանի» սկզբունքով համալիր սոցիալական ծառայություններ տրամադրող 10 տարածքային կենտրոնների լիարժեք գործում | 2013 | 1) ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման համար անհրաժեշտ նորմատիվ իրավական ակտերի նախագծերը ՀՀ կառավարություն ներկայացնելը: Նախատեսվում է ՀՀ կառավարության քննարկմանը | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | ներկայացնել առնվազն 2 օրենքի նախագիծ, որոնցով փոփոխություններ և լրացումներ կկատարվեն «Սոցիալական աջակցու-<br>թյան մասին» և «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքներում: Դրանցով կապահովվեն<br>«Մեկ պատուհան» սկզբունքի կիրառումը և ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող բոլոր դրամական վճարների նշանակման և վճարման գործառույթների վերապահումը՝ մեկ<br>պետական մարմնի.<br>2) համալիր սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային կենտրոնների տեխնիկական վերազինում: Համալիր սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային կենտրոնները սոցիալական ծառայությունները տրամադրելու են «Մեկ պատուհան» սկզբունքով, ինչը նշանակում է միասնական ընդունարանի առկայություն և սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական միասնական շտեմարանի ձևավորում: Այդ նպատակով կենտրոն-<br>ներին անհրաժեշտ է | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | համակարգչային նոր տեխնիկա, կապի միջոցներ և այլն: Աշխատանք-ներն իրականացվելու են Համաշխարհային բանկի աջակցությամբ. 3) համալիր սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային կենտրոնների աշխատողների վերապատրաստման դասընթացների կազմակերպում: Կենտրոնների աշխատանքի բնականոն գործունեությունը նոր սկզբունքով ապահովելու նպատակով կազմակերպվելու է համալիր սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային կենտրոնների աշխատողների շուրջ 70 տոկոսի (գրեթե 100 աշխատող) ուսուցում. 4) համալիր սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային կենտրոնների գործառույթների ընդլայնում՝ ներառելով կրթական, զբաղվածության և այլ ծրագրերի գծով խորհրդատվություն, աջակցության ցուցաբերում: ՀՀ կառավարության 2012 թվականի փետրվարի 2-ի N 4 արձանագրային որոշման համաձայն 2012 թվականին | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | իրականացվել է ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված ընտանիքների 16-18 տարեկան երեխաների կրթական կարիքների գնահատման, աջակցության և մոնիթորինգի փորձնական ծրագիր՝ ՀՀ Լոռու մարզում և Երևանի Շենգավիթ վարչական շրջանում: 2013 թվականին այն իրականացվելու է նաև համալիր սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային կենտրոնների կողմից, որով ապահովվելու է դրանց գործառույթների ընդլայնումը: Ակնկալվում է նշված միջոցառումների իրականացմամբ ապահովել կենսաթոշակների, պետական նպաստների և այլ դրամական օգնությունների նշանակումն ու վճարումը՝ առանց տվյալ գործառույթն իրականացնող աշխատողի և դիմող քաղաքացու անմիջական շփման, ինչպես նաև համալիր սոցիալական ծառայությունների տրամադրում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց (ընտանիքներին): | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Հայաստանի Հանրապետությունում մշտական գործող ՋիՊիԷս (գլոբալ դիրքորոշման համակարգ) GPS ռեֆերենց կայանների ցանցի ստեղծում<br><br>ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի և<br>Նորվեգիայի Թագավորության կադաստրի և քարտեզագրության գերատեսչության կողմից<br>իրականացվող դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ձեռք բերել 12 ռեֆերենց կայան,<br>նախագծել դրանց տեղակայումը, ինչը կապահովի հանրապետության ամբողջ տարածքում<br>համապատասխան ճշտության ազդանշանների ընդունումը՝ ձևավորելով Հայաստանի դիրք-<br>որոշման համակարգը (ARMPOS), որը հետագայում հնարավոր է կապակցել նաև Եվրոպա-<br>կան դիրքորոշման համակարգին (EUPOS): Ստեղծել Երևան քաղաքում ռեֆերենց կայանների<br>աշխատանքը վերահսկող կենտրոն: Ցանցի ձևավորման աշխատանքները կավարտվեն 2013<br>թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակում, իսկ համակարգի շահագործումը նախատեսվում<br>է 2014 թվականին: | 2013 | ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ու Նորվեգիայի Թագավորության կադաստրի և քարտեզագրության գերատեսչության կողմից իրականացվող դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կունենանք 12 ռեֆերենց կայան: | | |
| Պետական բնակարանային ֆոնդի հաշվառման բազայի ստեղծում և | 2013 | Արդյունքում ստացվելու է պետական բնակարանային | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| հաշվառում,<br>սեփականության իրավունքի գրանցման ուղղությամբ միջոցառումների իրականացում<br><br>Հայաստանի Հանրապետության տարածքում պետական բնակարանային ֆոնդի նոր<br>հաշվառման և արդյունքների ամփոփման նպատակով ՀՀ կառավարությանն առընթեր<br>պետական գույքի կառավարման վարչության պետի 2012 թվականի հունվարի 30-ի N 06<br>հրամանով ստեղծվել է հանձնաժողով: Քննարկվել են հարցի կարգավորման ուղիները՝<br>մշակվել են պետական բնակարանային ֆոնդի հաշվառման կազմակերպման ժամանակա-<br>ցույց և պետական բնակարանային ֆոնդի հաշվառման բազայի կառուցվածք:<br>ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն ՀՀ<br>կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը տրամադրել է<br>տեղեկատվություն Հայաստանի Հանրապետության անունով գրանցված բնակելի նշանակության գույքի, իսկ Երևանի քաղաքապետարանը՝ Երևան քաղաքի վարչական<br>տարածքում գտնվող, համայնքային | | ֆոնդի հաշվառման երեք բազա՝<br>1) ընդհանրական բազա, որում ներառվել է բոլոր պետական մարմիններից ստացված տեղեկատվությունը.<br>2) ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից ստացված տվյալների բազա.<br>3) պետական սեփականություն հանդիսացող բնակարանային նշանակության անավարտ<br>շինարարության օբյեկտների բազա: | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| սեփականություն չհանդիսացող, փաստացի բնակության համար օգտագործվող (անկախ նպատակային նշանակությունից), ինչպես նաև կիսակառույց բնակելի շենքերի վերաբերյալ: ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունում քննարկվել է համապատասխան պետական կառավարման մարմիններից և Երևանի քաղաքապետից ստացված տեղեկատվությունը և ներառվել է պետական բնակարանային ֆոնդի հաշվառման բազայում: Քննարկվել է նաև ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունում և վարչության «Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» ՊՈԱԿ-ում առկա՝ պետական կառավարման մարմինների տնօրինության՝ պետական բնակարանային ֆոնդի վերաբերյալ տեղեկատվությունը: | | | | |
| Եկամտային հարկի և կուտակային վճարի անձնավորված հաշվառման համակարգի ներդրում<br><br>ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն, հանդիսանալով ՀՀ կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի | 2013 | Անձնավորված հաշվառման, եկամտային հարկի և պարտադիր կուտակային վճարի հավաքա-գրման համակարգի ներդրմամբ ՊԵԿ-ը կիրականացնի կենսաթոշակային բարեփոխումների շրջա- | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| «Հայաստանի Հանրապետության կենսա- թոշակային բարեփոխումների ծրագիրը և կենսաթոշակային բարեփոխումների իրականա- ցումն ապահովող միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» N 1487-Ն որոշումից բխող` ՀՀ-ում իրականացվող կենսաթոշակային բարեփոխումների կարևոր մասնակից, իրականացնելու է եկամտային հարկի, պարտադիր կուտակային վճարների և դրանց առնչվող տեղեկատվության հավաքագրման աշխատանքները, ինչպես նաև եկամտա- յին հարկ վճարող և պարտադիր կուտակային կենսաթոշակային վճարումներ կատարող անձանց անհատական հաշվառումը` դրանք ինտեգրելով «Հարկատու 3» էլեկտրոնային կառավարման համակարգ: | | նակում իրեն վերապահվող գործառույթները, մասնավորապես, եկամտային հարկ և պարտադիր կուտակային կենսաթոշակային վճարումներ կատարողների անհատական հաշվառումը, անհատա- կան հաշվետվությունների տեղեկատվական բազայի վարումը, այլ իրավասու մարմիններին տեղե- կությունների տրամադրումը, ինչպես նաև եկամտային հարկի ու պարտադիր կուտակային վճարի անձնավորված հաշվառման համակարգի ծրագրային ներդրումն ապահովող ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի ընթացակարգերի վերաբերյալ մեթոդական, ուսուցո- ղական նյութերի մշակումը և ուսուցումը, ձեռնարկների հրապարակումը | | |